Հայք
Հաստատություն

Վարդան Գրիգորյան

Կ Ո Ռ Ո Ւ Պ Ց Ի Ա

Կ Ո Ռ Ո Ւ Պ Ց Ի Ա Յ Ի
ԾԱԳՈՒՄԸ, ՏԱՐԱԾՈՒՄԸ, ԿԱՄԵՑՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՅՔ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Վարդան Գրիչենց

ԿՈՌՈՒՊՑԻԱ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ, ՏԱՐԱԾՈՒՄԸ, ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ըստ
Հայ Ազգային Գաղափարախոսության

Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2013

ՀՏԴ
ԳՄԴ
Գ

Գ *Վարդան Գրիչենց* – Կոռուպցիա. կոռուպցիայի ծագումը, տարածումը, կասեցումն ու վերացումը հայ իրականությունում (ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության) - Եր., «Գիտություն», 2013, 144 էջ:

Գրքում հայության առջև ծառացած մարտահրավերներում առանձնակի կարևորվում է կոռուպցիայի վերացումը: Ըստ հեղինակի՝ կոռուպցիան այն ախտն է, որն սպառնում է հայ ազգային կենսական շահերին, ընդհուպ՝ ազգային գոյությանը՝ մեծ վնասներ հասցնելով ոչ միայն տնտեսությանը և սոցիալական հարաբերություններին, այլև հատկապես ազգային հոգեկերտվածքին, գաղափարականությանը, բարոյական արժեհամակարգին և դրանցով՝ ազգի ու պետականության կենսունակությանը:

Հեղինակը համոզմունք է հայտնում, որ հայոց հավատքի, ազգային գաղափարախոսության և բարոյական տոհմիկ արժեհամակարգի ճշմարիտ վերականգնմամբ՝ դրանք կյանքի ապրում դարձնելուց հետո միայն կարելի է նաև օրենսդրորեն և վարչահրամայական միջոցներով հայ կյանքից իսպառ արմատախիլ անել կոռուպցիան՝ իր բոլոր դրսևորումներով:

Գիրքը նախատեսված է ոչ միայն այս խնդրով զբաղվող մասնագետների, այլև կոռուպցիայի՝ որպես սոսկալի մի չարիքի գիտակցումն ունեցող ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN
© Բաբկեն Վարդանյան, ՀԱՅՔ հաստատություն, 2013 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- *Խմբագրի կողմից* 7
- *Առաջաբանի փոխարեն* 12

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ–*Կոռուպցիա. ազգային, պետական, հասարակական չարիք* 19
- Հայ հասարակության մեջ կոռուպցիայի առաջացման ու ծավալման նախապատճառները 20
- Անարդարություն, բռնատիրություն և կոռումպացում 25
- Հասարակության հոգեբարոյական վիճակի առնչությունը կոռուպցիոն ռիսկերի բացառման հետ 31
- Հայ հասարակությունն ու պետականությունն ախտահարող վիրուսը (բիճը և բճությունը՝ կոռուպցիայի սաղմը) 35
- Կաշառելիության դեմ՝ հոգեբարոյական և գաղափարական վարակամերժություն 40
- Կոռուպցիան հաղթահարվում է հոգեբարոյական և գաղափարական դաշտում 43
- Ազգի որակական կատարելագործում՝ կոռումպազերծմամբ ..47
- Կոռումպազերծ երկիրն է հարիր հայի տոհմիկ կերպարին, նկարագրին ու հայոց պետականությանը 49
- Ինչպես կարելի է բարեփոխել հայությունը և Հայաստանը 54
- Հայոց հոգեղեն «էներգիան» 57
- Կոռուպցիայի գայթակղիչ խթանները և անձի պաշտպանվածությունը 62
- Կոռումպազերծ ու անկաշառ մրցակցություն 64

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ – *ԶԼՄ-ների կոռումպացումը՝ կրկնակի չարիք* 68
- Հոգևորի, գաղափարականի և բարոյականի դեմ մշակութային ագրեսիա՝ կոռումպացմամբ 69
- Մեր կրթությունը 71
- «Խոսքեր, որոնք փոխեցին մի ամբողջ ազգ, Ամերիկան» 73
- ՀՀ հեռուստահաղորդումների «խերը» 74
- Հայրենի հեռուստաբիզնեսի տնաքանդությունը՝ հոգեբարոյական կոռումպացմամբ 77
- Ճիչ հուսահատությա՞ն 79

- Կոռումպացված ճաշակ, պահանջ, առաջարկ և ռեյտինգ 83

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ - *Հավատավոր գաղափարական խավ* 88
- Հայության վերակազմակերպում և վերահաստատում՝ վերափոխմամբ 89
- Մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ճակատագիր համայն հայության համար՝ կոռումպազերծմամբ 93
- Ճշմարտության ճանաչումը կյանք է 95
- Հարց, պատասխան և գործ 100
- Հայ ազգային կառուցապատման ճարտարապետությունը ..102
- Հայոց հոգևոր վերածննդի ռազմավարություն 105
- Հայ Աստվածապատվեր ծրագիրը ևս ուշադրության կենտրոնում 108
- Հայության կեցվածքի, ընթացքի ու ապագայի մասին 110
- Հայ ազգային կրիտիկական զանգվածի կազմավորումը՝ հայ ազգային գերագույն խնդիր 112
- Հայ ազգամետ ու պետականամետ քրիստոնյա հեղափոխականների հոգևոր, գաղափարական և բարոյական շարժում 114

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ -*Հայի, հայության հոգեղենությունը, գաղափարականությունը, բարոյականությունը ու ըստ այնմ՝ կենցաղավարությունը պայման կոռուպցիայի ժխտման և վերացման* 116
- Խիղճ, գաղափար և կոռումպազերծ ապրում 117
- Դարձյալ խիղճ 121
- Ազգային հոգեբարոյականություն և գաղափարականություն (ազգային խիղճ և գիտակցություն) 123
- Հայ իրական կյանքի առանցքը սերն է, միջավայրը՝ սրբությունը 127
- Մարդկային արժեքների արժևորում ու արժեզրկում 129
- Օրենքի «խերը» 131
- Որ աղքատությունն է ավելի մտահոգիչ և ինչպես կարելի է այն վերացնել (ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության) 134
- Ինչպես գտնել ճիշտ ճանապարհը 138
- Վերջաբանի փոխարեն 141

ԳՈՐՔԸ ՆԱԽՈՐԴՈՒՄ Է

հայ ազգի ու հայրենիքի

պատմին եւ վերելքին

նախանշանակիր, հայրենասեր եվ

Հայք հասպարության բարեկամ

ՔԵՍՈՆ ՀԱՔԵԾՅԱՆԻ

ՀՈԵԱՏԱԿԻՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ժողովուրդներին և նրանց հայրենիքներին ուղղված արտաքին մարտահրավերները շատ հաճախ համախմբում են այդ երկրները և նրանց ժողովուրդներին՝ պարտադրելով, որ նրանք ի մի բերեն կենսական ուժերը և դիմագրավեն իրենց սպառնացող վտանգները:

Ի տարբերություն արտաքին մարտահրավերների՝ ներքին խնդիրները հաճախ հանգեցնում են ոչ թե ուժերի համախմբմանը, այլ տարրալուծմանը, քանի որ արտաքին վտանգները հիմնականում սթափեցնող են և համապատասխան հակազդեցություն են առաջ բերում, այնինչ ներքին վտանգները հաճախ աննկատելի և անգամ որպես քաղցր թույն՝ քայքայում են ժողովրդի ներքին դիմադրողականությունը՝ նրան անկարող դարձնելով դիմագրավելու ներքին ու նաև արտաքին վտանգները:

Այս պատճառով է, որ այն բերդերը, որոնք հնարավոր չի լինում գրավել դրսից, երբեմն գրավվում են ներսից:

Դժբախտաբար, բազմադարյան մեր հայ պատմությունը ևս հարուստ է նման օրինակներով, երբ արտաքին ճակատում ձեռք բերված հաջողություններն իսկ այնուհետև ի չիք են դարձել մեր երկրի ներսում գործված սխալների, բացթողումների և մանավանդ մեղանչումների պատճառով:

Այսօր մեզ սպառնացող նման մեծագույն վտանգի՝ ազգային միասնության դեմ ուղղված տարաբնույթ պառակտումների թե՛ պատճառը և թե՛ հետևանքը, թերևս, կոռուպցիան է:

Կոռուպցիան մի ախտ է, որը մեր ազգային կենսական շահերին, ընդհուպ ազգային գոյությանը սպառնում է ոչ միայն տնտեսությանը հասցված ահռելի վնասներով, այլև սոցիալական ու բարոյահոգեբանական առումներով, որովհետև ազգը պառակտվում, ջլատվում է հայի կողմից հային ու ընդհանրապես մեր հայրենիքը կողոպտելու և շորթելու մոլուցքից: Արտաքին վտանգի դեպքում համախմբվում է ժողովուրդը, մեկը մյուսին եղբայր, թև ու թիկունք դառնում, իսկ կոռուպցիան մի ախտ է, որը նվիրաբերումը փոխարինում է յուրացումով, դիմացինին ձեռք մեկնելը և օգնելը՝ դիմացինից հափշտակելով, և այս ամենը՝ ի վնաս ազգի, հայրենիքի և քրիստոնեական արժեհամակարգի վրա հիմնված մարդկային-ազգային բարոյականության:

Վարդան Գրիչենցի այս՝ «ԿՈՌՈՒՊՑԻԱ. կոռուպցիայի ծագումն ու տարածումը, կասեցումն ու վերացումը (ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)» գրքում կոռուպցիան ոչ միայն որպես տնտեսական, քաղաքական ու հասարակական, այլև որպես ազգային-հոգևոր չարիք է դիտարկվում: Այն հավաքական մի ահազանգ է՝ կազմված հեղինակի՝ տարբեր տարիների մտածումների արդյունք հոդվածներից, հրապարակումներից, որոնց մի մասը լույս է տեսել հեղինակի նախորդ գործերում, իսկ մյուսները տպագրվում են առաջին անգամ:

Քանի որ Վարդան Գրիչենցը կոռուպցիան դիտարկում է որպես մի չարիք, որը սպառնում է հայ կյանքի տարբեր բնագավառներին, ուստի նա այս հարցին անդրադարձել է ամենատարբեր խնդիրների մասին գրելիս, և շնորհիվ այս գրքի՝ այդ ամենը ներկայացվում է ի մի հավաքված՝ ցույց տալով թե՛ այս երևույթի ընդգրկած շառավիղը և թե՛ նրա դեմ պայքարի շրջանակը:

Միջազգային քաղաքական և տնտեսական հարաբերություններին այնքան քաջածանոթ հեղինակն այս գործի առաջին՝ «Կոռուպցիա. ազգային, պետական, հասարակական չարիք» բաժնում, ներկայացնելով կոռուպցիայի ծագումն ու էությունը, քաջածանոթ լինելով վերջինիս դեմ պայքարի միջազգային փորձին, միայն այդ փորձը և նրա վրա հիմնված պայքարի մեթոդներն ամբողջական և բավարար չի համարում մեր կյանքից այս չարիքն արմատախիլ անելու համար, քանի որ, ինչպես նշել է իր տարբեր հրապարակումներում, թե՛ տնտեսական և թե՛ ընդհանրապես մեր պետական-հասարակական կյանքի ձևախեղումները մեծապես պայմանավորված են հեռացմամբ և շեղումով ազգային տոհմիկ նկարագրից ու ամենակարևորը՝

մեր հավատամքից և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունից:

Վարդան Գրիչենցը հայության հոգեփոխմամբ է պայմանավորում կոռուպցիայի արմատախիլ արվելը և ոչ թե հակառակը: Այսինքն՝ ոչ թե կոռուպցիայի վերացումը կբերի հասարակության ընդհանուր միջավայրի բարոյական բարեփոխմանը, այլ հակառակը, հասարակական միջավայրի բարոյական բարեփոխումը կվերացնի նաև բարոյահոգեբանական այն միջավայրը, որը պարարտ հող է դառնում կոռուպցիայի համար: Հետևաբար, կոռուպցիան սնուցող աղբյուրները վերացնելու հետ միասին հարկավոր է վերացնել նաև բարոյահոգեբանական այն միջավայրը, որում թույլատրելի կարող է համարվել կոռուպցիային նպաստող դրվածքը:

Կոռուպցիան դիտարկելով տարբեր տեսանկյուններից՝ Վ. Գրիչենցը այն սահմանում է այսպես. «***Ի՞նչ է կաշառելիությունը, կոռումպացումը:*** Այն խախտումն է ազգի ու երկրի օրենքների և գրված ու չգրված բարոյական կանոնների, նորմերի:

Ի վերջո, կաշառելիությունը ազգի, երկրի, հասարակության ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ և ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ անբավարարությունից առաջացող ընկերային հիվանդություն է, որը տարածվում է քաղցկեղի պես և ճարակում ազգային-հասարակական ու պետական օրգանիզմի կենսունակությունն ու վարակամերժ հատկությունը: Դրանից հետո օրգանիզմի քայքայումը, անպիտանությունը և, վերջին հաշվով, մահը վարակահարուցիչների սաստկության աստիճանի ու ժամանակի հարց է»:

Հայ կյանքից կաշառելիության վերացման մասին էլ համանման ձևով ասվում է. «***Ինչի՞ց է առաջանում կաշառելիությունը.*** հոգեղենության, գաղափարականության և բարոյականության տկարացումից, նվազումից և կամ աղավաղումից, այլասերումից: Այն տարածված կարծիքը, թե կարիքը, աղքատությունն են ծնում կաշառելիություն, ըստ մեր ազգային փորձի և, բնականաբար, նաև մարդկության փորձի, ճիշտ չէ: Չէ՞ որ կաշառելիությունը խոր և ծավալուն է եղել ու է ավելի շատ իշ-

խանավոր և ունևոր խավերում, այս աշխարհի զորեղների շրջանակում»:

Պայմանավորված այս հանգամանքով՝ գրքի առաջին մասում կոռուպցիան և նրա առաջ բերած վտանգները ներկայացնելով մանրակրկիտ ձևով և տարբեր տեսանկյուններից՝ գրքի հաջորդ երեք բաժիններում կարևորվում է հոգևոր-գաղափարական և բարոյական այնպիսի միջավայրի ստեղծումը, որում կբացառվեն կոռուպցիայի ծագումն ու տարածումը:

Կոռուպցիայի տարածման համար համապատասխան միջավայրի ձևավորման կամ բացառման գործում կարևորագույն դեր վերապահելով զանգվածային լրատվամիջոցներին՝ Վարդան Գրիչենցն այս գրքի երկրորդ բաժինն այսպես է վերնագրել՝ «ԶԼՄ-ների կոռումպացումը՝ կրկնակի չարիք»: Զանգվածային տեղեկատվությամբ է մեծապես պայմանավորված հասարակական համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը, որը կոռուպցիայի դեմ պայքարի տնտեսական և օրենսդրական լծակների կողքին կոչված է նրա դեմ պայքարելու՝ հայ մարդու հոգևոր վերածննդի և Հայ Ազգային Գաղափարախոսությամբ կատարվող հոգեշրջափոխությամբ: Այս հարցին է նվիրված գրքի երրորդ՝ «Հավատավոր գաղափարական խավ» գլուխը:

Որ կոռուպցիան միայն տնտեսական շարժառիթներով պայմանավորված չէ, և այս բնույթի զանցանքներն ու հանցանքները զուտ սոցիալական պատճառներով և նյութական վիճակով չի կարելի բացատրել, Վարդան Գրիչենցը հիմնավորում է այն համոզիչ և ծանրակշիռ փաստարկով, որ կոռուպցիան տարածված է հասարակության հենց ունևոր խավի շրջանակում: Հեղինակի թե՛ այս և թե՛ մյուս գրքերը մեզ բերում են այն հետևության, որ այսօրվա տնտեսական վիճակը չէ պատճառը բոլոր այն ձախողումների, որոնք առկա են մեր ազգային-պետական կառավարման և հասարակական հարաբերություններում, որոնք առավել ցցուն են ի հայտ գալիս կյանքի ամենատարբեր ոլորտներում, կենսամակարդակի ու ազգային միասնության խնդիրներից մինչև հեռուստաթերթերի և մամուլի էջերը:

Հակառակը՝ հեռացումը մեր ազգային տոհմիկ նկարագրից և վերջինիս հետ օրգանապես առնչված Հայ Ազգային Գաղափարախոսությունից, հանգեցնում է անձնական, հասարակական հարաբերությունների մի այնպիսի որակի ու աստիճանի, որից և ածանցված է նաև մեր այսօրվա սոցիալ-տնտեսական վիճակը: Այս հարցին է նվիրված աշխատանքի չորրորդ՝ «Ազգի, հասարակության հոգեղենությունն ու գաղափարականությունը հիմք կոռուպցիայի ժխտման ու վերացման» մասը:

Վարդան Գրիչենցը գրքից գիրք կյանքի տարբեր բնագավառների օրինակներով ցույց է տալիս, որ վերադարձը մեր ազգային-հոգևոր արժեհամակարգին դառնալու է այն կայուն հիմքը, ծանրության և հաստատունության այն կենտրոնը, որի վրա են խարսխվելու սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական բոլոր հարաբերությունները՝ ի խնդիր Հայաստանի և համայն հայության պաշտպանության, հզորացման և բարգավաճման:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս գրքում ամփոփված են տարիների իմ խոհերը, մասամբ՝ տեսակետները և առավելապես համոզումներն ընդհանրապես կոռուպցիայի և մասնավորապես հա՛յ իրականության մեջ կոռուպցիայի երևույթի մասին: Սակայն համեմատելով ու համադրելով այդ իմ խոհերը, տեսակետներն ու համոզումները մեր ազգի, Հայաստան երկրի և պետության պատմական ու արդի վիճակի ամեն տեսակի հիմնախնդիրների ու ըստ դրանց հավանական ընթացքի՝ զարգացումների հեռանկարների և դրանց հավանական հետևանքների մասին խոհերիս, տեսակետներիս ու համոզումներիս հետ և զգալով դրանց՝ միմյանց հետ ունեցած մինչև իսկ փոխկապակցվածության աստիճանի առնչությունը, ինչպես հաղորդակից անոթներ, այդ հանգամանքը, այդ երևույթի բացահայտումն ինձ բերեց այն եզրակացության, որ իմ խոհերին, տեսակետներին և համոզումներին բացի ժամանակ առ ժամանակ վերստին անդրադառնալուց ու դրանց մասին խոսելուց, հարկ է այդ ուղղությամբ պարբերաբար կատարածս գրառումները կազմել, խմբագրել ու հայ հանրությանը ներկայացնել որպես առանձին մի գիրք:

Ուրեմն՝ այս գրքի լույսընծայումը հիմնականում ունի երեք պատճառ.

Առաջին. իմ մտահոգությունը մեր ազգի մեջ կաշառելիության, կոռուպցիայի վաղեմի ու հարաճունորեն սաստկացող ընթացքի և դրա կործանիչ վնասների վերաբերյալ:

Երկրորդ. իմ համոզումը, որ կաշառելիության, կոռուպցիայի չարիքի դեմ պայքարը և դրա միջոցները (ինչպես ինչ-որ չափով և տեսակով նախախորհրդային, այնպես էլ, մանավանդ, խորհրդային իշխանության տարիներին) հիմնականում հոգեզուրկ ու ըստ այդմ՝ գաղափարազուրկ, բարոյազուրկ և ավելի շատ մակերեսային լինելով, գրեթե ապարդյուն էին: Եվ դա նաև այն պատճառով, որ խորհրդային վարչահրամայականության վրա հիմնվելով՝ այդ միջոցները միաժամանակ հիմնա-

կանում զուրկ էին դրանք առաջադրողների և կիրառողների անձնական դրական օրինակից այն առումով, որ ասողն իր սեփական օրինակով չէր հաստատում իր ասածի կարևորությունն ու կիրառելիությունը: Ու այս վիճակը այս կամ այն ձևով ու չափով շարունակվեց նաև հետխորհրդային իրականությունում:

Երրորդ. իմ խիղճն ու գիտակցությունը, որ հարկ է անտարբեր չլինել, չլռել և գործել, մինչև գտնվի ելքը: Մանավանդ երբ համոզված ես, որ ելք կա՛, և այն գտնելն ու կիրառելը բացառապես կախված են հայությունից ու նաև յուրաքանչյուր հայից՝ Աստծուն ապավինելով:

Եվ քանի որ կոռուպցիան հասարակական ախտահարույց վարակ է, դրա վերացումը նախևառաջ կպահանջի դրա ախտաճանաչումը, ախտահարման պատճառների, հետևանքների ճանաչումն ու ըստ այդմ՝ դրա վերացման (բուժման) միջոցների՝ անելիքների ու չանելիքների որոշումը: Ահա այդ ընթացքով փորձեցինք կազմել, ներկայացնել, կարելի է ասել, կոռուպցիայի, կաշառելիության ***անատոմիան (ծագում և պատճառներ), ախտաճանաչումը (վիճակ և հետևանքներ) և վերացումը (բուժման հիմք և միջոցներ):***

Ծագումը.

Ապօրինի, անարդար, բռնակալ և հոգեզուրկ, գաղափարազուրկ ու բարոյազուրկ կարգերի ազդեցությամբ անազատ վիճակ՝ հոգևոր կուրություն, գաղափարական տգիտություն, քաղաքական անգրագիտություն և քաղաքացիական ստորաքարշ համակերպում:

Պատճառները.

Անօրինություն, ագահություն ու անզգամություն՝ անհավատությամբ, հետևապես և գաղափարազրկությամբ, բարոյազրկությամբ և նյութապաշտությամբ:

Վիճակը և հետևանքներն անհատի վրա.

Բյուրոկրատացում, ճղճիմացում, ստորացում, պատվա-

զրկում և մեղանչում՝ անմիջական կամ պասիվ հանցագործ մասնակցությամբ:

Վիճակը և հետևանքները հասարակության վրա.

Նույնը, ինչ անհատի վրա, գումարած հոգեբարոյական, գաղափարական և քաղաքացիական որոշ զանգվածային այլասերում, որով և տարածուն տկարացում՝ նախանձի, անվստահության, թշնամության առաջացում, արդարության, օրինականության նահանջ և ընդհանուր հետընթացի մեծացում:

Վիճակը և հետևանքներն ազգի վրա.

Նույնը, ինչ հասարակության պարագայում ու նաև ազգային արժանապատվության, ինքնավստահության, ինքնագիտակցության, միասնության և միջազգային հեղինակության, վստահելիության նվազում:

Վիճակը և հետևանքները պետության վրա.

Նույնը, ինչ անհատի, հասարակության ու ազգի վրա՝ գումարած պետության պատվի, հեղինակության, հուսալիության անկում և կարողության, զորության ու պաշտպանելիության նվազում:

Վիճակի և հետևանքների վերացման (բուժման) հիմքը և միջոցները.

Հիմքը՝ հավատքը՝ Ավետարանով և խաչով, իսկ միջոցը՝ այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված գաղափարի, մեր դեպքում՝ Հայ Ազգային Գաղափարախոսության ու ըստ այնմ՝ բարոյական արժեհամակարգի պարզաբանում, ընդունում և կյանքի ապրումի վերածում՝ համապատասխան կենցաղավարությամբ:

Հակիրճ անդրադարձ կոռումպացման բուն երևույթներին հայ իրականությունում.

Կյանքն ապացուցում է, որ մեր ազգը հիմնովին այլասերող ու կործանող կոռումպացումն սկսվում է մշակույթի, կրթության ու կենցաղավարության կոռումպացմամբ և «հաղթական» ավարտին հասնում ազգի հոգեղենության, գաղափարականության, բարոյականության համար պատասխանատու հաստատությունների, կառույցների, խավերի հավատազուրկ, գաղափարազուրկ և բարոյազուրկ կոռումպացմամբ:

Սուտը՝ չարը (փորձիչը), սատանան, հասարակության, ազգի, մարդկության այլասերման և կործանման (նպատակի իրագործման) իր սերմերը ցանում է նախ մշակույթի բնագավառում՝ գրականություն, արվեստ, երգ-երաժշտություն, պար, կերպարվեստ, կինոարվեստ, քանդակագործություն, թատրոն և այլն:

Դրան զուգահեռ սուտը մուտք է գործում կրթության և գիտության ոլորտները՝ ցանելով իր թունավոր սերմերը (որոմ) նախադպրոցական ու դպրոցական կրթությունից, ուսուցումից՝ հագնվածք, կեցվածք, խաղեր, դասագրքեր, դաստիարակներ, ուսուցիչներ, վերապատրաստման ծրագրեր, տարբեր խրախուսումներ և այլն, մինչև ուսումնական և դաստիարակչական ծրագրերի և մեթոդաբանության մշակումն ու իրագործումը:

Մոտավորապես նույնը կատարվում է բուհական և գիտական ոլորտներում:

Այդ ոլորտներում ամրապնդվելուն զուգահեռ՝ չարը գործում է աղավաղելու, այլասերելու, կենսազրկելու համար մարդկային-ազգային ավանդույթները, սովորությունները, կացութաձևերը, տոները, կենցաղավարությունը և դրանց խորհուրդը, ըմբռնումը և օրինակը:

Այս ոլորտներն այլասերելու, թուլացնելու և դրանցում դիրքեր գրավելու գործում հաջողությունների հիման վրա թունավոր սերմնացանության նենգ նախահարձակումը տարածվում է մարդկային-ազգային գաղափարական և բարոյական արժեհամակարգի վրա՝ հասնելու համար հոգևոր դաշտին, հավատքին...

Դրանով մեր ազգի հոգեղենության, գաղափարականության և բարոյականության համար արդեն իսկ մահացո՛ւ դարձած կոռումպացումն ամրապնդվում է, որը նշանակում է հետընթաց, լճացում, այլասերում, ստրկացում, փչացում և կորուստ՝ մահ:

Այս վտանգը համահայկական ու համապետական է: Այն չի ճանաչում քաղաքական կուսակցություն, սոցիալական խավ, հայրենակցական ծագում, սեռ, տարիք, պաշտոն և այլն: Վտանգված են հայկյան ցեղը՝ հայ ազգը, հայրենիք Հայաստանը, հայոց պետականությունը և մեր բոլորի հոգիները:

Չարի, ստի վերոնշյալ նպատակների իրագործման ազդու զենքերից են նաև լրատվության ու տեղեկատվության տարբեր միջոցները:

Քրոնիկ կոռումպացման մահացու վտանգի վերացման համար անհրաժեշտ են անհատական, հասարակական և պետական դիմադրություն ու պաշտպանություն:

Այդ առումով հայ իրականությունում առկա էական խնդիրներն են, թե՝

- Ո՞վ, ովքե՞ր, ե՞րբ պիտի զգան վտանգը և իրենց պատասխանատվությունն ու պարտավորությունը՝ կասեցնելու, չեզոքացնելու և վերացնելու այն:

- Ու այդ առումով ո՞վ, ո՞ւմ հետ, ե՞րբ, ինչպե՞ս կարող է հաղորդակցվել, խորհրդակցել և գործել:

- Ազգային ա՛յս վիճակում, ա՛յս գիտակցության և մեզանից յուրաքանչյուրի ներկայիս արիության և պարտաճանաչության չափի, աստիճանի պայմաններում ի՞նչ ու ինչպե՞ս կարելի է անել... որ նաև Աստվա՛ծ մեզ օգնի, քանի որ միայն Աստուծո օգնությամբ զորացած մեր հոգիների մղումով է, որ կարող ենք սթափվել, իմաստնանալ, գիտակցել, արիանալ և գործել:

* * *

Հայ իրականությունում (խոսենք մեր մասին)՝ Հայաստանում ու Սփյուռքում, կոռուպցիայի վերացման (ոչ թե նվազեցման, այլ բացառման, իսպա՛ռ վերացման) ուղիղ, ճիշտ ու ամենաարդյունավետ միջոցն այն է, որ Հայ Ազգային Գաղափարախոսության հիման վրա յուրաքանչյուր հայ, հատկապես ազգային պատասխանատու դիրք գրավող իշխանավոր ցանկանա, որոշի և հոգու պարտականություն համարի իր իսկ ու հետո իր մերձավորների, ենթակաների և շրջապատի կոռումպազերծությունը և դրանով (նաև համազգային իրականացման համար) հոգևոր, գաղափարական և բարոյական գիտակցությամբ, պատվախնդրությամբ, կյանքի արժանապատիվ ապրումով իմաստավորի իր մարդկային-ազգային երկրային կյանքը՝ հայ ազգի, հայրենիք Հայաստանի և պետության հանդեպ ազնիվ ու լիարժեք ծառայությամբ՝ արժանանալու համար երկնային, հավերժական կյանքին Աստուծո Արքայության մեջ:

Այսպիսով, կառաջանան հայի և հայության թե՛ կոռումպազերծ լինելու և թե՛ կոռումպազերծությունն ընդմիշտ պահպանելու գիտակցությունը ու ըստ այդմ վերաբերվելու, գործելու և ապրելու կամքը, կարողությունը, և մանավանդ կառաջանան Աստուծո հաճությունն ու օգնությունը հայ ազգին, երկրին, պետությանը, որը և հոգուտ, ի փառս ու ի երջանկություն յուրաքանչյուր հայի ու համայն հայության, ինչպես նաև ի բարի օրինակ և հոգուտ մարդկության ու յուրաքանչյուր ազգի:

* * *

Ելնելով որոշ նկատառումներից՝ նպատակահարմար համարեցինք ներկայացնել ***կոռուպցիա*** բառի անգլերեն բացատրությունը՝ օգտվելով հետևյալ բառարանից՝ Webster's Ninth New Collegiate Dictionary, Springfield, MA, USA, 2001:

Կաշառք, կաշառելի, կաշառունակ, կաշառելիություն բառերը այստեղ թարգմանվում են միջազգային լայն շրջանառություն ունեցող անգլերեն corrupt և corruption (կոռապտ և կոռապշն) բառերի, որոնք բխում են լատիներեն corruptus բառից:

Corrupt, ըստ բառարանի, անգլերեն նշանակում է փոխվել լավից դեպի վատը՝ բարոյականի, բարքերի, դաստիարակության, սովորույթի կամ գործունեության իմաստով:

Corrupt նաև նշանակում է՝

1. Կաշառված, կաշառելի, լինել դեգրադացված, այլասերված, լինել ստորացած անառողջ սկզբունքներով կամ բարոյական արժեքներով:

2. Անձի շեղում մարդկային իսկական կամ ճիշտ նկարագրից:

3. Վարակվել, փչանալ (վարակվածություն, փչացածություն), լինել թույլ, անպետք, ստոր, անազնիվ, արժանապատվությունը կորցրած, փչացած:

4. Պատճառ դառնալ, որ առաջանա այլասերում կամ քայքայում:

5. Մարդ՝ այլասերված, ուխտադրուժ, մոլորեցնող:

6. Կաշառելի կամ կողմնապահ անձի կողմից ոչ պատշաճ վերաբերմունք:

7. Խարդախ, կեղծ, արժանապատվությունից զուրկ վիճակ՝ բնական կամ ճիշտ դրությունից փոփոխության ենթարկված լինելու պատճառով:

Corruptionist (կըռապշընիստ) - մարդ, որն զբաղվում է կոռուպցիայով կամ պաշտպանում է կաշառակերությունը, կոռուպցիան հատկապես քաղաքականության մեջ:

Corruptive (կըռապտիվ) - մարդ, որն ստեղծում, առաջացնում է կամ միտում է առաջացնել կոռուպցիոն միջավայր և հարաբերություններ:

Եվ մեր արծարծած կոռուպցիայի իմաստի միջազգային այս բնորոշումը, հուսանք, կնպաստի ավելի ցայտուն պատկերացնելու տվյալ երևույթի վնասակարությունը, որն սպառնում է աղավաղել, խաթարել և կործանել թե՛ մեր ազգային և թե՛ մարդկային կերպարն ու կյանքը:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԿՈՌՈՒՊՑԻԱ. ԱԶԳԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԻՔ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒ ԾԱՎԱԼՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սոցիալիստական անվանված ճամբարի փլուզումից հետո այդ դարաշրջանի ավարտը դիտարկող-մեկնաբանող տարբեր երկրների բազմաթիվ ընկերաբանների, տնտեսագետների և քաղաքագետների կարծիքով՝ մասնավորապես նախկին խորհրդային հանրապետությունների շատ աշխատավորներ համարում էին, որ ժամանակին կամայաբար պլանավորող ու առանց հասարակական վերահսկողության գործող կոմիսարներին, իսկ հետո՝ ավելի հղկված «ապարատչիկներին» եկել են փոխարինելու հետխորհրդային «չպլանավորող» կապիտալիստները՝ աշխատավորության՝ մարդու իրավունքները չեզոքացնելով նրանց շահագործելու միտումներով ու ջանքերով:

Ըստ նրանց դիտարկումների՝ մինչ այս նորաթուխ կապիտալիստները ձգտում էին նվազագույն աշխատավարձով ու աշխատանքային սոցիալ-կենցաղային նվազագույն պայմաններով և համարյա առանց աշխատանքային ապահովման երաշխիքի աշխատավորներից առավելագույն արդյունք ստանալ, շատ աշխատավորների համար «ազատ» ձեռներեցության այդ ձեռնարկատերերի վարմունքն ավելի վնասակար էր համարվում իրենց մարդկային արժանապատվության, քաղաքացիական իրավունքների ու իրենց ընտանիքների ապրուստի ու ապագայի համար, քան թե սառը պատերազմի ժամանակ մուրճ ու մանգաղի խորհրդանիշով կատարվածը... Նույնը այս կամ այն չափով և ձևով վերաբերում էր նաև Արևելյան Եվրոպային:

Իսկ մեր անձնական դիտարկումների համաձայն՝ այս երևույթը հայերիս համար կարևոր է նաև նրանով, որ ինչ-որ չափով ու ձևով արտահայտվեց նաև Հայաստանում, ուր ինչքան իշխանություններն ու գործարարները ջանացին զարգացնել ազատ շուկայական տնտեսությունը (անհրաժեշտ լավ ձգտում, սակայն առանց ցանկանալու և կամ կարողանալու խուսափել

վերոնշյալ երևույթի որոշ չափով ու ձևով կրկնությունից), այնքան սկսեց խորանալ բացասական այդ երևույթի հայաստանյան տարբերակը: Արդյունքը եղան գյուղացիական, արդյունաբերական և մտավոր աշխատավորության որոշակի օտարացումը, չեզոքացումը, տարրալուծումը, արժանապատվության վիրավորումը, որով և դասակարգային անարդարության ու անվստահության զգացումի առաջացումը, հասարակության անառողջ բևեռացումը, երկրի արտադրական ու մասամբ նաև արտադրողական տեմպերի դանդաղումը և, վերջին հաշվով, ազգի, երկրի ու պետականության զարգացման արգելքների ավելացումն ու մեծացումը:

Այս իրադրության վնասակար ընթացքը (որը մեր օրերում ևս որոշ չափով ու ձևով շարունակվում է) կասեցնելու և հայ ազգի ու Հայաստանի վերելքին էապես օգնելու համար, ամեն ինչից բացի, ազգի մեջ ու հայրենիքում պետություն - ազգ, իշխանություն - ժողովուրդ և դասակարգերի, խավերի միջև հարաբերությունները պետք է իրենց համապատասխան ընդգրկումով՝ անկեղծությամբ, ազնվությամբ, արդարությամբ, մարդասիրությամբ և ոչ վերջին հերթին՝ հարգանքով ու հարազատությամբ, լինեն մարդկության մեջ լավագույններից, եթե ոչ լավագույնը...

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ այդ հարաբերությունները կենսականորեն անհրաժեշտ մակարդակի հասցնելուն ոչ մի արտաքին ուժ չի օգնի, ընդհակառակը: Ոչ էլ որևէ համաշխարհային բանկ կամ մեծահարուստ բարերար կարող է այդ խնդիրը կատարել: Դրա համար կա միայն մի իրական հնարավորություն. հայությունն ինքը պետք է փոխվի՝ սկսած աշխարհիկ ու հոգևոր ղեկավարությունից և գործարար ու մտավորական խավերից (հուսանք, որ բառիս բուն իմաստով մտավորականությունը դեռ մնացել է, ու եթե այդպես է, ապա հատուկ պատասխանատվություն է կրում):

Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ մեր տարբեր խավերում ընդհանրացած մտայնությունը, թե երկրի վերոհիշյալ ու այլ անառողջ վիճակներից դուրս գալու հիմնական միջոցը

Հայաստանի տնտեսական զարգացումն ու սոցիալ-տնտեսական և հարակից բնագավառների վերելքն է, թեև շատ ճի՛շտ է, ***սակայն այդ ճիշտ հասկացողությունը ոչ մի օգուտ չի բերի, եթե չտեսնենք այդ իրավիճակների բարեփոխման օրգանական կապակցվածությունը և կախումն ազգի գաղափարականությունից, բարոյականությունից, ըստ այնմ՝ նկարագրից, ազգային ինքնագիտակցությունից, քաղաքականությունից, մշակույթից, քաղաքացիական պարտաճանաչությունից, կարգապահությունից, կենցաղավարությունից, ու այս բոլորը՝ ՀԱՎԱՏԱՄՔԻՑ:***

Այսինքն՝ թե ինչի՛ն և ինչքանո՛վ են հավատում ազգը, նրա ավագանին և պետությունը, և ինչպե՛ս ու ինչքանո՛վ է այդ հավատամքը դառնում ապրում անձնական, հասարակական, ազգային և պետական կյանքում...

Եվ մինչ տվյալ վիճակի բարելավման աշխատանքային ծրագրերի ստեղծմանն անդրադառնալը, դիտարկենք այդ իրավիճակի առաջացման որոշ հանգամանքներ:

Հայությունն իր բազմադարյան գոյության ընթացքում երբեք այնքան գրագետ չի եղել, որքան այժմ, բայց նաև երբեք այնքան անգրագետ չի եղել ինքնաճանաչման իմաստով: Մասնավորապես ճանաչելու (էլ չասած՝ նաև ընդունելու և կիրառելու պարտաճանաչության, պատրաստակամության մասին) իր հայրերի հավատամքը, դավանած արժեքները, աշխարհայացքը և վերաբերմունքն ազգային կյանքի, հայրենիքի և ընդհանրապես հայկականության նկատմամբ:

Հայությունը երբեք այնքան անհավատ չի եղել, ինչպես մեր վերջին սերունդների ընթացքում, նաև երբեք այնքան անհաղորդ չի եղել իր քրիստոնեական հավատքից բխող հոգևոր իմաստությանը, գիտությանը և իր հոգևոր արժեքների ու հոգևոր կյանքի իմաստին: Պատմական ոչ շատ վաղ անցյալում՝ մինչև խորհրդայնացումը, հայությունը մեծ մասամբ ու ընդհանուր առմամբ հաստատակամորեն հավատացել է իր Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքի հույսով գերերաշխավորված հավիտենական կյանքին Աստուծո Արքայությունում: Հայն ընդհա-

նուր առմամբ իրեն ընտրված, կոչված և վստահված է համարել ապրելու համար Աստվածապատվեր ու Աստվածահաճո կյանքով՝ որպես իր երկրային գոյության գլխավոր, հիմնական ու էական իմաստ:

Դրա համար նա պատրաստակամորեն վճարել է պահանջված երկրային գինը, սակայն **երբեք սակարկության չի դրել երկնայինը՝ Հոգին**: Նա եղել է առավել հավատացյալ, առաքինի, բարոյական, գաղափարական, գթասիրտ, ազնիվ ու իր խոսքի տերը, քան մենք կարող ենք այսօր պատկերացնել:

Նա այդ սովորել է իր հոգևորականներից, ուսուցիչներից, մտավորականներից, ազգի առաջնորդներից ու առաջին հերթին՝ իր ծնողներից, պապերից ու տատերից: Սովորել է նրանց պատգամներից ու հատկապես գործերից, նրանց ապրած կյանքի օրինակից:

Հայը երբեք այնքան հավատազուրկ ու գաղափարազուրկ չի եղել, ինչպիսին այժմ է: Թեև հայության մի մասը (հատկապես ուսյալ) իր քրիստոնեական հավատքից և դրանից բխող մարդկային-ազգային գաղափարից ու բարոյական արժեհամակարգից արագորեն սկսեց շեղվել, հեռանալ դեռ 19-րդ դարավերջից, սակայն գոնե օտարոտի ու արհեստածին հավատալիքներ, գաղափարներ, բարոյական նորմեր որդեգրեց և մինչև դրանց վերջնական սնանկացումն ու արժեզրկումն այս կամ այն կերպ դրանցով ապրեց:

Նման անհավատ, նյութապաշտ գաղափարազրկություն, որպիսին այժմ է հայության մեջ և Հայաստանում, դժվար է գտնել մեր ազգի բազմադարյան գոյության պատմության մեջ:

Անհավատության կամ հավատը ձևականորեն ընկալելու և դավանելու պատճառով հարաճունորեն տարածվող ներկայիս գռեհիկ նյութապաշտությունը և քաղքենիությունը, ըստ երևույթին, նույնիսկ օտարոտի կամ արհեստածին թերարժեք գաղափար իսկ չի կարելի անվանել: Դա ոչ թե գաղափար, այլ տարբեր կեղծ ազգային երանգներով համամարդկային մոլություն է: Ավելին՝ ախտ է:

Թվում է, թե ներկայիս նյութապաշտությունն ու քաղքենիությունը որոշ խավերի, հասարակությունների և ընդհուպ մարդկության գոնե մի մասին հարստացնում է նյութապես, սոցիալապես, ներառյալ՝ ուսումով, մշակույթով և տարբեր ազատություններով, սակայն իրականում կոռումպացնելով՝ վերջին հաշվով աղքատացնում, սնանկացնում է մանավանդ հոգեպես, գաղափարապես և բարոյապես: Թվում է, թե այն կառուցողական է, շինում է, բայց իրականության մեջ և վերջին հաշվով կործանում է, ոչնչացնում է, ինչը, սակայն, չի կարող երկար շարունակվել...

Որպեսզի հայությունն ու Հայաստանը կոռումպազերծ պայմաններով, հարաբերություններով և կյանքով իրապես առաջադիմեն ու ամեն ինչում վերելք ապրեն, որպեսզի պաշտպանունակ ու ապահով լինեն, զարգանան, աճեն, բարգավաճեն ու ապրեն իմաստալից, արժանավայել և հայրենի՛ կյանքով, պետք է վերափոխվեն: Պետք է վերակերտվեն ու ապրեն իրենց տոհմիկ կերպարով, հավատամքով, գաղափարով և դրանցից բխող հոգեբարոյական արժեքներով՝ միշտ, ամենուր, ամեն ինչում, որը կլինի նաև հօգուտ մարդկության և կլինի Աստուծո անսպառ օգնությամբ:

ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԲՌՆԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՄՊԱՑՈՒՄ

Երկրում անարդարությունը, որը հիմնականում հոգեղենության պակասի ու հավատազրկության հետևանք է, ծնում է բռնություն, իսկ բռնությունը՝ բռնատիրություն, հետևապես իշխանության չարաշահում, որն ինքնըստինքյան արմատական կոռումպացում լինելով՝ կոռումպացնում է հասարակության գրեթե բոլոր բնագավառները, հարաբերությունները:

Թագավորները, շահերը, սուլթանները, ցարերը, գլխավոր քարտուղարները, ինչպես նաև մասամբ կապիտալիստական բնույթի բռնատիրությունները նաև իրենց կոռումպացվածությամբ են գործում ի նպաստ չարի, այսինքն՝ մարդկային համերաշխության, ներդաշնակության, երջանկության և վերելքի թշնամու: Այս դեպքում չարն իր ստով, խարդախությամբ, խարդավանքով, դեմագոգիայով ու ապակողմնորոշումով, օգտվելով նաև տարբեր իշխանությունների անարդարությունից, անօրինությունից, կամայականությունից, որոնցով և կոռումպացված որոշումներից ու հարաբերություններից, ավելի էր դյուրացնում իր նպատակի իրագործումը, այն է՝ անձի, հասարակության, ազգի և մարդկության դեգրադացումը՝ այլասերումն ու ոչնչացումը:

Բացի դրանից միապետական, ամբողջատիրական և կապիտալիստական բռնատիրությունը, իշխանության չարաշահումը և հասարակության կոռումպացումը (որը հետևանք էր նաև Աստուծո հավատքի չարաշահմամբ հոգևոր իշխանությունների կոռումպացման), չարը, նենգաբար օգտագործելով այդ կոռումպացվածության երևույթները, պայքարի հանեց ճնշվածներին, անիրավվածներին՝ չարաշահումների թե՛ իրական և թե՛ կարծեցյալ զոհերին: Նրանց այդ արդար շարժումներն ի չարը շեղելու և օգտագործելու նպատակով քաջալերեց, պաշտպանեց ու առաջնորդեց այդ շարժումները հրահրող (ղեկավար դիրքի ու իշխանության ձգտող) իր գործակալներին, որոնք այդ շարժում-

ների նպատակի իսկակա՛ն թշնամիներն էին: Ու այդպես շարունակ…

Միապետական, ամբողջատիրական և կապիտալիստական բռնատիրությունները չարի բեղմնավորմամբ ծնեցին տարբեր երանգների սոցիալիստական, կոմունիստական կոչվող գաղափարներ և ըստ այնմ բռնակազմեցին համապատասխան իշխանություններ, ռեժիմներ: Իսկ այս անգամ այդ ռեժիմների բռնատիրական գործողությունների արդյունքում առաջացած ազատության շարժումներն ընկան չարի՝ կոռումպացված կապիտալիզմի կոռումպացված նպատակների իրագործման համար ստեղծված փորձությունների թակարդը:

Ո՞րն է մարդկության ելքը: Բայց մենք խոսենք մեր բազմաչարչար, բազմաթիվ անգամներ խաբված, ապակողմնորոշված ու էապես տուժած, կենսականորեն հետ շպրտված հայ ազգի մասին:

Պատմական զարգացումների արդյունքում մեր երկիրը դրվեց կապիտալիստական ուղղության վրա, և այստեղ է, որ հարկ է շատ զգույշ լինել, որպեսզի կապիտալիստական հասարակության ստվերոտ կողմերը չգերիշխեն մեր հասարակության զարգացման վրա՝ խորհրդային անաստված կոռումպացումը փոխարինելով նյութապաշտական կոռումպացմամբ ազատ շուկայական հարաբերությունների անվան տակ:

Ինչը կարող է մեր ազգը, երկիրն ու պետությունը զերծ պահել «նոր» տեսակի կոռուպցիայի վարակի մետաստազներից, եթե ոչ Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչումը, ընդունումը, դրանով կողմնորոշումը և կյանքի բոլոր բնագավառներում ու հանգրվաններում դրանով ապրումը: Սակայն, դարձյալ ուշադիր լինենք, խոսքը վերաբերում է ոչ թե որևէ գաղափարախոսության, այլ իսկական հայ գաղափարախոսությանը, իսկ դա Հայ Ազգային Գաղափարախոսությունն է, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա, որը մենք ճանաչում ենք Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով:

* * *

Սարսափի չափաբաժնի (դոզայի) նշանակությունը

Մարդու, հասարակության ու ազգի մեջ գոյացած սարսափի չափաբաժնից (դոզայից) շատ բանով կախված է անձի, հասարակության և կամ ազգի վերաբերմունքը, տվյալ պահի ու ապագայի վերաբերյալ որոշումների ընդունումը:

Ռուսաստանում և խորհրդային այլ հանրապետություններում, ինչպես նաև Հայաստանում, մարդկանց ու հայ հասարակության մեջ լենինյան-ստալինյան սարսափի դոզան, պատմականորեն որևէ այլ ռեժիմից ստացած դոզայի համեմատ, շատ բարձր էր: Այնքա՛ն բարձր, որ այդ դոզայի աղբյուրի վերացումից հետո էլ այն երկար ժամանակ տևեց, գործեց և դեռ գործում է:

Ինչպիսի՞ն էին այդ սարսափի դրսևորումները. գուցե որոշ չափով՝ դրական, սակայն մեծ մասամբ ու նաև հեռանկարային իմաստով՝ շատ բացասական: Դրականը նման էր կալանավայրերում (աշխատանքային գաղութներում) եղած կարգապահության ու ըստ այնմ՝ նաև աշխատուժի էժան, ճկուն ու զանգվածային նպատակաուղղվածությամբ օգտագործելու հնարավորության: Բացասականը մարդկանց, հասարակության ու ազգի հոգեբարոյական և գաղափարական խեղումն ու այլասերումն էր, որը բերեց նրան, որ երկար տասնամյակներ խրախուսվում ու առաջ էին մղվում մարդկային բնության բացասականը, վատը, և կաշկանդվում ու անկում էին ապրում դրականը, լավը, վեհը:

Խոսում ենք մեր հասարակության, հատկապես ***մեր*** աշխարհի հզորների կոռումպացվածության, դրա վնասների, դրա վերացման անհրաժեշտության և հնարավոր միջոցների մասին. դա լավ է, սակայն եթե չեն նշվում ու հաշվի չեն առնվում մեր հասարակության կոռումպացվածության խորության չափը, ներգործության աստիճանը և դրա աղբյուրն ու առաջացման պատճառները, ապա դժվար, նույնիսկ անհնարին կլինի հասկանալ այդ առումով ներկա վիճակը, զարգացումը և ընթացքը, առավել ևս դժվար կլինի դրա առողջացումը, վերականգնումը՝ հայ իրականության ***իսպա՛ռ կոռումպագերծումը:***

Կոռումպացումն առավելապես առաջանում ու հատկապես արագ տարածվում և խորանում է այնտեղ, որտեղ կա բռնատիրություն, ու այն արդեն իսկ վախ ու սարսափ է տարածել: Այդ երկուսն էլ՝ թե՛ բռնատիրությունը և թե՛ դրա տարածած վախն ու սարսափը, ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության, հետևանք են Աստուծո հավատքի պակասի, Աստծուց չվախենալու, խղճի խայթ չզգալու և ըստ այնմ մարդկային-ազգային ցածր ինքնագիտակցության: Իր հերթին այդ երկուսի առկայության հետադարձ հետևանքը լինում է հավատքի առավե՛լ տկարացումը, խախտումը, մինչև իսկ կորուստը, որը դուռ է բացում կոռումպացվածության հետագա առավել տարածման և խորացման:

Ուրեմն՝ մեկ անգամ ևս հարկ է զգալ, հասկանալ, որ կոռուպցիայի, կոռումպացվածության վերացումն սկսվում է հավատքի, որով և՝ խղճի ու մարդկային - ազգային ինքնագիտակցության զորացմամբ: Զորացում, որը գաղափարի վերածված՝ կհամակի անձի, հասարակության, ազգի (ու հատուկ չափով առանձին խավերի) միտքն ու սիրտը և համապատասխան բարոյական նորմերով կդառնա կյանքի ապրում, հասարակական հարաբերություններ, կենցաղ, կենցաղավարություն:

* * *

Բռնատիրական ռեժիմով երկրներում անձի մասնագիտական և կազմակերպական ղեկավարման հատկությունների առկայությունը շատ կարևոր է, բայց բոլորովին բավարար չէ: Ռեժիմը գլխավորողների համար էական է վստահ լինելը, որ տվյալ տաղանդավոր, կարող մասնագետն ու կազմակերպական տաղանդ և ղեկավարման ջիղ ու փորձ ունեցողը ***գիտե ռեժիմի խաղի կանոնները և վստահություն է ներշնչում, որ աշխատելու (վարվելու, ընթանալու) է այդ խաղի կանոնների համաձայն՝ միշտ, ամենուր, բոլոր պայմաններում:***

Օրինակ՝ Անաստաս Միկոյանի երկարատև (մշտական) պաշտոնավարումը այդ պայմանի անխափան բավարարումն էր:

Բայց քանի որ դա, ինչպես նշվեց, բռնատիրական ռեժիմների օրինաչափ երևույթներից է և պետք չէ ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետությանը, ապա այդ երևույթի որևէ կերպ դրսևորումը պետք է ահազանգ առաջացնի ու անհապաղ դուրս մղվի հայոց կյանքից, հայոց հայրենիք Հայաստանից և պետությունից: Ինչպե՞ս.

- վերացնելով թայֆայականությունը՝ որպես կոռուպցիայի օրգանական մասնիկ և սնուցող միջավայր,

- վերացնելով այն հասկացողությունը, թե իշխանությունը որևէ մեկին սեփականաշնորհված արժեք, միջոց կամ պայման է,

- ամրապնդելով այն համոզումը և դրվածքը, թե իշխանությունը ծառայություն է ազգին, երկրին և պետությանը՝ պատասխանատվությամբ ժողովրդի, սերունդների ու Աստծու առաջ:

Բայց դրա համար պայման է հավատալ Աստծուն: Եվ հավատալ ոչ միա՛յն մոմ վառելով և ծեսերի ներկա լինելով, այլ որպես հայ քրիստոնյա՝ հավատալով և սիրելով Աստծուն ամբողջ հոգով, սրտով, էությամբ, որով և մերձավորին՝ Աստուծո արարած յուրաքանչյուր մարդու, և հատկապես հայի, ու այդ ամենը՝ սեփական անմահ հոգու հավերժական հատուցման հավատքով:

* * *

Առանց Աստուծո հավատքի թե՛ ազգայնականը և թե՛ միջազգայնականը, ի վերջո, ընդամենը անասուն են՝ վտանգավոր, ու ըստ այնմ է լինում նրանց գոյության և գործունեության արդյունքը: Գիտնականները և քաղաքագետները, քաղաքական–պետական գործիչները շա՛տ են սխալվում, ոչինչ չգիտեն և ոչինչ չեն ասում, երբ վիճում են, թե որ հասարակարգն է ճիշտ և մարդուն օգտակար՝ ընկերվարակա՞նը, թե՞ դրամատիրականը (շուկայականը) կամ մեկ ուրի՞շը: Ոչ մեկն էլ մի բան չեն, այլանդակ են, վնասակար ու կորստաբեր, երբ ու եթե Աստված չեն ճանաչում և չեն ընդունում: Ամեն մի հասարակարգ իր մեջ դրական ու օգտակար բան ունի, երբ ու եթե ճանաչում է Աստծուն, ընդունում ու կատարում է Նրա խոսքը, պատգամները, ու Աստված չի զլանում Իր ներկայությունը և տիրությունը նրա մեջ:

Դժվա՞ր է սրան հավատալը: Մի քիչ՝ այո՛: Դժվա՞ր է այն կատարելը, ըստ այնմ՝ ապրելը: Շա՛տ: Ինչո՞ւ:

- Որովհետև, երբ մարդը, ազգը, մարդկությունը հոգեբարոյապես ճարպակալած ամբարտավանանում է, ապա զրկվում է. նրանցից դուրս է գալիս Աստուծո Հոգին, և ստեղծվում է մի միջավայր, որն անհարիր է դեպի ճշմարտություն ընթացող մարդուն, ազգին և մարդկությանը:

- Իսկ ի՞նչ ու ինչպե՞ս անել, որ դա չլինի. մարդը, ազգը, մարդկությունը ամբարտավան չլինեն և չդատապարտվեն ու չզրկվեն կենսավիճակից:

- Սա արդեն դժվար չէ, եթե ճանաչվի, գիտակցվի անխուսափելի անկման և կորստի պատճառը՝ անհավատությունը, և մարդը, ազգը, մարդկությունը խոնարհվեն Աստծուն և հոգեպես սնվեն Նրա սրբություններից՝ ճշմարտությունից՝ Հիսուս Քրիստոսի Աստվածության հավատքից, Նրա Ավետարանի իմաստությունից, գիտությունից, շնորհից և պաշտպանվեն Նրա խաչի զորությամբ:

- Ինչի՞ց սկսենք:

- Մանկանալով. մաքրելով մեր սրտերն աշխարհիկ թափոններից («բալաստից»)՝ կեղծ իմաստությունից, կեղծ գիտությունից, կեղծ զորությունից և հարստությունից առաջացած ամբարտավանությունից, մեծամտությունից, փառամոլությունից, ագահությունից և մարմինը հոգուն հակադրելուց, որով և՝ հոգին մարմնին ծառայեցնելուց:

Մաքուր, մանկական, միամիտ սրտով և մտքով կարդա՛ Ավետարանը, պաշտի՛ր խաչը ու ամեն ինչ կհասկանաս, ճիշտ կապրես և ճշմարտությանը կհաղորդվես և կապրես: Կապրես այժմ և հավիտյանս լիարժեք կյանքով:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՌՄԱՆ ՀԵՏ

Երկարատև ազատազրկությամբ՝ հոգեպես, գաղափարապես, բարոյապես ընդարմացած, պետական մտածելակերպից զրկված և մեծ մասամբ հայրենազրկությամբ անտարբեր վիճակում պետականության ստեղծումը շատ դժվար լինելով, ավելի դժվար ու համարյա անկարելի են դառնում խիստ մրցակցային, էլ չասած՝ թշնամական միջավայրում պետության կառուցումն ու զարգացումը: Այն, լինելով նաև շատ բարդ ու ազգի համար պատմականորեն ճակատագրական նշանակությամբ պատասխանատու խնդիր, առանց նյութական և մանավանդ մարդկային համապատասխան որակի ու քանակի ապահովման անհնար է կյանքի կոչել ու պահպանել, այն էլ որպես պաշտպանունակ, կենսունակ և շրջապատի նկատմամբ մրցունակ ազգապետություն: Եվ սա վերաբերում է յուրաքանչյուր ազգի, ինչպես նաև հայությանը: Ու այդ առումով հայ ազգի առաջ ծառացած խնդրի կատարման պահանջը, թեև անկախության հռչակումից անցել է ավելի քան 20 տարի, մեր ազգի, երկրի ու պետության առաջ նյութական և մանավանդ ազգային-մարդկային համապատասխան որակ ապահովելու այդ պահանջը դեռևս առկա է: Սակայն եթե մեր ազգի ոչ լրիվ, գոնե մի ստվար մասը գիտակցում է այս պահանջը ու այն ապահովելու համար այս կամ այն չափով պատրաստակամություն ցուցաբերում, ապա ավելի կենսական ու ամենաէական պահանջը (քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված ազգային գաղափարականությամբ, ինքնագիտակցությամբ, բարոյական արժեհամակարգով և պետական-քաղաքացիական պարտաճանաչությամբ ազնիվ նկարագրով) քաղաքականապես գրագետ ժողովրդի առկայությունն է՝ համապատասխան աշխարհիկ և հոգևոր ղեկավարությամբ ու մտավորականությամբ, այդ պահանջը ոչ թե բավարարվում է, այլ նույնիսկ չի էլ գիտակցվում և գոյանում:

Իսկ պատշաճ աստիճանի գիտակցվելու և գոյանալու համար պակասում են համահայկական և պետական ոչ միայն գործնական ջանքերը, այլև դրա կենսական անհրաժեշտության գիտակցությունը: Մինչդեռ, դարձյալ կրկնենք, տվյալ պայմաններում, տվյալ միջավայրում պաշտպանունակ, կենսունակ, զարգացած ու ինքնաբավ հայոց պետականության կերտումն ու պահպանումը նախևառաջ այս պահանջի բավարարմամբ էին պայմանավորված, ու այդ պայմանն ուժի մեջ է նաև այսօր և լինելու է ընդմիշտ, որովհետև պատմությունը և ընդհանրապես կյանքը ցույց են տալիս, որ ժողովրդի և հատկապես ղեկավարության ու մտավորականության հոգեբարոյական և գաղափարական որակը ռազմավարական նշանակության հարց է, և կազմակերպված ազգերն իրենց պետականության գոյացման, կայունության ու կենսունակության համար ամեն ինչ անում են, որպեսզի ապահովեն այդ հարցի լուծումը: Ու ինչ աստիճանի որ ապահովում են, այն աստիճանի էլ լինում է իրենց ազգապետությունը: Իսկ երբ այդ աստիճանը կրիտիկականից ցածր է լինում, ապա ստացվում է, որ ամենահզոր երկրների հզորներն անգամ իմպիչմենտի են ենթարկվում կոռուպցիայի և կամ կոռումպացված վերաբերմունքի համար: Հետևապես այդպիսի վերաբերմունքի հիմքում, Հայ Ազգային Գաղափարախոսության ըմբռնումով, հիմնականում և վերջին հաշվով, նյութապաշտ անբարոյականությունն է, որն առաջանում է Աստծուց հեռացմամբ՝ անաստվածությունից...

Տարիներ առաջ շատ ամերիկացիներ հաճախ հարցադրում էին, թե Ամերիկան չի՞ անբարոյանում, երկրի հատկապես ղեկավարությունը և տիրող դասակարգը կոռումպացված չե՞ն: Նրանք հավատում էին, որ այս հարցի դրական պատասխանի դեպքում Ամերիկան ուշ թե շուտ Աստծո՛ւ կողմից է իմպիչմենտի ենթարկվելու…

Ի՞նչ վիճակում են կոռուպցիայի առումով Հայաստանը, հայ ազգը: Հայոց հոգևոր ու աշխարհիկ կառույցները, հաստատությունները և դրանց պատասխանատուները, մտավորականությունը և ընդհանրապես հասարակությունը զե՞րծ են կո-

ռուպցիայից կամ այլ կերպ ասած՝ կոռումպացվածությամբ հիվանդ չե՞ն: Եթե հիվանդ են, ապա ի՞նչ աստիճանի են կոռուպցիայի վիրուսով ախտահարված, հիվանդացած:

Սա ազգային անվտանգության և գոյության համապարփակ հարցին առնչվող գերխնդիր է: Որովհետև եթե պետությունը ոչ միայն մարդկային, այլև առավել ևս Աստվածային չափանիշով այլասերված, անբարոյականացած, կոռումպացված է, ապա նրա ապագան էլ համապատասխանելու է դրան:

Հայ ազգը և Հայաստանը պատմության աղբանոցում են գտնվելու, թե լուսավոր բարձունքի գագաթին, կախված է հայության ՀԱՎԱՏՔԻՑ ու այդ հավատքով ապրելուց, որը նրան զերծ կպահի ամենայն այլասերումից՝ կոռումպացվելուց:

Ուրեմն՝ ***հայության հավատավորումը՝ հավատքով զինվելը և հավատքով ապրելը, Աստծու պատվիրանները, կամքն ու ծրագիրը կատարելը ազգն ու երկիրն ազատում են կոռումպացման ախտից***, պահում են միշտ անվտանգ, առողջ և կենսունակ՝ ապահովելով պատիվ, վստահություն ու երջանկություն ընդմիշտ:

Հայության աստվածաշնորհ հավատքը բխում է Ավետարանի շնորհից՝ իմաստությունից, գիտությունից և խաչի զորությունից…

Վարչապետ Վազգեն Սարգսյանը 1999 թվականի սեպտեմբերի վերջին Միացյալ Նահանգների Կոնգրեսում իր հանդիպումների ժամանակ և հետո նաև Վաշինգտոնում Հայաստանի դեսպանատանն իր այցելության կապակցությամբ հայ համայնքի տարբեր ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ընդգծում էր, որ իր համար անսպասելի էր Հայաստանում կաշառակերության ու համատարած կոռուպցիայի մասին Վաշինգտոնում ամեն տեղ այդքան շատ լսելը: Ինքը զարմացած էր, նաև՝ վշտացած: Նա ասում էր, որ Հայաստան վերադառնալուց հետո իր առաջին գործը լինելու է կոռուպցիան վերացնելը:

Մեր ազգի, երկրի և պետականության դեմ կոռուպցիայի մահաբեր վտանգն այդ ժամանակ նա գուցե ավելի որոշակիորեն զգաց, հասկացավ, ու հավանաբար ազգային և մարդկային պատվախնդրությունը նրա մեջ, բացի պետական գործչի պատասխանատվությունից, նաև հոգևոր պատասխանատվություն առաջացրեց: Բայց, ավա՛ղ, չհասցրեց իր մտադրություններն իրագործել, քանզի օրեր հետո նրա կյանքի թելը ողբերգականորեն կտրվեց:

Ի՞նչ ենք անելու մենք՝ ողջերս: Ովքե՞ր, ե՞րբ, ինչպե՞ս… Նայում եմ շուրջս, փնտրում եմ: Ես արդեն գործում եմ. մաքրում եմ ինձ՝ խիղճս, գիտակցությունս, գաղափարս՝ ազգիս նկատմամբ և կյանքի նկատմամբ… Աստուծով…

Ուրեմն՝ մենք անպայման պետք է փոխենք մեզ, մանավանդ, երբ գայլերը վաղուց արդեն վխտում են հոտի՝ մեր «փոքր ածուի» շուրջը և արդեն իսկ հոտի մեջ են ու հոշոտում են տկարացած հոտը, և փարախի ոչ միայն դռներն են բաց, այլև «կոտրեր գերաններ, խախտեր են սներ» (Կոմիտաս, «Անտունի»): Այս վիճակում հովիվներն իրավունք չունեն քուն մտնելու, իրավունք չունեն անտարբեր լինելու, ինչպես Ավետարանում է ասված, եթե «գող չեն», այլ հարազատ հովիվներ են՝ իրենց Երկնային Հովվապետի պես…

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԽՏԱՀԱՐՈՂ ՎԻՐՈՒՍԸ
(բիճը և բճությունը՝ կոռուպցիայի սաղմը)

Բիճը, ընդհանրապես կենսաբանական երևույթ լինելով, միաժամանակ նաև հասարակական երևույթ և հասկացություն է: Այդ իմաստով կյանքն ապացուցում է, որ կա նաև գաղափարական բիճ և քաղաքական - հասարակական գործունեությամբ բիճ: Ամենավատը և վնասակարը հոգեբարոյական արժեքներով դիմակավորված բիճն ու բճությունն են: Այդպիսի բճերի համար ընկերություն, ազգ, երկիր, պետություն, գաղափար ու առավել ևս սրբություն չկա… ***Նրանց «սրբությունը» և սկզբունքը եսն է, որն էապես կոռումպացված է:*** Դրա համար բիճը օրինավոր է համարում քաղաքական, սոցիալական, տնտեսական ու այլ տեսակի մանիպուլյացիաները, կեղծիքները, խարդախումները, մինչև իսկ դավաճանությունն ու այլազան ճնշումները՝ սնուցելու, հաստատելու համար իր կոռումպացված եսը:

Մարդկությունն իր պատմության ընթացքում միշտ էլ բճեր «արտադրել» է: Եղել են ժամանակներ, երբ բճությունը գերակայել է այս կամ այն հասարակության հարաբերություններում: Այդ պարագաներում կյանքը տուժել է՝ ***արծանագրելով մտայնության համատարած կոռումպացում,*** որով և՝ արդարության ու իրավունքի նահանջ, խեղում, խախտում, իսկ դրանցով՝ կյանքի ընկրկում…

Մեր ազգն ու հայրենիքն էլ հաճախ տեսել են բճության կատարած ավերները: Եվ ամենաամոթալին, ցավալին, վտանգավորն ու վնասակարն այն է, որ այդ ավերները ավելի շատ ոչ թե պարզ ժողովրդի, այլ ղեկավար, մտավորական, կղերական կամ հարուստ խավերի միջից են եղել… Վկա՝ մեր Պատմահոր Ողբն ու մինչև մեր ժամանակակից պատմությունը… մեր առօրյան:

Եվ մենք, հակառակ պատմության դասերին և մեր շատ մեծերի պատգամներին, որ մեր ազգային կերպարին հարիր

առաքինության, ազնվության ու նման հատկությունների մեջ բճություն չխառնենք, այնուամենայնիվ, մեր հաճախակի այլասերումների պատճառով առաջացած ***կոռումպացված մտածելակերպը, խորհուրդները, վերաբերմունքն ու արարքները*** մեր ազգային այդ հատկությունների մեջ բճություն խառնեցին, որով դեպի վերելք ազգի ընթացքն արգելակվում էր, խոչընդոտվում և մղվում էր դեպի անկում, ճահիճ…

Այժմ մեր կյանքի ընթացքում թե՛ դրսից «ներմուծվող» և թե՛ ներսում «արտադրվող» ***բճության կոռումպակիր վիրուսը*** շատացել է, իսկ դրա վնասները՝ մեծացել…

Հետևապես բճությունը, նաև քաղաքական, հասարակական, գաղափարական և մշակութային վիրուս լինելով, ***իր կոռումպակիր հարուցիչներով*** արտահայտվում է նաև մեր կրթության, դաստիարակության, տեղեկատվության, արվեստի և գրականության մեջ՝ իր բոլոր ցավալի, խայտառակ և կործանարար հետևանքներով…

Ի՞նչը կարող է կասեցնել, չեզոքացնել և իսպառ վերացնել հայ կյանքից ու Հայաստանից այդ ***կոռումպակիր վիրուսը՝ բճությունը, և բճության վարակով հասարակական մտայնության կոռումպացումը***՝ իր ամոթալի՛, խայտառա՛կ և կործանարա՛ր հետևանքներով, եթե ոչ Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ):

Մաքուր, հստակ, հարազատ ՀԱԳ-ը, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով, ինչպես դարերի ընթացքում, այնպես էլ մեր օրերում միակ ակունքն է, որ սնուցում, կազդուրում և զորացնում է հայ ազգի հոգեբարոյական իմունիտետը՝ վարակամերժ կարողությունը, ամեն տեսակի վիրուսների դեմ:

* * *

Խորհրդային հասարակարգն իբր պիտի վերացներ բճությունը՝ բուրժուական կոռումպացված քաղքենիության վերացմամբ և մարքսիզմ-լենինիզմի «գաղափարականության» հաստատմամբ… Կարծես թե մի կարճ ժամանակ դա ստացվում էր,

բայց միայն թվում էր. իրականում սկսվեց ***բճության կոռումպակիր վիրուսի*** սովետակա՛ն տարատեսակի զանգվածային տարածումը մանկապարտեզից մինչև ամենուր՝ պետական, քաղաքական, տնտեսական, հասարակական, մտավոր, արվեստի, գրականության բնագավառները...

Հավատքով առաքինությունը, ազնվությունը, հայրենասիրությունն ու ազգասիրությունը, որով և արիությունը, քաջությունը՝ սուրբ ասպետությամբ, որը հակառակ կողմն է բճության, սկսեցին հարաճունորեն խամրել, դուրս մղվել հայ կյանքից՝ տեղի տալով դրանց կեղծ տեսակին և ինտերնացիոնալի քողի տակ հակամարդկային ու հակազգային դավաճանական հոգեբանությանը, մտայնությանն ու դրանցից բխող արարքների տիրապետությանը: Իսկ արիության, քաջության ըմբռնումն սկսեց արտահայտվել խուլիգանական համարձակությամբ, լիրբ հանդգնությամբ և սին, ցուցամոլ ռիսկի արտահայտությամբ... ***Եվ հասարակության մտայնության կոռումպացումն*** այնտեղ հասավ, որ փառավորվում էին ազգի դավաճան մատնիչներից ու անողնաշար հարմարվողականներից մինչև փողոցի գողերը... Մատաղ սերնդի մեջ շատերը, անհիրազեկ ճշմարտությանը, նրանց «հերոս» կարծելով, համարում էին արժանի պատվի, հարգանքի ու ընդօրինակման... Իսկ շատ անմեղ երեխաներ, պատանիներ նույնիսկ երդվում էին գողերի անունով...

Այդ անկումային վիճակն ստեղծվում էր այն թյուր հասկացողությամբ, որ դրանում բճություն, կոռումպացում չկա, այլ կա մի դեպքում պրագմատիզմ, առաջադիմություն և նույնիսկ հայրենասիրություն, որով չարը, սխալն ու վնասակարը գովաբանվում էին (հիշենք մեր Տիրոջ՝ Աստվածորդու խոսքը՝ ուղղված Իր աշակերտներին. «Մինչև իսկ ժամանակը կգա, երբ ով ձեզ սպանի, պիտի համարի, թե Աստծուն պաշտամունք է մատուցում», Հովհաննես 16.2), իսկ մյուս դեպքում՝ իբր թե արիություն և քաջություն, «ուժեղ տղաներ»...

Իհարկե, այդ բոլորը սխալ էր և հույժ վնասակար, որովհետև իրականում գործում էր բճության վիրուսի պարզապես մեկ այլ տարատեսակը, ***որն աճում էր կոռումպացած կոմ-***

կուսի վերնախավերում և տարածվում մինչև տեղական ապարատներ...

* * *

Ազգային հոգեբարոյական և գաղափարական առողջապահության մեր դարավոր կառույց-համակարգը (եկեղեցի, մտավորականություն, ավանդապաշտ ընտանիք և այլն), որը վայրիվերումներով հանդերձ իր խնդիրը կատարում էր նույնիսկ մեր ազատազուրկ և պետականազուրկ պայմաններում, յոթանասուն տարվա ընթացքում խախտվեց, խեղվեց ու ***համակարգորեն ախտահարվեց բճության կոռումպացնող վարակով:*** Հայությունն ու Հայաստանն այժմ դեռ չունեն ստեղծված այդ վիճակի (բճության նոր ձևերով, նոր կոռումպացման ազդեցություններով, ավելի վատթարացող) դրությունը վերահսկելու ու իսպա՛ռ լավացնելու ո՛չ պատշաճ կառույց-համակարգ և մեխանիզմներ, ո՛չ էլ, ըստ երևույթին, պատշաճ գիտակցություն, կամք ու ձգտում: Դրա պատճառներից մեկն այն է, որ վերոնշյալ ընթացքում ազգի ոգին, գաղափարը, բարոյական արժեքները և ազգային ինքնագիտակցությունը վառ պահել ձգտող սակավաթիվ անհատները, համակարգերը, կառույցները, մեծ մասամբ անպաշտպան ու անզոր մնալով, ենթարկվել են ու ենթարկվում են սաստկացող վարակի ազդեցությանը՝ այս անգամ նաև ***աշխարհի այլ ուղղություններից աստիճանաբար ներարկվող բճության վիրուսի կոռումպացնող նոր շտամով***...

Այս վիճակում չհայտնվելու համար, եթե ավելի վաղ չկարողացանք, ապա գոնե 1991 թվականի ազատության ու անկախության հանրաքվեի և Արցախի ազգային - ազատագրական պայքարի հետ պետք է սկսեինք համահայկական-հայաստանյան հոգեբարոյական և գաղափարական առողջացման հաստատունորեն կազմակերպված, համադրված, համակարգված և գիտական մակարդակով, պետական մոտեցումով ու ազգային գաղափարական գիտակցությամբ գործընթացը: Այդ գործընթացը պետք է անպայման ու վճռականորեն ներառեր ազգի հոգեկան, գաղափարական, բարոյական վիճակի ու ազգային,

քաղաքական, հասարակական և քաղաքացիական գիտակցության ամբողջական ախտազերծումը բճությունից, որով և՝ ***հայ ազգը և պետությունը կոռումպացնող վարակից:*** Սակայն, ցավոք, այդ տեղի չունեցավ:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ:

Տեղի ունեցավ այն, որ ***բճության կոռումպակիր հին վիրուսը, դրսից ներմուծված կոռումպակիր նոր վիրուսի հետ համասերտ աճելով,*** նոր տարածում ստացավ նաև նորաստեղծ խավերի նոր հարթություններում՝ ***կոռուպցիայի վարակի նոր շտամերով... Եվ կոռումպակիր նորաճ վիրուսն*** սկսեց ներթափանցել այս անգամ նաև պոռնո և զեխ կյանքի բազմաբնույթ գայթակղությունների հետ միասին, նոր «ոսկե հորթի» գռեհիկ նյութապաշտության ազդակներով, որոնք կործանարար ներգործություն են ունենում մեր ազգային արմատներից հարաճունորեն խորթացող, հեռացող, հավատազրկվող, գաղափարազրկվող և բարոյազրկվող կյանքի իրականությունում...

* * *

Դժբախտաբար, փաստն այն է, որ հետխորհրդային շրջանում ևս մեր երկրում բճությունը ոչ միայն մնաց, այլև ավելացավ, և արդյունքում ***կոռումպացումը, նորոգ կազմակերպվելով, այլափոխվելով,*** ավելի մեծ ագրեսիվությամբ շարունակում է իր տնավեր, ազգավեր, մարդավեր գրոհը:

- Սակայն ի՞նչ: Այդ գրոհին տեղի՞ ենք տալիս, հանձնվո՞ւմ ենք կամ պիտի հանձնվե՞նք:

- Ո՛չ: Եվ երի՛ցս ոչ...

Պիտի դիմադրե՛նք և դիմանա՛նք: Անպայմա՛ն, և ոչ միայն այդ. պիտի բուժվենք, կազդուրվենք, առողջանանք, հզորանանք և կենսունակ դառնանք: Կենսունակ՝ մեր ընտանիքների, հասարակության և մեր գյուղերի ու քաղաքների, մեր ազգի, պետության ու սերունդների համար: Այո՛, Աստուծո օգնությամբ՝ ***հոգևոր, գաղափարական և բարոյական կոռումպազերծությամբ*** մենք պե՛տք է զորանանք, աճենք և բարգավաճենք:

ԿԱՇԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ՝ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՎԱՐԱԿԱՄԵՐԺՈՒԹՅՈՒՆ

Կոռումպազերծ, անկաշառ հասարակության հաստատման նպատակի իրագործման մակարդակը, լինելով հայ ժողովրդի ու Հայաստանի ազգային և պետական կենսական խնդիրներից, բնականաբար, համեմատական է ազգի ու հայրենիքի ապահովության, կենսունակության և վերելքի (այդ թվում՝ անվտանգության, հզորության, արժանապատվության և համաշխարհային հարգանքի ու վստահելիության) մակարդակին, որն իր հերթին ուղիղ համեմատական է յուրաքանչյուր հայի, ամբողջ հայության ու հատկապես ղեկավարության անկաշառելիության մակարդակին:

Ասում ենք յուրաքանչյուր հայի, որովհետև աշխարհիկ ու հոգևոր ղեկավարության, նաև մտավորականության տվյալ մակարդակը պայմանավորված է հիմնականում ժողովրդի ընդհանուր մակարդակով: Այլ խոսքով՝ ժողովուրդը ծառն է, որից պտուղը՝ մտավորականությունն ու ղեկավարությունը, շատ հեռու չի կարող ընկնել:

Այլ բան է, որ ազգի մեջ ***անկաշառելիության մակարդակի բարձրացումն*** ավելի արագ, հարթ ու առավել արդյունավետ կլինի, եթե այն սկսվի հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունից և մտավորականությունից:

Բայց ի՞նչ է կաշառելիությունը: Ինչի՞ց է այն առաջանում ու ծավալվում: Ի՞նչը և ինչպե՞ս կարող է այն կասեցնել, նվազեցնել, վերացնել ու այլևս երբեք թույլ չտալ դրա վերագոյացումը:

Ի՞նչ է կաշառելիությունը, կոռումպացումը: Այն խախտումն է ազգի ու երկրի գրված ու Հայ Ազգային Գաղափարախոսությունից բխող չգրված օրենքների, բարոյական կանոնների:

Ի վերջո, ***կաշառելիությունը ազգի, երկրի, հասարակության հոգեբարոյական և գաղափարական ոլորտի***

ընկերային հիվանդություն է, որը տարածվում է քաղցկեղի պես և ճարակում ազգային, հասարակական ու պետական օրգանիզմի կենսունակությունն ու վարակամերժ կարողությունը: Դրանից հետո օրգանիզմի տկարացումը, քայքայումը, անպիտանությունը և վերջին հաշվով վախճանը վարակահարուցիչների սաստկության աստիճանի ու ժամանակի հարց է:

Ինչի՞ց է առաջանում կաշառելիությունը, կոռումպացումը: Ազգի հոգեղենության, գաղափարականության և բարոյականության տկարացումից, նվազեցումից և կամ աղավաղումից, այլասերումից: Այն տարածված կարծիքը, թե կարիքը, աղքատությունն են ծնում կաշառելիություն, ըստ մեր ազգային փորձի և, բնականաբար, նաև մարդկության փորձի, ճիշտ չէ: ***Չէ՞ որ կաշառելիությունը, կոռումպացումը խոր ու ծավալուն են ավելի շատ ղեկավար և ունևոր խավերում, այս աշխարհի զորեղների շրջանակում:***

Կարիքը, նյութական անապահովության վտանգը ծանրաբեռնում են ազգի, երկրի, հասարակության ու անհատի հոգեբարոյական և գաղափարական վարակամերժ կարողությունը՝ դիմադրելու, չեզոքացնելու, հաղթահարելու տարբեր փորձությունները, այդ թվում՝ ***կաշառելիության վարակահարույց հրապույրները,*** եթե նրանց հոգեբարոյական և գաղափարական իմունիտետը՝ վարակամերժ կարողությունը, կենսունակ է, ինչպես, օրինակ, երբ տարբեր առիթներով առավել ծանրաբեռնված սիրտը հաղթահարում է ավելորդ ծանրաբեռնվածությունը, հաճախ աննկատելի, երբեմն էլ պարզապես միայն ազդվելով, եթե հիվանդ չէ, այնպես էլ վերոնշյալ վտանգը հիմնական պատճառ չի կարող դառնալ կոռումպացման համար: Մանավանդ որ աղքատությունն ու տկարությունը (ավելի խոր իմաստով) հաճախ ինքնին արդյունք են հոգեբարոյական և գաղափարական վարակամերժության անկման:

Ազգային առողջ օրգանիզմի համար իր վարակամերժ համակարգի տկարությունը քրոնիկ չի կարող լինել, այլ էպիզոդիկ՝ որոշ բնական անզգուշության և կամ վարակահարույց վիրուսների (կարծես թե դարձյալ բնական) վերափոխվելու և վերա-

դասավորվելու հատկության պատճառով: Սակայն դրանց նոր հարձակումն անմիջապես կասեցվում է, երբ առողջ օրգանիզմում դրական մանրէները ևս, անմիջապես վերադասավորվելով, հարձակվում ու չեզոքացնում են վարակահարույց վիրուսների նախահարձակումը: Ուրեմն՝ ***կաշառելիությունը հիմնականում արդյունք է հոգեբարոյական ու գաղափարական անկման:***

Ինչպե՞ս կարելի է վերացնել կաշառելիությունը հայոց կյանքից: Այն կվերացվի մեր երկրի ու ազգի բոլոր հատվածների, խավերի հոգեղենության, գաղափարականության և բարոյականության զորացմամբ, բարձրացմամբ՝ վերածելով դրանք ապրումի՝ մեր անձնական և մարդկային - ազգային կյանքի բոլոր հանգրվաններում:

Իսկ հոգեղենությունը՝ հավատամքը, ու ըստ այնմ՝ գաղափարականությունը և բարոյականությունը, պետք է ճանաչել, ընդունել և կիրառել Աստուծո հավատքով՝ ըստ Հիսուս Քրիստոսի Ավետարանի իմաստության, գիտության և խաչի խորհրդի զորության ու դրանից բխող և դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության ու հայ ազգային տոհմիկ բարոյական արժեհամակարգի:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՎՈՒՄ Է ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Կոռուպցիան՝ որպես աղետ, եթե առկա է ու արդեն իսկ խանգարում է հայոց պետականության բնականոն կայացմանը, զարգացմանն ու հզորացմանը, եթե խանգարում է հասարակության առողջացմանն ու ազգի համախմբմանը, եթե կոռուպցիան հարվածում է տնտեսությանը և վնասում երկրի միջազգային հեղինակությունն ու վստահելիությունը՝ իր բազմաթիվ, բազմատեսակ և վնասակար հետևանքներով, ապա էական է գիտակցել, որ դրա վերացումը պայմանավորված է առաջին հերթին և հիմնականում ոչ թե վարչական և ֆինանսական միջոցառումներով, այլ իրական՝ Հայ Ազգային Գաղափարախոսության և բարոյական արժեհամակարգի ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ կյանքի բոլոր հանգրվաններում և հարաբերություններում:

Այս դեպքում կոռուպցիան կվերանա արմատապես՝ ի շահ ազգի ու հայրենիքի, ի բարի օրինակ մարդկության և ի փառս մեր քրիստոնեական հավատքի, որովհետև այդ հավատքից է բխում և դրա վրա է հիմնված իսկական Հայ Ազգային Գաղափարախոսությունը:

Իսկ Հայ Ազգային Գաղափարախոսությունը.

- կվերալուսավորի և կվերականգնի հայ ազգային հավաքական ու անհատական աշխարհայացքն ու աշխարհընկալումը,
- կվերարժևորի և կվերահաստատի ազգի ու պետականության բարոյական արժեքների համակարգն ու նորմերը,
- կվերափոխի ազգային-հասարակական մտայնությունը և կյանքի ըմբռնումը,
- ու ըստ այնմ՝ կվերասահմանի հայության կենսաձևը, կենցաղավարությունը, կյանքի պահանջները և դրանց բավարարման գաղափարական մոտեցումներն ու բարոյական միջոցները և այդ բոլորը կդարձնի հայ կյանքի ապրում, հայ իրա-

կանություն (հիմնականում ինքնագիտակցված պարտաճանաչությամբ ու պատրաստակամությամբ), որով հայության ու Հայաստանի մարդկային - ազգային կյանքը կվերածի աշխարհի սքանչելիքի...

Երազա՞նք, ցնո՞րք է այս հեռանկարը, թե՞ իրականություն՝ վավերացված ամենահաստատուն երաշխիքով:

Ցնորք է, եթե հայությունը և հայոց պետությունը ազգի պետականորեն քրիստոնեացման 1700-ամյակը լավագույն դեպքում ընկալել են լոկ որպես պատմական, ավանդական, մշակութային երևույթ և արձագանքել այդ հասկացության չափանիշներով որպես ազգային աշխարհիկ պարտականություն (որը, ի դեպ, կարող է նաև հմուտ գործարարությամբ նյութական, քաղաքական, ինչպես նաև բարոյական հեղինակության իմաստով որոշ օգուտ բերել):

Եվ իրականություն է այդ հեռանկարը՝ ամենահաստատուն երաշխիքով, եթե.

- նախ՝ հայ ազգը և հայոց պետությունը 1700-ամյակը մեր նախնյաց նման ընկալեն որպես Աստվածաշնորհի փրկության փառավոր լուսավորում, որով մեր ազգին ու պետականությանը մարդկային ցեղի առաջին շնորհն արվեց՝ Աստվածորդու հավատքի միջոցով հաղորդվելու Աստվածային հավիտենական խորհուրդներին և այդ հաղորդության լույսով ընթանալու ու ապրելու երկրային կյանքը,
- երկրորդ՝ հայ ազգը և հայոց պետությունը 1700-ամյակին հաջորդող ամեն մի տարեդարձի առիթով հավատարմությամբ արձագանքեն՝ վերանորոգվելով Սուրբ Հայրերի Աստվածաշնորհի հավատքի Ուխտով: Հավատքի, որն աղբյուր և հիմք է Հայ Ազգային Գաղափարախոսության, և կիրառեն այդ Ուխտը միշտ, ամենուր, ամեն ինչում՝ կյանքի բոլոր բնագավառներում, հանգրվաններում:

Կարո՞ղ ենք դա անել:

Իհա՛րկե:

Ի՞նչ է պետք դրա համար:

Ընդամենը՝ հոգևոր վերածնունդ, այն է՝ հաստատուն մնալ

Աստուծո հավատքի մեջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարանի գիտությամբ և Սուրբ խաչի շնորհով, և այդ հավատքով անկեղծորեն զղջալ մեր շեղումների՝ ուրացումներ, նյութապաշտություն, քաղքենիություն և նման մեղքերի համար, այսինքն՝ ապաշխարել, աղոթել, խնդրել, որ Սուրբ Հոգին բուժի մեր սրտի կարծրությունը: Եվ, ինչպես 1700 տարի առաջ, անսանք Տիրոջ կոչին՝ սիրելու Աստծուն մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ հոգով և մեր ամբողջ մտքով ու զորությամբ և սիրելու մեր մերձավորին (ով ամեն մեկն է, սակայն առաջին հերթին՝ հայը) մեր անձի պես և բացելու մեր սրտերը, մեր տները, մեր երկիրն ու կյանքն Աստուծո Միածին Որդու առջև, որ Նա նորից հաճենա իջնել մեր մեջ՝ որպես Իր սիրեցյալ ու ընտրյալ ժողովրդի, ինչպես իջավ Իր Տաճարի (Էջմիածնի) կառուցման տեղը ցույց տալու համար:

Այսինքն՝ անենք այն, ինչ արեցին մեր նախնիք, ու այդ անենք մեր ներկա հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների առաջնորդությամբ՝ ամբողջ հայ ժողովրդի հավատքի հավատարմության ուխտի վերանորոգում՝ համազգային սուրբ մկրտությամբ:

1700 տարի առաջ Տրդատ թագավորը, լինելով անառակ որդի, դարձավ սուրբ որդի -թագավոր՝ Աստվածաշնորհ իր սրբությունը ժառանգություն թողնելով հայ ազգին, Հայաստան աշխարհին և հայոց պետությանը: Փառք Տիրոջը, որ այդ երեքը (հայ ազգ, հայրենիք և պետություն) կան, և կա նաև սուրբ ժառանգությունը: Սակայն պետք է ***արժանանանք Աստվածաշնորհ, հոգևոր, կենսատու այդ ժառանգությանը՝ պահելով մեր Սուրբ Հայրերի ընթացքը...***

Եթե դա կատարենք, հավատո՛ւմ ենք, համոզվա՛ծ ենք, որ մեր 1700-ամյա հավատավորման ամենամյա տարեդարձներին տուրի՛ստ չենք գա Հայաստան, այլ կգանք ուխտի, մենք՝ հայերս, մկրտվելու, իսկ այլազգի եղբայրներն ու քույրերը՝ հաղորդվելու երկնային շնորհի երկրային ***հայկական հոգևոր վերածննդի սքանչելիքին:***

Մեր վերալուսավորման, փրկության ու վերելքի բանալին՝ մեր Սուրբ Հայրերի ժառանգությունը, դեռ մնում է երկնային

գանձարանի հայոց պահոցում: Մեր ազգի ու պետության հոգևոր ծննդյան ամեն մի սրբագործված տարեդարձի Աստված մեզ համար կբացի երկնային գանձարանը, որպեսզի մենք ստանանք այդ բանալին, եթե կատարենք Աստվածապատգամ պայմանները՝ մեր հոգով, սրտով, խորհուրդներով ու արարքներով:

Այս պայմանները բոլորովին էլ ծանր, դառը և կամ նվաստացուցիչ չեն, ինչպես տարբեր (համաշխարհային) բանկերի, (արժութային) ֆոնդերի, (եվրա)միությունների ու նմանների պայմանները: Ընդհակառակը, այդ Աստվածապատգամ պայմանները, իրենց աշխարհիկ դժվարություններով հանդերձ (ինչպես Տիրոջ Ավետարանում է ասված. «Իմ լուծը քաղցր է, և բեռը՝ թեթև»), բոլորովին ծանր չեն, այլ «քաղցր ու թեթև» են և տալիս են երկրային իմաստալից ապրումով իրակա՛ն կյանք ու երջանկություն՝ այժմ և հավիտյանս:

Երանի թե Աստված գթա մեզ և շնորհք տա, որ կարողանանք արժանանալ այդ կյանքին՝ ***մեր սրտերն Իրեն դարձնելով, Իրեն լսելով, Իրեն ծառայելով և որպես Իր սուրբ ժողովուրդ՝ Իր կամքը կատարելով...***

Արդյո՞ք սա չէ մեր 1700-ամյա հավատքի խորհուրդը և մեր Տիրոջ պատգամը: Արդյո՞ք սա չէ, որ ամեն տարի պետք է տոնենք ու հոգեպես նորոգվելով՝ հայորեն ու մարդկայնորեն՝ ուղիղ սրտերով և գործերով փառավորենք ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆԸ...

Աստվա՛ծ հասնի մեզ...

Աստվա՛ծ օրհնի հայ ազգը, Հայաստան երկիրը և հայոց պետությունը:

ԱԶԳԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԿՈՌՈՒՄՊԱԶԵՐԾՄԱՄԲ

Ակնհայտ փաստ է, որ հայ ազգի ու հայրենիք Հայաստանի դիմագրաված բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրների լուծումն սկսվում է մեր բոլորի ու հատկապես աշխարհիկ ու հոգևոր ղեկավար դասի որակական փոփոխությամբ, որը կարող է առաջանալ որակական կատարելությամբ: Սա մի լուծում է, մի խնդրի կատարում է, որը կարող է փրկել և բարձրացնել հայ ազգն ու պետությունը: Իսկ դրան հասնելու համար, ըստ երևույթին, անհրաժեշտ է երկու նախապայման՝

ա) ազգային, պետական, հասարակական կոռումպազերծ մթնոլորտի, միջավայրի առկայություն,

բ) որակապես կատարյալ մի խավի՝ «Ազգային կրիտիկական զանգվածի» (ԱԿԶ) գոյացումը, որն ի վիճակի կլինի խթանել ազգի և պետության որակական կատարելագործումը:

Ազգի, երկրի ու հասարակության որակական կատարելագործման, որով և կոռումպազերծման միջոցը, ուժն ու կարողությունը ***քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունն է, հետևապես հայության կողմից նրա իրապե՛ս ճանաչումը, ընդունումը և կյանքի ապրումի վերածումը հաստատուն նախապայման է կոռումպազերծ մթնոլորտի, միջավայրի ու հարաբերությունների առաջացման:***

Եվ քանի որ որակական կատարելագործումը կարող է սկսվել ազգի կողմից Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ անձնական ու ազգային կյանքի բոլոր բնագավառներում և հանգրվաններում, ապա այն պետք է հանդիսանա հայության, Հանրապետության և Հայրապետության գոյության պահպանման ռազմավարությունը:

Այս իրականության լույսի ներքո ակնհայտ է դառնում նաև, որ քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որով ապրել և որը մեզ

կտակել են մեր Սուրբ Հայրերը, մեր մեծերը, մեզ պատգամում է, որ ընդհանրապես անհիրավությունից, իսկ դրա համար առաջին հերթին կոռումպացումից հեռու լինի ամենայն ոք, ***ով խոստովանում է իր՝ հայի որդի լինելը, առավել ևս նրանք, որ ազգային, հոգևոր, պետական, քաղաքացիական ու նաև հասարակական ծառայության մեջ են և պետք է սրբության ձգտեն ու այդպե՛ս ապրեն:***

Մեր Սուրբ Հայրերի, մեր մեծերի կտակած Հայ Ազգային Գաղափարախոսությունը մեզ սովորեցնում է նաև Աստվածային այն ճշմարտությունը, որ հայ ազգի ու նրա հայրենիք Հայաստանի գոյությունն ու վերելքն ամեն մի հայի սրբությամբ վարած կյանքով և ազգի ու Հայաստանի հանդեպ այլասերումից զերծ՝ կոռումպազերծ վերաբերմունքով է պայմանավորված: Իսկ դրանով պայմանավորված է նաև հայի հոգու փրկությունը՝ հավիտենական կյանքը Աստուծո Արքայությունում:

ԿՈՌՈՒՄՊԱԶԵՐԾ ԵՐԿԻՐՆ Է ՀԱՐԻՐ ՀԱՅԻ ՏՈՀՄԻԿ ԿԵՐՊԱՐԻՆ, ՆԿԱՐԱԳՐԻՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Վերնագրի այս իմաստով, ըստ երևույթին, ուսանելի և օգտակար է հարցադրել, թե արդյո՞ք Հայաստան աշխարհի՝ Աստուծո կամոք ու օգնությամբ անկախանալուց և ժողովրդավարական պետություն հռչակվելուց հետո մենք՝ հայերս, ոչ թե որևէ օտար ուժ հարավից, արևելքից, հյուսիսից կամ արևմուտքից, այլ մենք ինքներս չէինք, որ թույլ տվեցինք, որ մեր ազատագրված երկիրը վերածվի օլիգարխիական կամայական իշխանության: Մեր ժողովրդի այդքան տառապանքներից ու զրկանքներից հետո արդյո՞ք մի բուռ անձինք, կլանային (մաֆիոզ) համաձայնությամբ կազմակերպված, չիշխեցին և բռնադատելով, կեղեքելով, խաբելով, շահագործելով և... դատարկելով երկիրը, այն չնետեցին անհույս թշվառության հորձանուտը՝ անխիղճ, անհոգի, բութ, անբան, անհավատ, ամեն մի վախ ու ամոթ կորցրած ***կոռումպացված վարքով, արարքներով ու գործերով***...

Արդյո՞ք ազգի գիտակցությունը, խիղճը և խղճով պարտաճանաչության ու պատասխանատվության զգացողությունն այնքան պակաս էին կամ չկային, որ այդպիսի իշխանության առաջն առնեին, որ այն այդպիսին չլիներ:

Իսկ այսօր ինչպիսի՞ն է վիճակը, նո՞ւյնն է, թե՞ ոչ, կամ այժմ արդեն ազգի խիղճն ու գիտակցությունն այն աստիճանի շարունակո՞ւմ են թմրած, խեղված, տկարացած, ճնշված մնալ, որ այդպիսի երևույթներին չկարողանան ըստ արժանվույն արձագանքել:

Ի՞նչ պատասխան կարելի է տալ այս հարցերին: Արդյո՞ք չպատասխանել այնպես, ինչպես կպատասխանեին մեր սուրբ նախնիք. «Ո՛չ, որովհետև մանավանդ խիղճն անցողիկ զգացողություն չէ, քանզի լինելով Աստվածաբուխ, ի վերջո, միշտ հաստատ է ու անպայման կարձագանքի՝ ազդարարելով, որ եթե

նյութապաշտ կոռումպացմամբ առաջացած այդ մաֆիոզ վիճակը կար այն ժամանակ, չի նշանակում, որ անպայման պետք է շարունակվի նաև այժմ: Ինչո՞ւ, որովհետև գթասիրտն Աստված, մեր Հայրն Ամենակալ, մեզ չի լքում, որովհետև Արարիչը մեզ սիրում է, և Նա ազդարարում է.«Զարթնի՛ր, Ա՛զգ: Յուրաքանչյուր հայ՝ այր ու կին, տարեց ու երիտասարդ, հարուստ ու չքավոր, աշխատավոր ու մտավորական, գյուղի և քաղաքի բնակիչ, Հայաստանում թե Սփյուռքում, դու կիրավիրվես երկնային հարսանիքին, ***եթե կատարես քո հոգու պարտքը Իմ՝ քեզ հանձնած անդաստանում՝ հայ ազգի ու հայրենիքի գոյության դաշտում, կոռումպազերծ, մաքուր պահելով այն, ըստ քեզ պատգամված Հայ Ազգային Գաղափարախոսության»***:

Աստվածային այս ազդի համաձայն՝ մեր սուրբ նախնիք կպատգամեին նաև. «Հա՛յ մարդ, զգո՛ն, զգա՛ստ և ուշի՛մ եղիր, լսի՛ր, ընկալի՛ր, ըմբռնի՛ր, հիշի՛ր և կատարի՛ր ազդն ու կոչը Տերունական. թոթափի՛ր թմբիրը սրտիդ, տոգորվի՛ր ազգիդ սուրբ հերոսների ոգով ու նկարագրով, հագի՛ր նրանց կերպարի անխոցելի զրահը, որ ի զորու է դիմադրել, պաշտպանել քեզ ամեն մի պղծությունից, այլասերում, կորուստ ու մահ առաջացնող կոռուպցիայի ախտից, և դու միշտ կլինես անպարտելի ու հաղթական, քանզի Աստված քեզ միշտ պաշտպան է լինելու: Նա կզորացնի քեզ և կառաջնորդի ապրելու մաքուր, արժանավայել, ապահով Հայ Պետական, ազգային ու անձնական՝ աշխարհիկ պիղծ, ունայնություններից զերծ սո՛ւրբ երջանկությամբ կյանքով»:

Մեր նախնյաց վարքը ցույց է տալիս, որ այդպե՛ս կպատասխանեին նրանք: Մեր վա՞րքն ինչ է ցույց տալիս: Կարո՞ղ ենք մենք ևս ասել նույնը...

Դա կախված է նրանից, թե ինչպիսին է մեր՝ ժամանակակիցներիս որակական բովանդակությամբ վարքը: Իսկ ինչպիսին է այն, ինչպես կարելի է գնահատել, երբ այդ առումով որոշակի տեսանկյունից դիտարկված հայության ու Հայաստանի ներկա իրավիճակը և դրա պատճառներն ու հետևանքները

հետևյալ տխուր ու չգոհացնող պատկերն են ուրվագծում:

Պատճառները՝

- Քրիստոնեական հավատքի տկարություն,
- Հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությանն անհիրազեկություն, հետևապես և դրա ապրումի գրեթե բացակայություն,
- Մարդկային-ազգային բարոյական արժեքների զգալի անկում, արժեզրկում,
- Ընտանիքի ավանդական ամրության ակնհայտ թուլացում,
- Ընկերական հարաբերությունների մեջ անշահախնդրության, հոգատարության, անձնվիրության, հարգանքի, հարազատության, հավատարմության և միասնականության զգալի նվազում,
- Հայրենիքի հետ կապվածության, ազգի ու հայրենիքի նկատմամբ սիրո,
- պատասխանատվության, պարտաճանաչության և պատրաստակամության մեծ չափերի նվազում,
- Ազգային ինքնագիտակցության տկարացում ու պետական մտածելակերպի և պատվախնդրության գրեթե բացակայություն:

Հետևանքները՝

- Անխղճության, եսամոլության, փառամոլության, ամբարտավանության աճ,
- Նյութապաշտության, քաղքենիության, հեշտամոլության տարածում, ավելացում,
- Անօրինականության, հանցագործության աճ և ազգային, հասարակական տարբեր ոլորտներում հետընթացի միտում ու կորուստների առավել մեծացման վտանգ,
- Բաժանված ընտանիքների և լքված ծնողների ու երեխաների թվի նկատելի աճ,
- Ազգի ու երկրի համեմատական տկարացման, խոցելիության ավելացման միտում,

- Արտագաղթի, ազգի սփռվածության ու օտարացման, ծուլման աճ,
- Պետական ու հասարակական տարբեր ոլորտներում, հարաբերություններում կաշառելիության, կոռումպացման աճ:

Թվում է, թե ակնհայտ է, որ հայ ազգի և պետության իսպառ կոռումպազերծման համար վերոնշյալ և նման երևույթների հաշվեկշիռը հարկ է դարձնել հաստատապես դրական:

Այդ իմաստով Հայաստանի աշխատավորության, հատկապես բոլոր կարգի պաշտոնեության աշխատավարձով ապրելու հարցը հրամայական պահանջ է, որ դառնա ազգի, հասարակության և պետության անմիջական ու ամբողջական լուծում պահանջող խնդիր, որից կախված է երկրի տնտեսական և ընկերային կայունացումը, ժողովրդի կենսամակարդակի աստիճանական (բայց և ինչ-որ չափով շեշտակի) լավացումը ու ընդհանրապես բոլոր բնագավառների ընդհանուր վերելքի ապահովումը: Սակայն այդ լուծումը, որպեսզի լիարժեքորեն ու հաստատապես տեղի ունենա, պետք է խարսխված լինի Հայ Ազգային Գաղափարախոսության վրա, որով պիտի սահմանվեն հայ հասարակության հոգևոր ու նյութական պահանջների վերաբերյալ որոշակի ըմբռնում, հասկացողություն (ինչ-որ ձևի նորմեր) և նույնիսկ դոկտրին (վարդապետություն) ու ըստ այնմ՝ մեր այսօրվա և տեսանելի ապագայի համար կենցաղավարություն ու ապրելակերպ:

Ու Հայաստանում պայմանները թեև շուկայական են, բայց գոնե որոշ ժամանակահատվածի համար դրանք միայն տնտեսական իմաստով պետք է լինեն շուկայական, այլ ոչ թե ընկերային, սոցիալական, կենցաղային ու նաև գաղափարական իմաստով: Այդ առումով դրանք պետք է լինեն՝ համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսության աշխարհայացքի, կյանքի փիլիսոփայության, հայրենիքի, ազգի ու պետության հանդեպ պատասխանատվության ըմբռնումով: Գուցե հարկ է նշել դարձյալ, որ այդ ամենը ոչ թե համաձայն սոցիալիստական կամ շուկայական ուսմունքի ու մշակույթի, այլ քրիստոնեական հա-

վատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության ուսմունքի ու ըստ այնմ՝ մշակույթի, որով ***ԱՆՎԱՏՆՈՒՄ ՍՊԱՌՄԱՄԲ* ապրելակերպով կառաջանա շուկայական հարաբերությունների պայմաններում խնայողական ուրույն ազգային օգտավետ ապրելակերպ***՝ ստեղծելով ներդրման կենսունակ ու կայուն ազգային կապիտալ՝ դրա բոլոր դրական հետևանքներով…

** Անվատնում սպառումն իրականանում է որոշակի մշակույթի ու ըստ այնմ՝ կենցաղավարության արդյունքում, ինչը հարիր է քրիստոնյա մարդու, ներառյալ հայ քրիստոնյայի տոհմիկ կերպարին: Այն կերտվում է հավատքի, գաղափարականության ու բարոյականության «Իմ լուծը քաղցր է, և բեռը՝ թեթև» Աստվածային պատվիրանի ըմբռնումով:*

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԲԱՐԵՓՈԽԵԼ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայ իրականությունում գոյություն ունեցող իրավիճակից դուրս գալու, այն բարեփոխելու առաջնային միջոցը հավատքի՛ց բխող ազնվությունն է:

Միշտ չէ, որ անձն ազնիվ է իր բոլոր հարաբերություններում: Լինում է անհատական ազնվություն, այսինքն՝ անհատն ազնիվ է իր անձնական հարաբերություններում, բայց անազնիվ է իր հանրային հարաբերություններում՝ ազգի ու հանրության նկատմամբ: Հատկապես ոչ շարքային անձնավորության դեպքում ազգային - հանրային մասշտաբի անազնվությունը հիմնականում արտահայտվում է պարտազանցությամբ՝ ժողովրդի, պետության ու ազգային հաստատությունների նկատմամբ: Եվ այդ պարտազանցությունն արտահայտվում է ոչ միայն տալիքի կամ մասնակցության թերացմամբ, այլև յուրացումներով, շորթումներով, անիրավ որոշումներ կայացնելով, անարդար, վնասակար կողմնակցություններով ու հարաբերություններով, ***այսինքն՝ կոռումպացմամբ:***

Անձնական զգացումների արտահայտությունների, վերաբերմունքի, դիրքորոշման և արարքների ազնվությունն էական լինելով նախ տվյալ անձի համար, էական է նաև նրա հարազատների, անմիջական շրջանակի, ինչպես նաև ամբողջ ազգի ու մարդկության համար: Եվ այդ հանգամանքը մեր ազգի կրթական, մշակութային և բարոյական համակարգում հարկ է պարզաբանել բոլոր ձևերով ու միջոցներով՝ տանը, փողոցում, դպրոցում, աշխատավայրում և ընդհանրապես կյանքում: Այն պետք է ուսուցանվի ու դաստիարակվի եկեղեցու, պետության և հասարակության տարբեր կառույցների կողմից՝ ազգի կազմակերպված (ի մի բերված) գիտակցությունն արտահայտող մտավորականության գործուն մասնակցությամբ:

Այս հենքի վրա, հատուկ մոտեցմամբ, մեթոդներով ու միջոցներով առավել ևս հարկ է պարզաբանել, ուսուցանել և կրթել

հայ անհատի (մանավանդ հասարակական, պետական և հոգևոր որոշակի պատասխանատվություն ստանձնելու հավակնությամբ անձի) հասարակական լայն մասշտաբով ազնիվ լինելու անհրաժեշտության գիտակցությունը և ըստ այնմ՝ պարտաճանաչությունը և դրա կիրառման կենսական կարևորությունը, դարձյալ անձի, ընտանիքի, ազգի ու մարդկության համար այն հասկացողությամբ, որ ***ազնվությունը կյանքի ակտիվության կենսահյութն է:***

Ակտիվությունն առանց այդ կենսահյութի, ինչքան էլ պրոֆեսիոնալ լինի ու փայլուն թվա, ամուլ է: Այն չի կարող սնել, բավարարել կյանքի պահանջը, քանզի վերջին հաշվով կաղավաղվի հենց ինքը՝ այդ ակտիվությունը, և տարբեր աստիճանի (կախված աղավաղման սաստկությունից ու պայմաններից) կործանարար չարիք կդառնա:

Մեր հասարակության մեջ ***կոռուպցիայի բացառման*** կարևորագույն հանգամանքներից մեկն այն է, որ հայությանը ոչ թե իշխանաբռնական, այլ **իշխանածառայակա՛ն** ղեկավարություն է պետք: Ծառայական ոգով ղեկավարության հայեցակարգը, հատկապես արդարամտության հարցում, ինչպես նաև դրա կարողությունը և արդյունավետությունը՝ որպես հայ հասարակության, հայ ազգի և Հայաստանի գոյատևման ու զարգացման կարևորագույն գրավականներից մեկը, պետք է հստակ, հասկանալի դառնա թե՛ ղեկավարների և թե՛ ղեկավարվողների համար:

Ընդ որում ազգի երեք հաստատությունների՝ աշխարհիկ իշխանության, հոգևոր իշխանության և կազմակերպված մտավորականության գերագույն պարտականությունը և նրանց գործունեության գնահատման չափանիշը պետք է լինի ազգային կյանքի ա՛յն դրվածքի և մթնոլորտի ապահովումը, որում ազնվությունը, վեհանձնությունը, առաքինությունը և ընդհո՛ւպ ասպետությունը էապես խրախուսվում են: Եվ դրանով հայ մարդու, հայ քաղաքացու ունեցած հասարակական պատվի, հասարակական վստահության, ինչպես նաև գործնական, նյութական ու բարոյական հաջողության աստիճանը պետք է ուղիղ հա-

մեմատական լինի նրա ազնիվ, բարի, վեհանձն ու ասպետական զգացումների, մտածումների, վարվելակերպի ու արարքների աստիճանին:

Սա հայ ազգի երեք հաստատությունների առաջնային խնդիրներից է: Սրանից են կախված նրանց կենսունակ գոյությունն ու զարգացումը, հետևապես և՝ ազգի ու հայրենիքի կենսունակ ապագան՝ ***բացարձակապես զերծ ամեն տեսակ կոռումպացումից:***

Այս խնդրի կատարման նախապայմանը՝ բանալին, Աստուծո հավատքը, հույսը և սերն է, դուռը դրանցից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունն է, որը հայ անհատին ու ազգը տանում է Քրիստոսանվեր կյանքի, այն է՝ երկրային իմաստալից, որով և երկնային կատարյալ կյանքի:

Հետևապես հարկ է, որ հայ ազգի վերոհիշյալ երեք հաստատություններն Աստուծո, մարդկության և ազգի առաջ ամենօրյա պատասխանատվության գիտակցությամբ բոլոր միջոցներով և ձևերով, մանավանդ անկեղծ հավատով ու բարոյականության անձնական օրինակով անհապաղ սկսեն նախապատրաստել ազգը, քանզի Աստվածային լույսը, Աստվածային շնորհը, Աստվածային կամեցողությունը և Նրա հաճությունն են էականը՝ արժանանալու համար իրական կյանքին այժմ, միշտ, հավիտյանս:

Հայ անհատը, հայ ազգը, Հայաստանը քրիստոնեաբար ասպետականացած կյանքի ապրումի շնորհիվ ստացած Քրիստոսափառ լույսը կարող են տարածել թե՛ բարեկամների և թե՛ հակառակորդների վրա:

Աստուծո և մարդկության նկատմամբ հայոց ծառայության ինչպիսի՛ փառավոր առաքելություն...

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՂԵՆ «ԷՆԵՐԳԻԱՆ»

Հայոց հոգեղեն «էներգիան» իր բնական ապրիճանով «կլիցքավորի», կվերակենդանացնի, կվերականգնի համայն հայության բոլոր ազգային, պետական ու հասարակական շերտերը:

Հայ քրիստոնեության եռանդը (էներգիան) ի՞նչ աստիճանի է: Եթե հայ քրիստոնեության և մասնավորապես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո եռանդը (էներգիան) ընկել է, էլ չասած, եթե չքացել, վերացել է, այդ հանգամանքն ի՞նչ նշանակություն կունենա ընդհանրապես հայ ազգի և մասնավորապես հայոց պետականության համար, դրանց անկաշառելիության, հետևապես՝ կենսունակության և ի վերջո՝ գոյության համար:

Սակայն ի՞նչ է նշանակում քրիստոնեական հավատքի եռանդ: Ինչի՞ց է առաջանում, ինչպե՞ս է արտահայտվում, գործում: Ի՞նչ ազդեցություն, ներգործություն է ունենում, տվյալ դեպքում, հայ ազգի ու Հայաստանի կյանքի վրա...

Հայաստանում, երբ էլեկտրական եռանդը (էներգիան) պակասել էր, մութն ու ցուրտն էին ավելացել, և երկրի տնտեսությունն ու շատ այլ ոլորտներ տկարացել էին, և կյանքը մեծ չափով խախտվել էր. **դա բոլորն էին զգում,** և համընդհանուր կերպով տարբեր միջոցներով մեծագույն ջանքեր էին գործադրվում ֆիզիկական եռանդի պակասը լրացնելու համար...

Իսկ եթե մեր ազգի ու երկրի հոգեկա՛ն եռանդը նվազած լինի, ի՞նչը կավելանա: Անաստվածությունն ու անբարոյականությո՞ւնը, գաղափարազրկությունն ու քաղքենիությո՞ւնը, նյութապաշտությունն ու կոռումպացո՞ւմը, էլ ի՞նչը. փոքրոգությո՞ւնը, դասալքությո՞ւնը: Էլ ի՞նչը: Այսքա՞նն էլ բավական է... **Բայց արդյոք բոլորս զգո՞ւմ ենք այդ:**

Եվ եթե նվազել է մեր հոգեկան եռանդը, հասել զրոյի մոտ, **ո՞ր կառույցներն են պարտավոր և ի՞նչ միջոցներով** պետք է ջանան լրացնել ու բարձրացնել այն... Եվ ովքե՞ր են հաշվետու,

պատասխանատու հոգեղեն եռանդի պակասի ու դրա հետևանքների համար, և ո՞ւմ առաջ ենք մենք բոլո՛ր պատասխանատու...

Արդյոք այս հարցերն առնչված չե՞ն մեր ազգի ու երկրի անվտանգության, զարգացման, բարգավաճման և ընդհանրապես մեր գոյության ապագային...

Ումի՞ց կարելի է ակնկալել այս հարցերի պատասխանները, և ի՞նչ գաղափարից ու սկզբունքից բխող չափորոշիչների վրա են հիմնվելու այդ պատասխանները:

Այդ չափորոշիչները հիմնվելու են Հայ Ազգային Գաղափարախոսությա՞ն վրա՝ ապահովելու համար արդար, բարոյական, զարգացած, բարգավաճ ու ապահով ազգային անկախ պետականություն, թե՞ հենվելու են օտարածին, հայոց ազգային հոգեբարոյական կերտվածքին խորթ գաղափարների վրա, որոնք, ի վերջո, տանում են դեպի հետադեմ, կլանային (մաֆիոզ), «առավ - փախավ», «չորրորդ աշխարհի» երկրի կարգավիճակով կախյալ պետության վիճակի:

* * *

Իմաստուն խոսքը, ճիշտ գաղափարը, օգտակար ծրագիրը ինչքանո՞վ է հնարավոր անտարբերին լսելի դարձնել, նրա հետ քննարկել, էլ չասած՝ նրան համոզել, ընդունելի դարձնել ի կատարումն...

Մեր ազգային իրականության մեջ արդյոք մենք (հատկապես հզորները՝ իշխանավորներն ու հարուստները) սիրո՞ւմ ենք լսել այլոց խորհուրդների և ծրագրերի մասին: Կար ժամանակ, երբ իշխանավորներից ոմանք մի կերպ կլսեին, **եթե խոսքն ուղեկցվում էր «կլորիկ» գումարով**, մանավանդ, եթե այն գլորվում է դեպի իրենց՝ անձնապես շփվելով: Այն ժամանակ խորհուրդները գովեստների և մինչև իսկ մեդալների կարժանանային... Այժմ այս երևույթը քչացե՞լ է, շատացե՞լ, թե՞ նույնն է մնացել: Ինչպե՞ս կարելի է դասակարգել այն, ինչպե՞ս բնութագրել, մանավանդ դրա անարժանությունը և վնասա-

կարությունը... Երանի թե այս երևույթը հեռու լիներ մեր հոգևոր ու աշխարհիկ իրականությունից:

* * *

Երկյուղը, վախը չեզոքացնում և կամ նվազեցնում ու մինչև իսկ զրոյական աստիճանի են հասցնում շատ դրական նպատակների, ծրագրերի և ջանքերի կիրառությունը:

Հետևապես որևէ դրական կիրառության կարևորագույն ու անհրաժեշտ գործոններից է քաջությունը: Զավեշտական ողբերգություն է, բայց նաև իրականություն, որ դրականորեն գործողը շատ հաճախ նաև բազմաթիվ արգելքներ է դիմագրավում: Եվ ինչքան զգալի է գործի օգտակարությունը, այնքան մեծանում են խոչընդոտները՝ թե՛ տգիտության, նախանձի, նենգության և թե՛ ընդհանուր հակառակության պատճառներով: Զարմանալի և ցավալի է, որ դրական կողմերի՝ միմյանց աջակցությունն ավելի թույլ, անկազմակերպ ու անհետևողական է լինում, քան դրականի հակառակորդների համախմբվածությունն ու ըստ այնմ՝ բարու դեմ նրանց հակազդեցությունը:

Օգտակար, լավ, բարի գործի ապաքաջալերման համար շատ բան կա: Սակայն քաջությունը, Աստուծո՛ հավատքով անսասա՛ն ու հարատև քաջությունը, ուղեկցված Ավետարանի իմաստությամբ և գիտությամբ, չեզոքացնում է ամեն տեսակի ապաքաջալերանք...

Հայ ներկա իրականության մեջ էական պահանջ է, որ դրական նպատակներ ունեցողներն ու դրական գործողները՝ արդարները, ուր որ կան, միանան և գործեն մարդկայնորեն՝ վասն հավատո և վասն հայրենյաց:

* * *

Աստուծո խոսքին անգիտակ, հետևապես ճշմարտության՝ սրբության հանդեպ հավատազուրկ հոգու կուրությունը պատճառ է դառնում նյութապաշտության, որն արմատն է կոռումպացման և դրա պտուղ անտարբերության, պարտազանցության և մինչև իսկ դավաճանության: Եվ կոռուպցիան, խաթարելով, ապականելով հոգին, քայքայում, կործանում ու մահվան է ենթարկում ԿՅԱՆՔԸ:

Մի պահ պատկերացնենք, թե ի՞նչ կլիներ մեր ազգի ու հայրենիքի վիճակը՝

- եթե խորհրդային սոցիալիստական նյութապաշտության հարուցած կոռումպացումից չանցնեինք արևմտյան դրամատիրական նյութապաշտության հարուցած կոռումպացմանը,
- եթե անկախացած ազգի ու երկրի քաղաքական և տնտեսական ազատությունն ապօրինաբար չբռնասեփականացվեր անհատների հանցավոր համաձայնությամբ և չօգտագործվեր նրանց փառասիրության, կլանային շահերի ու անձնական ագահ հարստացման համար:
- եթե նրանք իրենց տիրած իշխանությունը՝ դանակ, իսկ ազգային ունեցվածքը՝ դմակ չնկատեին ու ագահորեն չխժռեին 3-4 սերունդների անասելի զրկանքներով, արյուն-քրտինքով ստեղծածը՝ փչացնելով ազգի, երկրի սեփականության հարյուրը՝ յուրացնելու համար մեկը, այլ դրա փոխարեն՝
- եթե նրանք ուխտեին ու ըստ այնմ օրենք ու կանոն հաստատեին, որ ասենք «յոթ տարի» էլ ապրելու են սովետի կենսամակարդակով՝ ազատագրված ազգի ու անկախացած հայրենիքի բարօրության համար՝ «Հզոր հայրենիք և միացյալ հայության երջանիկ կյանքի» գաղափարի իրականացման համար: Ասենք վարվեին, ինչպես Միացյալ Նահանգների անկախության կամ Իսրայելի պետության անկախության կերտողները կամ հեղափոխական համայնավարները, որ պետականության ամրապնդման սիրույն ըստ այնմ համեստ կենսամակարդակով ապրեցին իրենց իշխանության գոնե առաջին տարիների ընթացքում: Եվ դեռ նրանցից էլ շատ ավելի՝ ֆիդայական նվիրական խստակեցության կարգապահությամբ ապրեին ու վարվեին, քանի որ այդ պիտի անեին իրենց բազմաչարչար, արյունաքամ և մեծ մասամբ հայրենազուրկ հայ ժողովրդի և նրա հայրենիք Հայաստանի համար, ու ամենակարևորը՝ այդ անեին որպես

քրիստոնյաներ՝ վերականգնելու համար մեր քրիստոնյա ազգի, աշխարհում առաջինը քրիստոնեացած պետության փայլը, փառքը և կարողությունը՝ ի օրինակ և հօգուտ նաև մարդկության և ի հաճույս ու ի փառս Աստուծո...

- Եթե այն ժամանակ խաչի փոխարեն ոսկե հորթը չպաշտեին, ապա ինչպիսի՞ն կլինեին, ի՞նչ աստիճանի կլինեին հայության բոլոր հատվածների հոգեվիճակը, բարոյական կորովը, ազգային նվիրումը, ինքնագիտակցությունը և քաղաքացիական պարտաճանաչությունն ու պատրաստակամությունը Հայաստան երկրի և պետության հանդեպ:

Իսկ հիմա՞, ինչպիսի՞ն է վիճակը... Մի՞թե ժամանակը չէ հստակ գիտակցելու, որ էության մեջ շատ բան չի՛ փոխվել ու չի՛ փոխվի և է՛լ ավելի կվատանա, եթե ***շարունակենք կոռումպացնող ոսկե հորթի պաշտամունքը,*** որը հարաճունորեն տեղի է ունենում որոշ խավերի ու հատկապես որոշ ազդեցի՛կ շրջանակների կողմից: Այս պայմաններում նույնիսկ եկեղեցի կառուցելը և ոսկե խաչերով զարդարելն իսկ չի փրկի ազգը, երկիրն ու պետությունը, որովհետև այդ անելը չի տարբերվում ***ոսկե հորթի կոռումպացնող պաշտամունքից, եթե խաչը հավատք, գաղափար և ըստ այնմ բարոյական կյանքի ապրում չենք դարձնում... Զարթնի՛ր, լա՛ո՛, «տո լա՛ճ տնավեր»...***

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԳԱՅԹԱԿՂԻՉ ԽԹԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հակիրճ խոսենք ***կոռումպացման գործընթացի «դրական» և բացասական խթանների մասին:*** «Դրական», երբ խոստացվում և կիրառվում է շռայլ ու մեղկ կյանքի գայթակղությունը, մի խոսքով՝ երբ մարդուն խոստացվում է երկրային իշխանություն, փառք ու վայելք... Եվ բացասական, երբ սպառնում և կիրառվում է անձի նյութական աղբյուրների դեմ ոտնձգություն՝ պաշտոնազրկություն կամ աշխատանքային դիրքի և սոցիալական վիճակի խախտում և կամ անձի մասին հասարակական կարծիքի վատացում, որով և կյանքի տարբեր դժվարություններ՝ ուղեկցվող բամբասանքներով, պարսավանքներով, զրպարտություններով, որոնք սովորաբար սևացնում են անձի և նրա հարազատների կերպարը:

Ո՞վ կարող է դիմանալ այդպիսի փորձությանը, երբ թեկուզև ի բնե հզոր, ուժեղ հայ մարդուն իրականությունը կանգնեցնում է այսպիսի երկընտրանքի առջև՝ մի կողմից դյուրին ու հաճելի կյանք, մյուս կողմից հակառակը՝ դժվար, ամոթալի և տհաճ կյանք, որն իրականում, համաձայն հայոց հավատքի, գաղափարականության և բարոյականության, ստացվում է հակառակը՝ մի կողմից ամոթալի, կորստաբեր, մյուս կողմից՝ պատվավոր ու իմաստալից կյանք:

- Ո՞վ, ո՞ր հայը կարող է հետևողական ու հարատևորեն դիմանալ գայթակղություններին, հաղթել և փառավորվել հավիտյանս:

- Այն հայը, ով ունի հավատք առ Աստված՝ ճանաչված Ավետարանով ու խաչով, ապրում է այդ հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ և բարոյական արժեքներով:

Ա՛յդ հայը կարող է, որովհետև նա, լինելով հավատացյալ, հետևապես և գաղափարական, ազնիվ ու բարոյական, ծառայում է Աստծուն, ըստ այնմ՝ պատասխանատվություն զգալով և

սիրելով իր ազգն ու հայրենիքը և հոգու պարտաճանաչությամբ կատարելով իր ազգային ու քաղաքացիական պարտքն Աստուծո առաջ:

Եվ ***կոռուպցիայի գայթակղությունները հաղթահարող*** հայությունը, մասնավորապես ղեկավարությունը հարկ է, որ մշակի և գործադրի ազգի, Հայաստանի և հայոց պետականության կոռումպազերծ կայացման, անվտանգության, զարգացման, բարգավաճման և ընդհանուր վերելքին համապատասխան քաղաքականություն:

Սա՛ է հայության ճանապարհը:

Ա՛յս ճանապարհն է տանում դեպի մեր ազգի կենսունակություն, զորություն, ստեղծագործություն և վերելք, որովհետև այս ճանապարհը հաճելի՛ է Աստծուն: Այն Նրա՛ նախագծով է գոյացած և մեր Սուրբ Հայրերի, մեր մեծերի միջոցով մեզ հասցեագրված ու պատգամված:

- Ինչպե՞ս գտնենք այդ ճանապարհը՝ առանց մոլորվելու մեր առաջ կոռուպցիոն գովազդներով պատված բազում ճանապարհների մեջ:

- Աստուծո՝ մեզ շնորհած կողմնացույցով՝ Հիսուսի Ավետարանով, Ավետարանի իմաստությամբ, գիտությամբ, խաչի շնորհով, զորությամբ և դրանցից բխող ու դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ և կենցաղավարությամբ: Դրանք մեզ շնորհված սուրբ ժառանգություն են, մնում է ճանաչենք, ըստ այնմ՝ ապրենք և գործադրենք…

- Կարելի՞ է հասնել նրան, որ Հայաստանի հարկային - մաքսային կառույցների աշխատակազմերը (նաև նրանց աշխատանքային միջոցները) կրճատվեն 50-70 տոկոսով:

- Կարելի է, եթե յուրաքանչյուր հայ մարդ և նրա քաղաքացի վճարի իր հարկերը նախանձախնդիր ազնվությամբ և օրենքի գիտությամբ:

Սա երա՞զ, հեքիաթային ցանկությո՞ւն է: Այո՛, եթե մենք այլևս մենք չե՛նք, շեղվել ենք այնքան, որ այլևս զուրկ ենք հայկականությունից, որը հավատք է, գաղափար, բարոյականություն և ըստ այնմ՝ ազնվություն, հավատարմություն և նվիրում:

ԿՈՌՈՒՄՊԱԶԵՐԾ ՈՒ ԱՆԿԱՇԱՌ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շինարար - կառուցողական մրցակցությունն ազգի մեջ և մասնավորապես կուսակցությունների, կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների միջև և նույնիսկ ընկերական շրջանակում լավ է, օգտակար և նույնիսկ կենսական: Միայն թե ***այն պետք է բացարձակապես կոռումպազերծ լինի,*** լավն ուրիշից ավելի լավ անելու ձգտումով, մրցակցին օգտակարությա՛մբ գերազանցելով, այլ ոչ թե մրցակցին խանգարելով, վարկաբեկելով, նսեմացնելով և կամ բարոյապես ու նույնիսկ ֆիզիկապես վնասելով, քանի որ դա ***կոռումպացված, քայքայող, այլասերող և փչացնող մրցակցություն է,*** դատապարտելի որպես ***ազգի դեմ թշնամակա՛ն մրցակցություն…***

Այդպիսի կոռումպացված մրցակցությունը պետք է իսպառ դուրս մղվի հայ կյանքից՝ Հայաստանում և հայության բոլո՛ր հատվածներում: Դուրս պետք է մղվի ընտանիքներից, ընկերական շրջանակներից, քաղաքական, հասարակական և գործարար կյանքից: Դրա դուրսմղումը ճիշտ ու արդար կլինի, եթե դառնա համազգային նպատակ, ծրագիր և գործ՝ առաջնորդվող Հայրապետության և ղեկավարվող Հանրապետության ղեկավարության կողմից, միաժամանակ մտավորականության գործուն աջակցությամբ... Աստուծո օգնությամբ:

Գոնե այսօր պետք է զգուշանալ, մերժել և ձերբազատվել **«քուչի» հոգեբանությունից,** ***մտածելակերպից, «քուչի» բարքերից, սովորություններից, ինչպես նաև «քուչի» հարաբերություններից և վերաբերմունքից, որն իր տեսակի կոռումպացում է:*** Ցավոք սրտի, դրանք, կարծես, որպես «քաղցր, բարի» հին օրերի հիշողություն, դեռ գործում են մեր ղեկավար և նույնիսկ մտավորական որոշ շրջանակներում: Մինչդեռ ասպետական ազնվությո՛ւն, այսինքն՝ ***իսպա՛ռ կոռումպազերծություն պետք է տիրի*** Հայաստանում և

համայն հայության հարաբերություններում, վերաբերմունքում՝ հիմնված Աստծու քրիստոնեական հավատքի վրա…

* * *

Պետք է հասկանանք, ի վերջո, քննենք, բնորոշենք ու ըմբռնենք, թե ինչ է ՏԱՃԱՐԸ, և ինչի համար է այն, ինչ սրբություն և կյանքի բովանդակություն է կրում իր մեջ, ու ըստ այնմ որոշենք, ընդունենք ու մեր կյանքում դրանք ապրումի վերածենք հոգևոր, գաղափարական ու բարոյական իմաստով, քաղաքական, սոցիալական և քաղաքացիական իմաստով ու նաև կրթական, մշակութային, ընտանեկան և այլ իմաստներով:

Նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի, դատական համակարգի և հայկական պետության համա՛յն պաշտոնեության նստավայր-գործավայրերը համապատասխան «տաճարներ» են, հետևապես էական է, որ դրանք ***զերծ մնան հոգեկան, բարոյական և նյութական ամեն տեսակ կոռումպացումից: Եվ զերծ կմնան միշտ ու բոլոր պայմաններում՝ պահպանելով ՏԱՃԱՐԻ հատկությունները:***

* * *

Հայոց հավատքի սահմանադրությունում՝ Ավետարանում, Աստուծո Միածին Որդին ասում է. «…Դո՞ւք էլ այդպես անմիտ եք, չե՞ք իմանում, թե ամեն բան, որ դրսից մարդու մեջ է մտնում, չի կարող նրան պղծել, որովհետև ոչ թե նրա սիրտն է մտնում, այլ՝ որովայնը…»: Եվ ասում էր. «Ինչ որ մարդուց դուրս է գալիս, ա՛յն է, որ պղծում է մարդուն, որովհետև ներսից, մարդկանց սրտից են ելնում չար խորհուրդները՝ շնություն, պոռնկություն, գողություն, սպանություն, ագահություն, չարություն, նենգություն, գիջություն, չար նախանձ, հայհոյանք, ամբարտավանություն, անզգամություն: Այս բոլոր չարիքները ներսից են ելնում և պղծում մարդուն» (Մարկոս, է 18-23):

Ամեն ինչ ասված է, չկա թաքուն բան, որ իմացված չլինի տվյալ դեպքում՝ հայ ազգի համար, շնորհիվ Հիսուս Քրիստոսի

արյան հեղման, որով Սուրբ Լուսավորիչը լույս սփռեց հայոց թագավորի սրտում և նրա ավագանու և համայն ազգի, որ սրբացմամբ կյանք ստացան ու փոխանցեցին սերունդներին:

1700 տարի առաջ ճառագած սրբագործող լույսով ապրեցինք, ստեղծագործեցինք և դիմացանք բազում փորձությունների: Այժմ, երբ արժանացանք ազատության, անկախության ու պետականության, գոհանանք, փառք տանք Տիրոջն Ամենակալ ու ***մաքրենք, կոռումպազերծ դարձնենք մեր սրտերը, որպեսզի չամբարտավանանանք, չանբարոյականանանք և նյութապաշտությամբ չօտարանանք, չշեղվենք ու չհեռանանք Նրանից,*** այլ հավատանք Նրա՛ն, հուսանք ու ամբողջ սրտով, ամբողջ մտքով, ամբողջ էությամբ և զորությամբ Նրան սիրենք, Նրան դաշնակցենք, Նրա ծրագիրը, Նրա գործը կատարենք, որն, ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության, նշանակում է.

Մեր հավատքի սուրբ հավատարմությամբ մեր ժամանակը, եռանդը, ուժը, զորությունը, միջոցներն ու հնարավորություններն անկեղծորեն և հարատև կարգապահ հետևողականությամբ ի սպաս դնենք մեր ազգի ու հայրենիքի վերելքին՝ ի երջանկություն մեր ժողովրդի, հոգուտ մարդկության և ի փառս Աստուծո:

Մեր հավատքով կարող ենք միանգամայն համոզված լինել, որ այդ հավատքով ազգային հավատարիմ նվիրումի, քաղաքացիական հանձնառության և պարտաճանաչության պակասն է պատճառը մեր բոլոր տկարությունների, կորուստների, շարունակվող դժվարությունների, նեղությունների և վտանգների: Ուրեմն՝ վերականգնենք, վերահաստատենք մեր գործերը մեր սուրբ հավատքով, դրանից բխող գաղափարականությամբ, բարոյականությամբ, որով և նվիրումով, ըստ այնմ՝ վերաբերմունքով, և… մեր բոլոր խնդիրները կլուծվեն, և ***կոռուպցիայի ամեն տեսակ երևույթները իսպառ կվերանան:***

Մեր այդ հավատքով մենք նաև հոգեպես կզորանանք, մեր մտքերը կճառագեն, մեր կյանքն իսպառ կկոռումպազերծվի, մեր ծրագրերը կիմաստնանան, մեր բազուկները կզորանան,

գործերը միշտ ու ամենուր կհաջողվեն. իսկ մեր հակառակորդները կշփոթվեն, կտկարանան, իրար փչացնելով՝ կչքանան, մեր ամեն տեսակ դժվարությունները, խոչընդոտները, արգելքները կնվազեն, կվերանան, և մեր կյանքի կաշառազերծ ընթացքը մարդկության առաջատար շարքերում կպսակվի պատվով ու փառքով, որը մենք կընծայենք մեր հավատքի՝ կյանքի աղբյուր Սուրբ Երրորդությանը՝ մեր ԷՈՒԹՅԱՆԸ՝ այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից:

Ա՛յս ու ա՛յս է եղել մեր նախնյաց հավատքը, խիղճը և դրանից բխող ու դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը, ու ըստ այնմ՝ բարոյականության ըմբռնումները, որ դարերի ընթացքում դարձել են նաև մեր աշխարհայացքը, կյանքի ապրումը՝ միաժամանակ սնելով մեր ազգային ինքնագիտակցությունը, պարտաճանաչության զգացումը և արարքների սկզբունքը: Այժմ ևս այդ գաղափարախոսությունն ու բարոյականությունը պետք է դառնան հայոց պետականության ներքին ու արտաքին քաղաքականության և համայն պետական ու հասարակական կյանքի թե՛ հիմքը և թե՛ փարոսը: Այնժամ հայ կյանքից կոռուպցիան, որպես ազգային, պետական, հասարակական չարիք, իսպառ կվերանա, իսկ ազգի, հայրենիքի և պետության պատիվն ու վստահությունը կավելանան՝ հասնելով մարդկության բարձրագույն շարքերը…

Այնժամ, ինչպես ասված է,
կբացվեն դռներն հուսո,
և մեր երկրեն փախ կտա ձմեռ…

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԶԼՄ – ՆԵՐԻ ԿՈՌՈՒՄՊԱՑՈՒՄԸ՝ ԿՐԿՆԱԿԻ ՉԱՐԻՔ

ԶԼՄ-ների կոռումպացմամբ զգալիորեն կոռումպացվում է հասարակությունը, և խեղվում են նրա հոգեղենությունը, գաղափարականությունը, բարոյական արժեհամակարգը

ՀՈԳԵՎՈՐԻ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԴԵՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԳՐԵՍԻԱ՝ ԿՈՌՈՒՄՊԱՑՄԱՄԲ

Հայության և Հայաստանի հոգևոր, գաղափարական, բարոյական, որոնցով և մշակութային, կրթական, ավանդույթների և կենցաղավարության ազգային պաշտպանությունը խախտված է իր բնույթի ու տեսակի կոռումպացվածությամբ: Ու այս պայմաններում, այս վիճակում մենք գտնվում ենք ոչ միայն երկրի և պետության հանդեպ ագրեսիայի վտանգի, այլև մեր ազգային ու մարդկային ինքնության կորստի, այսինքն՝ որպես հայ և մարդ կենսազրկվելու վտանգի դեմ հանդիման: Եվ մեր այդ դրությունը դժվարանում է նաև նրանով, որ կոռումպացվածության անզգայացնող ազդեցությամբ միշտ չէ, որ դա տեսնում, զգում, գիտակցում և դրանից պաշտպանվելու մասին մտածում ու գործում ենք:

Եթե արդի այս վիճակի և դրա հետևանքների հեռանկարի ազգային գիտակցությունը լինի, բնականաբար, կլինի նաև այդ վիճակը փոխելու և դրա հետևանքները կասեցնելու ազգային թե՛ իրավունքի և թե՛ պարտականության ճանաչումը: Իսկ դա այնպիսի անանց տիեզերական իրավունք և պարտականություն է, որ դրա կատարումը ոչինչ չի՛ կարող և չպե՛տք է խոչընդոտի: Ավելին, բոլոր բնական և օրինական միջոցների կիրառմամբ դրա չկատարո՛ւմը, այսինքն՝ մեր ազգային ու մարդկային ինքնությանը սպառնացող վտանգի դեմ չպայքարելն ու այն չվերացնելն անարդարանալի, մահացու մեղք է, քանի որ դա ուրացում, դասալքություն և դավաճանություն կլինի՝ տգիտությամբ, փոքրոգությամբ, վախկոտությամբ և կամ այլասերմամբ...

Հետևապես, ճակատագրական նշանակություն ունեցող այս խնդրի վերաբերյալ առկա տգիտությունը, անհոգությունը, անտարբերությունը, խորթացումն ու անհավատարմությունը, որոնք առաջանում են նաև ***իր տեսակի և ծևի կոռումպացվածությամբ***՝ մեր էության իսկ պահպանման դեմ լինելով, այժմ իսկ, թեև ուշացած, հարկ է ***հնչեցնել կոռումպազերծում ազ-***

դարարող հայոց խղճի և գիտակցության «Անլռելի զանգակատունը», որպեսզի այն, ինչ մեր թշնամիները կատարեցին մեր երկրի ու ժողովրդի հանդեպ 20-րդ դարի առաջին կեսին, չկրկնվի 21-րդ դարի առաջին կեսին՝ այս անգամ առավելապես ուղղված մեր հոգու, գաղափարականության, բարոյականության, որով և մեր մշակույթի, կրթության, ավանդույթների ու կենցաղավարության դեմ, որից հետո մեծ չափով մենք կդադարենք ոչ միայն հայ, այլև մարդ լինելուց՝ անիծված ու դատապարտված թե՛ երկրային և թե՛ երկնային կորստի:

Այս կացության մեջ ովքեր կոռումպացվածությունից դեռ չեն խլացել և լսում են ահազանգը, ովքեր չեն կուրացել և տեսնում են կատարյալ վտանգը, հարկ է գտնեն միմյանց և պատվար ու բռունցք կազմեն չարի այլասերող մահացու նախահարձակման դեմ: Հարկ է կանգնեցնել, դուրս մղել նախահարձակումը, որը տեղի է ունենում մեր ժողովրդի, հատկապես մեր մատաղ սերնդի հոգիների, սրտերի ու մտքերի, որով և մեր երկրի, պետության ու Հայրապետության նվաճման և ստրկացման համար: Եվ դա կլինի բարու հաղթանակ՝ ի ազատագրում, ապահովություն ու համընդհանուր վերելք մեր ազգի, հայրենիքի, աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների և պետության: Եվ դա կլինի նաև ի հուսադրում, խրախուսում ու օգնություն մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

ՄԵՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
(կոչում և խնդիր)

ՀՀ կրթական համակարգը (այս պահին չանդրադառնալով համահայկական կրթությանը) բովանդակո՞ւմ է այն, ինչը պետք է ուսուցանելու և կրթելու աշակերտներին այնպես, որ նրանք պատրաստ լինեն կայուն, կենսունակ ու երջանիկ ընտանիք կազմելու՝ տղաները՝ որպես տղամարդ, պատասխանատու ընտանիքի ու հայրենիքի պատվի, պաշտպանության և բարեկեցության համար, իսկ աղջիկները, նույնպես պատասխանատու ընտանիքի ու հայրենիքի պատվի, պաշտպանության և բարեկեցության համար, որպես կին և մայր՝ քնքուշ, հավատավոր, համբերատար և տան կազմակերպիչ ու սյուն:

Եվ սերնդի այդպիսի կրթության մեջ համապատասխան բաժին ունե՞ն պետությունը և հասարակությունը՝ իրենց տեղեկատվական քաղաքականությամբ (ԶԼՄ-ներ, հրատարակչություններ, գիտություն, մշակույթ, արվեստ) ու նաև գրված և չգրված օրենքներով՝ մանավանդ ղեկավարների և հասարակական հայտնի դեմքերի օրինակով: Իսկ եկեղեցի՞ն... Որովհետև, եթե համապատասխան բաժին չունեն ու դրանից էլ վատ, եթե որևէ չափով ու ձևով հակառակ են գործում, ապա դա ***այլասերման ու իր բնույթի կոռումպացվածության արդյունք է:***

Այս հարցերի վերաբերյալ, հանրամատչելի կլոր սեղաններից և սեմինարներից բացի, որ պետք է կազմակերպեն Հայաստանի բազում գիտական, հասարակական ու կրոնական հաստատությունները, ի՞նչ են մտածում մեր հեռուստաընկերությունները՝ իրենց, այսպես կոչված, «շոուներին» հատկացված ժամանակից մի քիչ բաժին հանելու մասին: Թե՞ կարծում են, որ իրենց «ռեյտինգը» կընկնի, եթե ավազակաբարո և կիսապոռնո, մոլորեցնող ֆիլմերի, երգերի և պարերի փոխարեն ազգի, պետության և վերջապես ***հայ մարդու հոգևոր, գաղափարական և բարոյական կոռումպազերծ կյանքի***

պաշտպանության ու ամրապնդման հարցերին էլ եթերաժամ հատկացնեն...

Մոլորությունն իր ձևի մեջ նաև քայքայող, փչացնող կոռումպացվածություն լինելով, եթե հայությունն այն չզգա, չզգաստանա և չվերացնի, կործանման առաջ կկանգնի, որովհետև դավաճանած կլինի իր նախնյաց դավանանքին ու խորթացած իր Աստվածակերտ տոհմիկ կերպարից:

Այս խավար հեռանկարն իսպառ փարատող լույսը մեր հավատն է և դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունն ու բարոյական արժեհամակարգը: Դրանց լիարժեք ճանաչումը, ընդունումը և կյանքի ապրում դարձնելը մեզ կձերբազատեն ամեն տեսակ ունայն մոլորություններից ու կոռումպացվածությունից, ըստ այդմ և կորուստներից, քայքայումից, կործանումից ու կբարձրացնեն մարդկության վերելքի բարձրագույն աստիճանի, և ամենակարևորը՝ դա կլինի նաև ի հաճություն Աստուծո: Մի հանգամանք, որով մեր ազգը, ինչպես և յուրաքանչյուր հայ կլինեն հավիտյանս փառավորված:

«ԽՈՍՔԵՐ, ՈՐՈՆՔ ՓՈԽԵՑԻՆ ՄԻ ԱՄԲՈՂՋ ԱԶԳ, ԱՄԵՐԻԿԱՆ»

Միտքը և խոսքը, եթե գաղափարով են, գաղափար, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա, մեծ ուժ ունեն...

Վերջին տարիների ընթացքում մարտ ամսին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամենամյա տոնակատարություն է լինում ի պատիվ մի սևամորթ ամերիկացու՝ Մարտին Լյութեր Քինգ կրտսերի, ով (ինչպես սովորաբար նրա հիշատակին նվիրված հաղորդումներում է ասվում) փոխեց Ամերիկան. «Նա խոսքեր ասաց, որոնք փոխեցին մի ամբողջ ազգ, երկիր»:

Դրանք այդ 39 տարեկան սևամորթ ամերիկացի կղերականի խոսքերն էին, որոնք նա սկսեց արտասանել երեսուն տարեկանում, և նրա կյանքի վերջին՝ երեսունիններորդ տարում (ինչպես իր ծննդյան տարեդարձի ամենամյա տոնակատարության ժամանակ է հանդիսավորությամբ ասվում). «Ամերիկան այլևս այն չէ, ինչ որ էր»: Եվ դա հատկապես վերաբերում է ցեղապաշտական (ռասսայական) կոռումպացվածությամբ համակված Միացյալ Նահանգների զգալի կոռումպազերծման արդյունքում հատկապես նրա սևամորթ քաղաքացիների քաղաքացիական ազատագրմանը…

ՀՀ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ «ԽԵՐԸ»

ՀՀ հեռուստաալիքներով հաղորդվող նորաձևության համաշխարհային համբավ ունեցող մի ընկերության նույնքան համբավավոր դիզայների մամլո ասուլիսում, որպես գովեստ, որպես նախանձելի ու օրինակելի առավելություն, հնչեց հետևյալ խոսքը. «Սպիտակ շրջազգեստներով աղջիկներն ավելի սեքսուալ տեսք ունեն...»:

ՀՀ որոշ հեռուստահաղորդումներում կոռումպացվածության մի հետևողական միտում է նկատվում՝ ուղղված երիտասարդական շրջանակներին, հատկապես դեռատի աղջիկներին համոզելուն, որ սեքսուալ տեսք և շարժուձև ունենալով մոդել դառնալն ամենահաջող պատեհությունն է, որ կարող է նրանց անվանի դարձնել, հարստացնել ու երջանկացնել:

Մեր երկրում պոռնոմտայնության և պոռնոբարքերի պատվաստումն արդյոք տարբեր հզոր շրջանակների նպատակ ու խնդի՞ր է դարձել: Սակայն ինչո՞ւ: Չէ՞ որ մեր նոր սերնդի հոգեբարոյական և գաղափարական կոռումպացվածությամբ ախտահարումը կկենսազերծի, կամլացնի ու ի վերջո կխորտակի թե՛ մեր սերնդի ու մեր ազգի և թե՛ մեր երկրի ու պետության ապագան: Ու եթե այսպիսի երևույթների պատճառով այդպիսի՛ն է մեր վիճակը, և դրա ընթացքը «գլուխն առել գնում է», մի՞թե հրատապ չի դառնում այն հարցը, թե ովքե՞ր, ե՞րբ, ինչպե՞ս պետք է ***ազգային դիմադրություն կազմակերպեն հայ ժողովրդի, հայ հասարակության հոգեբարոյական և գաղափարական կոռումպազերծ, անաղարտ մթնոլորտի ու հարաբերությունների պաշտպանության, զարգացման ու ինչ-որ տեսակետից վերահաստատման համար՝ որպես ազգային անվտանգության գերակա խնդրի:***

Մի հեռուստաընկերություն էլ կիրակնօրյա իր ծրագրում հատուկ գովազդում էր, որ երկուշաբթի առավոտյան երիտասարդների համար, որպես ուսումնական ծրագիր, հաղորդվելու է շոուբիզնեսի մասին, որ սովորեն, ընդգրկվեն... Մի՞թե սա էլ

խայծ չէ հեռվից՝ կամաց-կամաց երեխաների քթից կարթ անցկացնելու համար: Բայց ինչո՞ւ է այդ հեռուստաընկերությունը խաբված. դժվար է հավատալ, որ գիտակցաբար է գործակցում...

Եթե մեկը ինչ-ինչ պատճառներով առարկի, թե ի՞նչ է եղել որ, բիզնեսը բիզնես է, ինչո՞ւ երեխաներն էլ չսովորեն շոուբիզնեսով զբաղվել, որ լավ ապրեն, դրան մեր պատասխանը կլինի.

- Մերօրյա զգալիորեն կոռումպացված շոուբիզնեսի փոխարեն հարկ է Հայաստանի հանրօգուտ գործարարության ընդարձակ դաշտո՛ւմ տեղ գրավելու ցանկություն առաջացնել, գիտելիքներ և հմտությո՛ւն սովորեցնել, այլ ոչ թե կիսապոռնո, կիսամաֆիոզ, քայքայիչ բիզնեսները գովազդել որպես «ազատական գործարարություն»: Ի՞նչ է, առաջադեմ, քաղաքակիրթ երևալու համար մե՛ր երիտասարդնե՞րն էլ, ուրույն բնույթի կոռումպացվածությամբ տարված, իրենց երեսները ներկեն, մազերը ցցեն, կամ աղջիկ ու տղա ականջ, շրթունք և էլ չգիտես ուր՝ օղակներ անցկացնեն և իրենց մատղաշ, մաքուր մարմիններն այլանդակ դաջվածքներով պղծեն... Ու նաև օգտակար ուսումնառության, ընտանիք կազմելու, հայրենիքին ծառայելու և օգտաշատ աշխատանքի մասին մտածելու և ձգտելու փոխարեն հիմարացնող, դատարկ ժամանցների, գիշերային ակումբների (նայթ կլաբների) և կազինոների մասի՞ն մտածեն ու ձգտեն... Ի՞նչ է, մոռացե՞լ ենք, թե մենք ում սերունդն ենք, և մեր նախնիք ինչպիսի կյանք ապրելով և հարկ եղած ժամանակ ինչ գին վճարելով են մեր ազգը պահպանել և մեզ մինչև 21-րդ դար հասցրել՝ դժվարին, բայց պատվավոր միջոցներով... Եվ մանավանդ, մոռացե՞լ ենք, որ մենք քրիստոնյա՛ ազգ ենք: Ո՞վ է ասել, որ քրիստոնեական կյանքը միայն մոմ վառելով է...

Այս և նման երևույթները մի՞թե հայ ծնողը, պապն ու տատը, եղբայրն ու քույրը պետք է կուլ տան, լռեն, որպեսզի արևմտամետ կամ քաղաքակիրթ, ազատական ու առաջադեմ երևան... Իսկ պետությո՞ւնը, մտավորականությո՞ւնը և մեր կղերականությո՞ւնը, եթե, իհարկե, վերջինների մեջ դեռ կան նաև

գաղափարականություն, հոգեղենություն, և խանութպան չեն դարձել: Մի՞թե նրանք ևս գլխավոր պատասխանատուները չեն քաղքենիացած և վարակահարույց հեռուստահաղորդումների, պոռնո, կիսապոռնո հանդեսների, գիշերային բթացնող ակումբների, ախտահարող կազինոների և նման բիզնեսների գոյության համար...

Ի՞նչ է, ամոթը կորցրած՝ Աստծո՞ւց էլ չենք վախենում այլևս. մեր հոգիներն ու մտքերն է՞լ են կոռումպացվել:

Ո՞վ, ովքե՞ր և ի՞նչը զգաստացնեն մեզ, որ անհատապես ու ազգովին, մեր հոգևոր ու աշխարհիկ ղեկավարության առաջնորդությամբ ու օրինակով մեր մարդկային-ազգային տոհմիկ ու Աստվածահաճո կյանքի հունի մեջ մտնենք և դարձյալ դրանով ընթանանք, ինչպես որ վայե՛լ է հայ մարդուն: Չէ՞ որ միայն այդ դեպքում մենք լիովին ու կատարելապես կկոռումպազերծվենք և վերակենսավորվելով կզորանանք, կգոյատևենք, կզարգանանք, կաճենք ու կբարգավաճենք նաև հօգուտ մարդկության և ի փառս մեր սուրբ հավատքի:

ՀԱՅՐԵՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԲԻԶՆԵՍԻ ՏՆԱՔԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՌՈՒՄՊԱՑՄԱՄԲ

Քունս չէր գալիս, հոգնեցի կարդալուց ու երբ միացրի հեռուստացույցը, հանկարծ Հայաստանի հեռուստաեթերում մի ալիքի պատահական հանդիպելիս զգացի այդ ալիքի կողմից գիտակցված կամ չգիտակցված հակամարդկային և հակազգային - հակահայկական քայքայիչ դավադրություն: Եվ դա, դժբախտաբար, հաճախ այս կամ այն չափով կարելի է տեսնել նաև այլ հեռուստաալիքներով:

Եվ սա կատարվում է ակնհայտորեն, հազարների աչքի առաջ, և մենք բոլորս մեղսակից ենք դառնում մեր լռությամբ (լռելյայն համաձայնությամբ): Լռություն, պասիվություն, որը, ինչ-որ չափի հոգևոր, գաղափարական և բարոյական կոռումպացվածության արդյունք լինելով, պատճառ է դառնում դրանց առավել խորացման և տանում է այլասերության մեղսակցության, որով և ազգի, Հայաստանի և մեր հավատքի նկատմամբ դավաճանության...

Ինչի՞ց են առաջանում այդ լռությունն ու պասիվությունը. մեր վախկոտությունի՞ց, անտարբերությունի՞ց, անճարակությունի՞ց, թե՞ մեր՝ գուցե նաև արդեն իսկ էապես կոռումպացվածությամբ այլասերվածությունից...

Խի՞ստ է հնչում: Բայց եթե արդա՛ր է գնահատականը... Երանի՛ թե սխալ լինենք, բայց եթե սխալ չե՞նք, այդ դեպքում ո՞վ հասնի մեզ, ո՞վ զգաստացնի մեզ: Որտե՞ղ գտնենք հարցերի պատասխանները և մա՛րդ դառնանք, հա՛յ մարդ, գոնե մի քիչ «թասիբով», պատվո՛վ հայ մարդ, որ անտարբեր չի՛ կարող լինել, երբ կործանիչ, զզվելի «լաքան»՝ արատը, լղոզում է մեր ազգի և յուրաքանչյուրիս պատիվը, թքում մեր հոգիների մեջ և խայտառակում է յուրաքանչյուրիս՝ մտնելով մե՛ր իսկ օջախները՝ օտարոտի, պոռնիկի ձայնով, տեսքով և շարժումներով՝ իբրև

թե «զվարճացնելու» և դեռ ավելին՝ «դաստիարակելու» մեր երեխաներին...

Այդ հաղորդման մեջ մի պահ միտք հայտնվեց, թե լավ կինը պետք է օգնի իր ամուսնուն հարստանալու... իր մարմնի գնով: Սա արդյո՞ք մեր էության իսկ կոռումպացվածության մասին չի խոսում:

Իշխանավորնե՛ր, ժողովրդի հայրե՛ր ու առաջնորդնե՛ր, ո՞ւր հասանք, դուք ո՞ւր եք: Ինչպե՞ս կարող ենք այս ազգային խայտառակությունը, թշվառությունը և կորստաբեր փորձանքը համակերպել, մարսել, ինչ է թե ժամանակակից կամ արևմտամետ երևանք: Սակայն մենք ո՞ւմ, ո՞ր կողմը պետք է լինենք: Առա՛նց խղճի խայթի, առա՛նց ամոթի ու առա՛նց Աստուծո հատուցման երկյուղի ո՞ւր կհասնենք, եթե ոչ կյանքի ճահիճը թունավոր...

ՃԻՉ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ
(Սա ի՞նչ փորձանք է)

Ո՞ւմ հաշվին պետք է դուրս գրել մեր ժողովրդին և մասնավորապես մատաղ սերնդին հեռուստահաղորդումներով մատուցված թույնը՝ իբր մշակութային կամ երիտասարդական...

Այս մեր ազգովին և պետականորեն ազատ ու անկախ վիճակում մեր հոգիներն ախտահարող, բարոյական ըմբռնումները խաթարող ու նաև քաղաքականապես ապակողմնորոշող «հեռուստափորձանքների» մասին խոսում ենք մենք մեր մեջ և ժամանակ առ ժամանակ անդրադառնում ենք նաև պարբերական մամուլով և պաշտոնապես, բայց հոգեբարոյական և գաղափարական ավերը շարունակվում է... Ինչո՞ւ, ինչպե՞ս է դա լինում: Սա մի՞թե ***ուրույն բնույթի կոռումպացվածության*** փորձանք չէ մեր ազգի, երկրի և պետության գլխին:

Շաբաթ, 19-ը ապրիլի, 2008 թ., մոտավորապես ժամը 18-ին Հանրային հեռուստատեսությամբ երաժշտական ինչ-որ ծրագիր էր՝ հայկական երգերի ինչ-որ մրցանակաբաշխության մասին: Հանկարծ լսում եմ աֆրո-ամերիկյան երաժշտություն. նայում եմ հեռուստաէկրանին. հաղորդվում է խորթ, անիմաստ, բութ երգ ու նվագ՝ ուղեկցված անամոթ, պոռնկաբարո պարային շարժումներով: Մինչ զարմացած մտածում եմ՝ ինչպե՞ս է լինում, ո՞վ, ինչո՞ւ, շոուն ընդմիջվում, և էկրանը «հարըստանում» է բախտախաղի («ղումարի») տեսարաններով: Թանկարժեք հագնվածքով, առնական արտաքինով, ինքնավստահ տղամարդիկ, գռեհիկ շպարով կանանց հիացական հայացքների ներքո, վիսկիի բաժակները սեղանին, սիգարի ծխով պարուրված, խաղում են պոկեր և իբր թե... հաղթում... Ձայնը գոչում է. «Բոլո՜ր հաղթում են»: Եվ սա տեղի է ունենում անկախ Հայաստանի Հանրապետությունում Հանրային կոչված հեռուստատեսությամբ. հարձակում հայ հոգու դեմ. բարոյական եղեռն օրը ցերեկով՝ մեր հազարավոր ազգակիցների մասամբ անտարբեր, անբան, մասամբ շփոթված ու ապուշ կտրած, մասամբ հիացած,

ոգևորված, մասամբ էլ վրդովված, զայրացած և սակայն հուսահատ հայացքի տակ:

Ի՞նչ է, տեր չկա՞: Բոլո՞ր ենք կոռումպացված կամ ընդարմացած, կուրացած և կամ անզորությունից հուսահատված: Երևի այդպես է, քանի որ վերջին ժամանակաընթացքում հայկական գիշերային հեռուստահաղորդումների մեծ մասով ո՛չ թե մեր պատմության, մեր հերոսական կերպարների ու այսօր նրանց նմանների մասին է խոսվում, կամ թեկուզ փողոցային երթևեկության կանոններն են բացատրվում (վարորդի և հետիոտնի համար)՝ նշելով, թե ինչքան կարևոր են դրանք մեր ժողովրդի անվտանգության ու նաև պատվի համար (այո՛, այո՛, նաև պատվի համար՝ նկատի ունենալով, որ մեր փողոցներով օրական անցնում են հազարավոր բարեկամ կամ ոչ բարեկամ օտարերկրացիներ), այդ և նման այլ կարևոր հարցերի մասին իրազեկելու փոխարեն գովազդվում է, թե իբր ինչ լավ բան է, պատվավոր, օգտակար, հաճելի և շահավետ է պոկեր խաղալը... Կամ կեսգիշերային՝ մեր հոգեկերտվածքին անհարիր պարերի դասեր են տալիս, էլ չասած՝ մարդասպանությունների, սադիստական և պոռնոֆիլմերի ցուցադրման մասին: Այս վիճակի վերաբերյալ մի օրինակ էլ. Մաշտոցի պողոտայում՝ Թատերական գործիչների միության շենքի առաջ, ծանուցում էր դրված մի թատերախաղի մասին. շատ լավ, բնական է, որ Հայաստանի թատերական գործիչների միության շենքի առաջ թատերախաղ է ծանուցվում, բայց ի՞նչ գովազդային մոտեցումով, ո՞ւմ հետաքրքրելու համար, երբ մեծադիր նկարում ցույց է տրված, թե ինչպես մի երիտասարդ տղամարդ սպառնում է ձեռքի սուր դանակը մի երիտասարդ աղջկա կոկորդը խրել... Այս ի՞նչ է կատարվում... Ամոթի և խղճի հետ խելքն ու ինքնապաշտպանության զգացո՞ւմն էլ է վերացել, չքացել...

Գանք դարձյալ մեր հեռուստատեսությանը. իսկ ի՞նչ կլիներ, ո՞ւմ վատություն արված կլիներ, եթե հայրենի հեռուստատեսությունը, ներառյալ «երիտասարդական» ու «երաժշտական» հորջորջված ալիքները, սեռական գրգռումներով աֆրոամերիկյան ու այլ օտար պարերի կամ նման հաղորդումների

հաշվին մի քիչ էլ հայրենի և կամ օտարերկրացի աշակերտների, ուսանողների, երիտասարդ մասնագետների՝ արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության ու այլ բնագավառներում աշխատող երիտասարդների կյանքից պատմեին, թե ինչպես են առաջադիմում, աշխատանքային հաջող ասպարեզ (կարիերա) ստեղծում, կամ ինչպես այդ ընթացքում դժվարությունների են հանդիպում և դրանք լուծում կամ չեն կարողանում լուծել, կամ ինչպես են սիրահարվում, իրենց կեսին գտնում, ընտանիք կազմում ու նաև անընդհատ սովորելով՝ ինքնազարգացմամբ ավելի առաջադիմում ու իրենց ընտանիքների և հասարակության համար ավելի պիտանի անդամ դառնում... Այս և նման թեմաներով հաղորդումների փոխարեն գովազդվում է, թե ինչպես իբր կարելի է զվարճանալ և հարստանալ և կամ կիսամերկ երջանիկ տեսքով կանանց շրջապատում՝ կազինոներում խաղալ: Իսկ թե ինչո՞ւ են այդ «երջանիկ» երևացող կանայք կազինոներում, և ո՞ր հայ մարդը կուզենա, որ իր աղջիկը, քույրը, կինը կամ մայրն այնտեղ գիշերները «երջանկանալով» փող աշխատի, որ իր ընտանիքը պահի, այդ էլ թողնենք, որ յուրաքանչյուրս մտածի: Ու մտածի նաև, թե այսպես կոչված զվարճանքներով գիշերները լուսացնելուն ինչպիսի դժբախտություններ են հետևում, ինչքան կյանքեր ու ընտանիքներ են քայքայվում, և վա՛յ այն հասարակությանը, որ այդպիսի անդամներ ունի:

Բայց այս ճշմարտության և նման փաստերի մասին գրեթե չի՞ խոսվում: Այս ճշմարտությանը հայկական հեռուստաբիզնեսը մեծ մասամբ դավադիր լռությամբ է մոտենում:

Բայց չէ՞ որ մեր հեռուստաբիզնեսում էլ հայ մարդիկ են: Եվ մի՞թե կարելի է հավասարվել այնպիսիներին, ովքեր գլխահան անող գովազդ կոչվածներով անմեղ մարդկանց, հատկապես երիտասարդներին, թմրադեղ են սպրդեցնում - վաճառում, կամ սեռական ստրկացման համար թրաֆիքինգի ճիրանները գցում, ինչ է թե փող աշխատեն... Մի՞թե սա բիզնես է, և հոգով, սրտով, մտքով խորապես կոռումպացվածություն չէ: Քանզի վա՛յ այն հայրենի տնտեսությանը, որ նման բիզնեսով պիտի

զարգանա: Վա՛յ Հայաստանի այն բյուջեին, որ նման բիզնեսի հարկերով պիտի գոյանա: Եվ վա՛յ մեր երկրին ու պետությանը, որ նման աղբյուրներից գոյացած բյուջեով պիտի զարգանա, պաշտպանվի, նոր սերնդին կրթի և նրա ապագան ապահովի: Կամ էլ մի՞թե մեր հեռուստածրագրողները և արտադրողները, պրոդյուսերները, հեռուստատեսության մենեջերները և տերերը կարծում են, թե հայրենիք ու պետություն կարելի է կայացնել, մրցունակ ու անվտանգ դարձնել, ազգ համախմբել, ժողովրդի բարեկեցությունը բարձրացնել աֆրո-ամերիկյան ու այլ կիսապոռնո երգերով ու պարերով, մարդատյաց ու գազանաբարո ֆիլմերի ներկայացումներով կամ «երիտասարդական» կոչվող պրիմիտիվ, բթացնող խաղերով ու դատարկաբանություններով... և կամ էլ գիշերները կազինոներում լուսացնելը գովազդելով... Բայց ո՞ւմ փողերով և ինչպե՞ս ձեռք բերված փողերով են կազինոներում թրև գալու այդ մարդիկ, դրա մասին հայ հեռուստաբիզնեսը հարկ չի համարում խոսել: Որովհետև այն, որպես ՁԼՄ՝ չորրորդ իշխանության մաս, մեր հասարակությունում առկա կոռուպցիայի երևույթների մասին իբր թե սրտացավորեն խոսում է, բայց իր գործունեության մեջ իր կոռումպացվածությունը չի ուզում տեսնել. ի՞նչ գնով, ի՞նչ միջոցներով են ձեռք բերվում կազինոներում վատնվող գումարները, մի՞թե հիմնականում ազնիվ ճանապարհով: Եվ այդ կասկածելի գումարներից, որպես փշրանքներ, պետությանը տրված հարկերո՞վ պիտի ֆինանսավորվեն մեր երեխաների կրթությունը, մեր ժողովրդի մշակույթը, առողջապահությունը, պաշտպանությունը...

Չե՛նք խոսում, չե՛նք խոսում, բայց ինչքա՞ն կարելի է լռել... «Հիմի է՞լ լռենք, եղբա՛ր, հիմի է՛լ...», ասում էր հայ բանաստեղծը դեռ 19-րդ դարում: Հարց է առաջանում՝ հիմա էլ մե՞նք լռենք...

Ո՞ր մեկն ասենք, ո՞ր մեկը թողնենք: Ծիծաղե՞նք, թե՞ լաց լինենք: Թե՞ պետք է ցախավելն առնել և...

Մեր այս իրականությունը եթե տեսներ մեծն Կոմիտասը, իր «Անտունի» երգում «Տո լա՜ճ տնավեր» բառերին հավանաբար ավելացներ. զարթնի՛ր, լաո՜, հիմա՛ էլ... քեզ են ուզում դարձնել «լա՜ճ տնավեր»:

ԿՈՌՈՒՊՑԻԱԾ ՃԱՇԱԿ, ՊԱՀԱՆՋ, ԱՌԱՋԱՐԿ ԵՎ ՌԵՅՏԻՆԳ

Ո՞վ է ստեղծում ճաշակը, որն առաջացնում է պահանջն ու առաջարկը, և ըստ այնմ որոշվում է հայաստանյան հեռուստաբիզնեսի ռեյտինգը:

Ումի՞ց, ՀՀ պետական կամ հասարակական ո՞ր հաստատությունից կամ հաստատություններից (որոնք պարտավոր են և պետք է այս երևույթները հսկեն կամ առնվազն դրանց մասին տեղյակ լինեն) կարելի է ստանալ նշված հարցերի պատասխանները:

Ելնելով համամարդկային, ինչպես և մեր ազգային շահերից և սկզբունքային տրամաբանությունից՝ ճաշակը ճաշակ չէ՛ այլևս, եթե մոլությամբ է կերտվում և մոլություն արտահայտում: Նույնպես և պահանջը, եթե մոլությամբ առաջացած կախվածության հետևանք է, այլևս օրինական պահանջ չէ, քանի որ այդ դեպքում դադարում է բնական լինելուց, հետևապես և բնականոն-օրինական պահանջ լինելուց: Ինչպես օրինակ՝ պահանջը թմրադեղի, բախտախաղի («ղումարի»), գուցե և ծխախոտի ու ամեն ինչի, որ մոլություն, կախվածություն է առաջացնում...

Դրանից հետո ով այդ ճաշակը և պահանջը վկայակոչելով արդարացնում է դրանց բավարարումը՝ առաջարկը, գիտակցաբար կամ ոչ (բայց ավելի շատ գիտակցաբար), հանցագործություն է կատարում:

Օրինակ՝ Միացյալ Նահանգներում տեսել ենք ֆիլմերում, կարդացել ենք ընդհանո՛ւր տեղեկատվական և մասնագիտական մամուլում, պատահել է նաև, որ կյանքում տեսել, վկա՛ ենք եղել ճաշակ, պահանջ, ռեյտինգ և ըստ այնմ բավարարման (առաջարկման - մատակարարման) հետևյալ երևույթին:

Դպրոցներում, մարզահրապարակներում, պարասրահներում, դեռատի տղաներով ու աղջիկներով լի այլ վայրերում մոտենում են մոդայիկ հագնվածքով, խիստ ընկերական, այսպես կոչված, «լավ տղաների հյութեղ» բառապաշարով խոսող՝ մեծ

մասամբ տղաներ, որոնք, հետաքրքիր խոսակցության բռնվելով, առաջարկում են «ընկերական» ծխել մարիխուանա կամ նման այլ մի «թեթև» թմրեցուցիչ:

Այդ «այցելուները» հաջորդ օրերին արդեն որպես «ծանոթ-ընկերներ» են ներկայանում՝ «շռայլորեն նվիրելով» նրանց կյանքը «գերազանց» դարձնող, իսկական կյանքը «հասկացնող», կյանքի իսկակա՛ն «հաճույք» պարգևող թմրամիջոցներին: Ու երբ կարճ ժամանակի ընթացքում այդ «ճաշակը» ձևավորվում է միամիտ զոհերի մեջ և սովորություն դառնալով՝ պահանջարկ է առաջացնում, այնժամ «ծանոթ-ընկերները», դարձյալ «հոգատարությամբ», առաջարկում-մատակարարում են այդ հաճույքի միջոցները՝ այս անգամ «մատչելի» գներով:

Որոշ ժամանակ անց «իսկական կյանքի հաճույքը» հասկացողների պահանջարկի մեծացմանը համապատասխան մեծանում է պահանջն այս անգամ ավելի թունդ, քայքայող թմրադեղերի, դրանց քանակների, և զուգահեռաբար ավելանում է նաև պահանջվող գումարը:

Եվ մի որոշ ժամանակ հետո ուրիշ ուսումնական հաստատություններում, մարզահրապարակներում, պարասրահներում, գիշերային ակումբներում կամ թաղամասերում այդ ճաշակն ու պահանջարկն առաջացնում և տարածում են արդեն նախկին զոհերը, որոնց սովորությունն արդեն մոլություն, կախվածություն է դարձել, ու դրա բավարարման համար հավելյալ եկամտի կարիք է զգացվում: Այդպիսով, զոհերը դառնում են մոլորեցնողներ, վարժեցնողներ՝ ճաշակ ու պահանջարկ առաջացնող գործակալներ, երբեմն նաև մանր, տեղական մատակարարողներ (distributors), (ռեյտինգ բարձրացնողներ):

Սկզբնական շրջանում զոհերի կողմից, ըստ իրենց ճաշակի և պահանջների բավարարման, ծախսերը համեմատաբար շատ մեծ չեն, գները «մատչելի» են, և ծնողների կողմից սննդի, տրանսպորտի, տարբեր պիտույքների և որոշ զվարճանքների համար տրվող գումարները բավարարում են: Այնուհետև սկսվում են պարտքով վերցված գումարներով վճարումները՝ նոր ճաշակի պահանջների բավարարման ծախսերի համար:

Իսկ դրանից հետո, երբ ճաշակն ու պահանջն ավելանում են, դրանց բավարարման ծախսերը փակելու համար գործադրվում են տարբեր խորամանկություններով կիսահանցագործ միջոցներ, որից հետո՝ գողություն, դավաճանություն և ընդհուպ՝ մարմնավաճառություն և սպանություն...

Կարծես թե էլ տեղ չմնաց մարդկային թշվառության ու անկման համար... Եվ այդ մատղաշների (թեև հաճախ իրենք իրենց շատ հասուն, դատող, ճարպիկ, խելոք և մանավանդ ճաշակով ու կյանքը լա՛վ հասկացող են համարում, ավելի լավ հասկացող, քան իրենց իբր հնա՛ճ, հետամնաց ծնողները և տարբեր ձանձրալի բարոյախոսները) կյանքը փաստորեն կոտրվեց, ճզմվեց, խայտառակվեց ու կորավ: Կորավ՝ առանց մի օգտակար բան կամ գոնե գեղեցիկ հիշատակ թողնելու՝ փոխարենը թողնելով միայն հարազատների ցավն ու կսկիծը, ազգի և մարդկության կրած կորուստը և մեղանչումը:

* * *

ՀՀ հեռուստաընկերությունների գոնե ղեկավարները, որոնք, ըստ երևույթին, մեծ մասամբ դինամիկ ու եթե ոչ լրիվ բիզնեսմեն, բայց բիզնեսմեն դառնալու բուռն ձգտումով երիտասարդներ են, բնականաբար, ունեն իրենց սեփական հայացքները, սակայն, «բիզնեսը բիզնես է» հասկացողությունը, ըստ երևույթին, բոլորի համար ընդհանուր սկզբունք է: Եվ բիզնես անելու, ավելի շատ փող շինելու համար (make more money) գտնում են, որ բացի վերևներում կապեր ունենալուց, հարկ է նաև բարձրացնել իրենց հեռուստաընկերության ռեյտինգը: Մի պահ ընդունե՞նք այս դատողությունը, սակայն հարց, որի համար կարելի է ի՞նչ անել: Սկսել «ճաշա՞կ» ձևավորել, այսինքն՝ զանգվածային հետաքրքրությո՞ւն ձևավորել և դրանով զանգվածային պահա՞նջ առաջացնել: Բայց պահանջ, որով նորաթուխ բիզնեսմենների ցանկալի ռեյտինգն ապահովելուց հետո դրա պահպանման համար հասարակությանը, հատկապես 8-18, 28 տարեկաններին ու ընդհանրապե՛ս բոլորին ի՞նչ մատուցվի: Իսկ

դրանով ռեյտինգը բավարարելուց հետո այդ երեխաներն ու երիտասարդներն ի՞նչ վիճակում ու մակարդակում կգտնվեն: Արդյո՞ք գաղափարապաշտ, բարոյական արժեքներով տոգորված, կիրթ, գրագետ, հայրենասեր, մարդասեր հայ քաղաքացիների՝ զինվորականների, մասնագետների, արհեստավորների, ձեռներեցների և ընտանիք կազմող հայրերի ու մայրերի վիճակում կլինեն, թե՞ հավատազուրկ, գաղափարազուրկ, բարոյազուրկ, տգետ, անգրագետ, սերը «նայթ կլաբներում» փնտրող կոսմոպոլիտ և հայոց բանակից խուսափելը՝ արժանիք, իսկ հայ զինվորին ծաղրելը ճաշակ համարող անխիղճ, կրիմինալ պիժոններ կլինեն:

ՀՀ որոշ հեռուստաընկերությունն՝ր, հեռուստաալիքն՝ր և որոշ պարբերական մամո՛ւլ (մասնավորապես հանդեսներ), շատ կարևոր է զգույշ լինել, զգաստանա՛լ, հատկապես նրանք, որ գիտակցաբար թե անգիտակցաբար, «պիժոնական» ճաշակի ձևավորմամբ մեծացող պահանջարկի բավարարումով են իրենց ռեյտինգը մեծացնելու անփառունակ կոռումպացված ճանապարհով գնում... ***Սակայն շատ կարևոր է մտածե՛ն նաև, թե ով է տալու իրե՛նց ռեյտինգի գնահատականը և ինչ բնութագրությամբ: Առայժմ այդ բնութագիրը, ցավոք սրտի, ըստ երևույթին, մեծ մասամբ արտահայտում է հոգեկան, գաղափարական և բարոյական կոռումպացվածությամբ ինչ-որ տեղ հակամարդկային և հակազգային երևույթներ:*** Հետևապես քանի դեռ ուշ չէ, հարկ է այնպես անել, որ այդպես բնութագրվողները, ցավոք սրտի, ականատես չլինեն այդ երևույթների ազգաքանդ ու պետականակործան արդյունքներին:

Սակայն ում որ վերաբերում է, պետք է զգաստանան, դարձի՛ գան, որպեսզի հետո հարկ չլինի ամաչել հայ մանուկներից, ներառյալ սեփական երեխաներից, դատապարտվել պատմությունից և պատժվել Աստծուց:

Չի՛ կարելի, հանցանք ու մե՛ղք է ռեյտինգ բարձրացնել, փող շահել ու ընտանիք պահել հոգեպես, գաղափարապես և բարոյապես կոռումպացված հեռուստաբիզնեսով, ի հաշիվ

անմեղ, միամիտ, դյուրահավատ երեխաների, պատանիների ու աղջիկների և իրենց կյանքի կողմնորոշումը կորցրած տարեցների հոգևոր, գաղափարական և բարոյական ախտահարման:

Չի՛ կարելի այդ անել՝ մատակարարելով, առաջարկելով տեղեկատվական, գեղարվեստական և ժամանցի «թմրադեղ»՝ դրա բոլոր հակամարդկային, հակազգային և հակապետական հետևանքներով:

Չի՛ կարելի այդ անել՝ չարաշահելով Աստվածաբնույթ ազատությունը, որ մենք վայելում ենք, շնորհիվ մեր բազում սերունդների և մեր ժամանակակիցների բազում տարիների տառապալից պայքարի և զոհաբերության:

Չի՛ կարելի մեր վայելած խոսքի, մամուլի, տեղեկատվության ու այլ ազատությունները, չարակամորեն վահան դարձնելով, փաստորեն, այդ ազատությունների դեմ գործել՝ ախտահարելով ու գերելով մեր մատաղ սերնդի մտքերը, սրտերը և ապագան:

Պետք է զգո՛ւյշ լինել, ազգը և մարդկությունը չեն ների նյութապաշտության հետևանք այդ կոռումպացվածությունը, բայց ամենասարսափելին, որ Աստվա՛ծ չի ների:

Այդ կորստաբեր ընթացքի մեջ եղողներին հարկ է մեղա՛գալ, ուղղե՛լ ընթացքը, ձերբազատվել նյութապաշտության արդյունք դույզն իսկ չափով կոռումպացվածությունից, որով այդ դեպքում իրապե՛ս կհարստանան, քանի որ այդպիսով նեռումի արժանանալով՝ իրակա՛ն երջանկություն կունենան: Հարկ է անհապաղ փոխվել ի սեր իրենց իսկ կյանքի ու իրենց և բոլոր երեխաների, ի սեր մեր ազգի, երկրի և պետության ու ի սեր նաև համայն մարդկության ու ամենակարևորը՝ ի սեր մեր Արարիչ Հոր:

Հարկ է այդ անել, այդպիսինը լինել, քանի դեռ ուշ չէ...

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՎԱՏԱՎՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԽԱՎ

Հայ ազգային կրիտիկական զանգվածը՝ կոռուպցիայի կասեցման և կոռումպազերծ, կայուն հասարակության ձևավորման առանցք

1-ը փետրվարի, 2009 թ.,
ժամը 8:00

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ ՎԵՐԱՓՈԽՄԱՄԲ

- Հայ հասարակության վերափոխմամբ ազգային վերակազմակերպումն ու վերահաստատումն ինչո՞ւ է պետք, որովհետև հայությունն, իր հասարակությամբ հանդերձ, հնացե՞լ է:

- Ո՛չ: Ոչ թե որովհետև հնացել է, այլ որովհետև «նորոգվել» է այնքան, որ մեծ չափով աղավաղվել է նրա էությունը, իսկական ինքնությունը ու զգալիորեն այլասերվել, կոռումպացվել է: Որովհետև հայ հասարակությունը (բացի որոշ հատվածների խավերից, որոնք գուցե այնքան էլ չեն ազդվել, աղավաղվել և չեն շարունակում հարաճունորեն այլասերվել) մեծ չափով կորցրել է իր մարդկային-ազգային ոչ միայն դիմագիծը, այլև ինքնությունը, ներառյալ՝ հոգևոր, գաղափարական և բարոյական ինքնությունը, որը, Աստվածակերտ ու Աստվածահաճո լինելով, համապատասխանում էր Աստուծո՝ մարդկության զարգացման ծրագրի կատարմանը: Հայ ազգի ստվար մասը կամա, սակայն արդար լինելու համար պետք է ասել, մեծ մասամբ ակամա, տարվելով կեղծ ու խարդախ գաղափարներով, բարոյական հասկացություններով ու ըստ այնմ՝ կենսաձևերով, այլասերվելով, կոռումպացվելով աստիճանաբար անհավատարիմ է դարձել իր էությանը՝ իր ազգային գոյությունն ապահովող հավատամքին, գաղափարին և բարոյական արժեհամակարգին: Եվ դրա արդյունքում անհավատարիմ է եղել նաև իր ազգային պարտականություններին, որոնց մեջ ոչ վերջին հերթին է պաշտպանելը, պահպանելն ու զարգացնելը Մայր Հայաստանը: Եվ հենց սրա համար է հարկավոր վերափոխվելով ի վիճակի լինել թոթափելու թե՛ հայ հավատամքի, գաղափարականության և բարոյականության վրա ներկայիս նստած օտարածին թափոնը (որ խախտելով ազգի կողմնացույցը՝ ապակողմնորոշել

է նրան դեպի թունավոր ճահճուտ) և թե՛ ի վիճակի լինել ջարդելու, թոթափելու ազգի սիրտն ու միտքը գերած և հարաճունորեն ամրացող (օտար և խորթ, չարի) շղթաները:

Կյանքը հոգևոր տեսանկյունով դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ հայ ազգային ինքնության ներկայիս վիճակը հարկ է ա՛յդ իրականության ըմբռնումով վերլուծել, գնահատել և համեմատել հայ ազգի առաջ կանգնած խնդիրների կատարման համար պահանջված կարողության հետ՝ բացահայտելու, հասկանալու համար մեր ինքնության շեղման չափը, դրա հետևանքներն ու այն, ինչ մեզանից (որպես անհատ ու ժողովուրդ) պահանջվում է կատարել մեր ազգային ինքնության, հետևապես և գոյության առողջացման, վերականգնման, զորացման, որով և մեր ազգի ***բնականոն*** գոյատևման (հարատև զարգացում ու վերելք) համար:

Հայ հասարակության վերափոխմամբ ազգի վերակազմակերպման ու վերահաստատման հարցով լուրջ և հետևողականորեն անհապաղ գործելու անհրաժեշտությունը բխում է պատմական և բնական այն փաստից, որ հայ հասարակությունը գոյացել և զարգացել է աշխարհագրական անսովոր բարդ պայմաններում՝ մասնատված բարձրաբերձ, դժվարանց լեռնաշղթաներով: Բայց սա եթե մի պահ անբարենպաստ համարենք, ապա դա ընդամենը չարյաց մի շատ փոքր մասն է, մանավանդ որ այդ բարդությունը միաժամանակ նպաստում էր նրա պաշտպանությանը: Չարյաց մեծ մասն առաջացավ, երբ Հայաստանը քաղաքական, վարչատնտեսական և մշակութային մասնատման ենթարկվեց՝ 387 թ. երկարատև բաժանմամբ Բյուզանդիայի և Պարսկաստանի (իսկ այնուհետև Թուրքիայի ու Ռուսաստանի) միջև: Եվ չարյաց մեծ մասը շարունակեց ավելանալ, երբ Հայաստանը դարերի ընթացքում ենթարկվեց տարբեր բարբարոս ասպատակությունների, ավերումների, հարստահարությունների, որոնք, շարունակ տկարացնելով ազգի կարողությունը, ի վերջո իսպառ վերացրին նաև ազգի ինչ-որ չափով անկախ ու ինքնավար մնացած և մասամբ միայն ազգային օազիսները… Մնաց հոգևոր իշխանությունը, որը նույնպես, աստիճանաբար

տկարանալով, չկարողացավ պահպանել իր բնական գոյության սահմանները, և առավել չարյաց վիճակը շարունակվեց: Այնուհետև կործանարար համընդհանուր չարիքը եղավ, երբ մեր պետականազուրկ ու ազատազուրկ պայմաններում դաժան տիրապետողների կողմից հետևողականորեն կատարվող կեղեքումներին, կողոպուտներին և ջարդերին հետևեցին ցեղասպանական հարվածը և դրա հետևանքները՝ Հայաստանի մեծ մասի հայաթափումը և աշխարհասփռումը՝ ենթակա օտար և շատ անգամ խորթ միջավայրերի, գաղափարների, մշակույթների, բարքերի և լեզվամտածողության ազդեցությանը: Այս պայմաններում, գնալով ավելի ու ավելի անօգնական վիճակում, հարաճունորեն տկարացավ նաև հայ ազգի հոգեբարոյական և գաղափարական վարակամերժ կարողությունը (իմունիտետը) բոլոր քայքայիչ չարիքների, այդ թվում և կոռուպցիայի հանդեպ:

Այժմ էլ՝ 21-րդ դարասկզբին, ազգի վիճակը ձևով տարբեր, սակայն բովանդակությամբ գրեթե նույն պայմաններում՝ նրա արտերկրյա հատվածը՝ Սփյուռքը, մնում է իր ինքնությանը մեծ մասամբ անհաղորդ և իր ինքնության պահպանման համար անկազմակերպ ու գրեթե անկառավարելի վիճակում: Իսկ ինչ վերաբերում է հայության հայրենիք Հայաստանում ապրող հատվածին, ապա այն, նոր ստեղծված պետականությամբ հանդերձ (դեռ ոչ լրիվ կենսունակ ու բնականոն չափով ինքնաբավ վիճակում), նույնպես ենթակա է օտար, խորթ ու արդե՛ն ակնհայտ վնասակար ազդեցությունների: Եվ դրանք զգացվում են բացի հայության ճյուղային հատվածներում՝ գաղութներում, նաև հայաստանյան հատվածում ու արմատներում՝ մեր հոգևոր, գաղափարական և բարոյական կերտվածքում: Եվ սա մի հանգամանք է, որը բացասաբար է անդրադառնում նաև հայ կրթության, մշակույթի, լեզվամտածողության, կենցաղավարության ու հասարակական հարաբերությունների վրա:

Նշյալ ու հարակից բնագավառներն անմիջականորեն ու արագ դիտարկելիս իսկ ակնհայտ է դառնում, որ դրանց ներկա վիճակը համարյա բոլորովին չի համապատասխանում մեր

ազգային-տոհմիկ այն որակին, որն անհրաժեշտ է հաջողությամբ կատարելու հատկապես ճակատագրական նշանակությամբ մեր ռազմավարական խնդիրները.

- ազգային և պետական՝ նախևառաջ հոգևոր, գաղափարական և բարոյական կենսունակության գոյապահպանումը (պաշտպանությունը, անվտանգությունը),
- Հայ Ազգային Գաղափարախոսության հիման վրա ազգային (համահայկական) կառավարման կատարելագործումը, որպես հույժ անհրաժեշտ նախապայման, ազգի ու հայրենիք Հայաստանի անվտանգության բազմակողմանի զարգացման, հզորացման ու համընդհանուր վերելքի համար:

Ուրեմն՝ ազգային և պետական առաջնային նպատակ է կատարել վերոնշյալ ճակատագրական նշանակությամբ ռազմավարական խնդիրը:

ՀԱՅՔ հաստատությունն այս հետևությունն ընդունում է որպես ազգային առաջադրանք և գործ, որոնք (ընթացիկ այլ աշխատանքներին զուգահեռ) ձեռնարկում է կատարել իր փորձառության հիման վրա ու Աստուծո օգնությամբ՝ միաժամանակ ակնկալելով համապատասխան ազգային հատկություններով կողմերի մասնակցությունը և կամ աջակցությունը:

24-ը ապրիլի, 2009 թ., Դեր-Զոր, Սիրիա

ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԵԿ ՃԱԿԱՏԱԳԻՐ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝ ԿՈՌՈՒՄՊԱԶԵՐԾՄԱՄԲ

Հայ իրականությունում, թեև ուշացումով, ըստ երևույթին, անհրաժեշտ է պարզել, թե հայերի ապրած վայրից և սոցիալական վիճակից անկախ՝ հայ անհատի և հայ հավաքականության համար ինչ է նշանակում մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ազգային պետություն (կամ ազգային կենտրոնական կառավարում) և մեկ ճակատագիր՝ համայն հայության համար հասկացությունը, ու ինչպիսի՞ն է դրա ըմբռնումը:

Այդ հասկացության ճիշտ ըմբռնումը, ըստ երևույթին, կբացահայտի դրանք կյանքի կոչելու անհրաժեշտությունը: Հետևապես ազգային էական հարց կառաջանա, թե ի՞նչ պետք է անել, որպեսզի այն կյանքի կոչվի, և դրա համար ի՞նչ է պահանջվում հայ ղեկավարությունից, մտավորականությունից, յուրաքանչյուր հայից: Ի՞նչ խանգարող հանգամանքներ կան, որոնք պետք է վերացնել նախևառաջ մեր ազգային և դրանով՝ յուրաքանչյուրիս կյանքից, որպեսզի ազատվելով ու զերծ մնալով ամեն տեսակ կոռումպացված գաղափարներից, մտայնություններից, բարքերից, սովորություններից ու ապրելաձևից՝ ճիշտ ճանաչենք, ամրապնդենք և կյանքի իսկական ապրում դարձնենք մեր՝

- քրիստոնեական հավատքը,
- մարդկային-ազգային գաղափարը՝ մեզ համար՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը,
- մարդկային-ազգային բարոյականությունը՝ մեզ համար՝ հայ տոհմիկ բարոյական արժեհամակարգը,
- ազգային ինքնագիտակցությունը՝ ըստ ազգային գաղափարախոսության և բարոյականության:

Ու այդ բոլորով՝ բացարձակապես կոռումպազերծ մտայ-

նությամբ, սովորություններով, արարքներով ու կենցաղավարությամբ՝ բարձրագույն մակարդակով իրագործենք՝

- հայության միջև հաղորդակցությունը և հարաբերությունը,
- ազգային միասնությունը,
- ազգային հոգեբարոյական վարակամերժ կարողության (իմունիտետ) վերականգնումը:

Իսկ այս բոլորով իրագործել հայկազուն ազգի, մայր Հայաստանի և կոռումպացվածության նշույլն անգամ չունեցող հայոց սուրբ պետության վերելքը մարդկության բարձրագույն աստիճանի:

27-ը հուլիսի, 2008թ.

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԿՅԱՆՔ Է

Հայոց ազգային միասնությունը մեր նախնյաց դարավոր բաղձանքն էր, եկեղեցիներում «Տեր ողորմյա» աղոթք-երգեցողության մեջ Աստծուց խնդրվում է. «Եվ տուր ազգիս հայոց սեր, միություն»: Ու այդ դարավոր բաղձանքն այսօր էլ մնացել է, միայն թե, ըստ երևույթին, ավելի թույլ հույսով և նվազ հետևողականությամբ, սակայն դրա կենսական կարևորությունը մնում է անփոփոխ: Ավելին, մեր օրերում, երբ ազգն առավել մասնատված, բաժանված է նաև օվկիանոսներով և քաղաքական, գաղափարական, մշակութային, կրթական, տնտեսական, կենցաղային ու այլ խորացող տարբերություններով, հայ ազգի էական նպատակների, ծրագրերի, քաղաքականության և դրանց կենսագործման համար միջոցների, կարողության և ներուժի համադրված կիրառությունը (որն էական է մեր գոյատևման համար) հնարավոր է ***ազգային միասնությամբ:***

Եվ այդ միասնության կենսական անհրաժեշտությունը թեև ինքնըստինքյան հասկանալի է, բայց չի իրագործվում, չի ստացվում: Ինչո՞ւ և ի՞նչ պետք է անել՝ ապահովելու համար ազգային գործնական ու հարատևորեն հաստատուն միասնություն:

Պատասխանը փորձենք գտնել հարցադրումներով.

- Իսկ մեզ ի՞նչն է միացնում կամ ի՞նչն է, որ պետք է միացնի:

- Ազգին ծառայե՞լը: Ու նաև փոխադարձ հարգա՞նքը, սե՞րը և դրանցով վստահությո՞ւնը:

Ճշմարիտ է, որ այդ նախադրյալների անհրաժեշտությունը վեր է ամեն տարակույսից, բայց դրանք բավարար չեն, կա մի էական ընդհանրական և հիմնական նախադրյալ, որ առանց դրա չեն ստեղծվի կամ չեն գործի վերոնշյալ նախադրյալները. դա մեր հավատքն է, որն ի զորու է մեզ միացնել ու ապահովել ***ազգային գործնական ու հարատև միասնությամբ:***

Սակայն ճշմարիտ է նաև այն, որ բոլոր պայմաններում մեր ազգի միասնությունը ցեմենտող հավատքը մենք այլևս նույն զորությամբ չենք զգում, մենք տկարացել ենք հավատքի և հատկապես հավատքի գործերի մեջ: Ու ահա թե ինչու կորցրել ենք ու չենք գտնում մեր այնքա՜ն էական ու ցանկալի ազգային միասնությունը, որ և այժմ մեզ անկարող է դարձրել բնականոն կերպով ու չափով ծառայել մեր ազգին, հայրենիքին և պետությանը: Եվ դա Հայ Ազգային Գաղափարախոսության նշանաբանն է. ***հայը, իր Աստվածաստեղծ գոյությամբ, ծառայում է Աստծուն՝ ծառայելով հայ ազգին, Հայաստանին ու հայոց պետականությանը:*** Ծառայություն՝ անկաշառ կամք ու հարատև հավատարմություն հայ ազգային միասնության համար:

Ուրեմն՝ մեզ միացնում է Աստծուն՝ Ալֆային և Օմեգային, ծառայությունը՝ ծառայելով հայությանը՝ ազգին և պետականությանը: Եթե սա հասկանանք, ընդունենք և հաստատակամորեն կատարենք, էապես շատ բան կփոխվի մեր անձնական ու ազգային կյանքում, և ապահովությունն ու վերելքը կդառնան մշտատև իրականություն…

- Իսկ ինչպե՞ս ծառայել ազգին:

- Ծառայելով Հայաստանին:

- Իսկ ինչպե՞ս ծառայել Հայաստանին:

- Ծառայելով հայոց պետությանը:

- Իսկ ինչպե՞ս ծառայել հայոց պետությանը:

- Յուրաքանչյուր հայի ազնվացմամբ՝ ազնվացնելով հայ ազգը, հայ կյանքը:

- Ինչպե՞ս կարող են ազնվանալ յուրաքանչյուր հայ, հայ ազգը և հայ կյանքը:

- Սրբությամբ, սրբանալով, որը գործընթաց է, իսկ դրա առաջնային միջոցը ճշմարտության ճանաչումն է:

- Ո՞րն է ճշմարտությունը, ի՞նչ է ճշմարտությունը:

Առաջին, մեծագույն ու էական, կենսակա՛ն ճշմարտությունը (և սա ասում եմ որպես միամգամայն և բոլորովին աշխարհիկ միջավայրում, պայմաններում ապրած, կրթված,

հարաբերված անձ) ***Հիսուսի՝ որպես Քրիստո՛սի, Աստվածորդու ճանաչումն է: Եվ Նրա Աստվածության ճանաչումով՝ Նրա պատգամների կատարումը՝ կյանքի ամբողջ ընթացքում, բոլոր պայմաններում և բոլոր հանգրվաններում՝ հոգու հավերժական հատուցման հավատքով:***

Երբ սա տեղի է ունենում անհատի, ազգի, հասարակության մեջ, առաջանում է շնորհն Աստվածային, որը բացում է հոգու տեսողությունը, լսողությունը, ըստ այնմ՝ տրամաբանությունը, որով և հասկանալի, ընդունելի ու կիրառելի են դառնում Ավետարանի իմաստությունը, գիտությունը և խաչի խորհուրդն ու զորությունը:

Եվ մարդը, մեր դեպքում՝ հայ մարդը դառնում է ա՛յլ հայ մարդ. նրա հողեղեն գոյության վրա տիրող ու թելադրող է դառնում իր հոգին՝ տալով նրա երկրային գոյությանը հոգեղենություն, որով և նրա տկարությունը դարձնում զորություն, նրա ժամանակավոր լինելը՝ մշտնջենական և նրա ունայնությունը՝ էություն: Սա վերաբերում է նաև համայն հայությանը՝ որպես ազգային ամբողջություն:

- Այս ճշմարտության ճանաչման, հաստատման և կիրառման համար մեզ ի՞նչ է պետք:

- Պետք է իրացնել մեր ազգի, մեր նախնյաց, մեր մեծերի՝ մեզ կտակած ***սուրբ ժառանգությունը,*** իսկ դրա մեջ նախ՝ նրանց կերպարի ու ապրած կյանքի օրինակի և մեզ ուղղված պատգամների կենսագործումը: Մեր ***սուրբ ժառանգությունը*** 21-րդ դարասկզբում իրացնելու համար, իր հերթին, պետք է մեր մեջ վերահաստատենք 5-րդ դարից հայ կյանքում արտահայտված Թարգմանչաց շարժման ոգին, հավատքը, գաղափարականությունը, բարոյականությունը, գիտակցությունը և դրանցով՝ նվիրումն ու պատասխանատվության զգացումը: Եվ սրանց, որպես սրբություն, լույս և զորություն, պսակը սերն ու հավատարմությունն է մեր հավատքին, ազգին ու հայրենիք Հայաստանին՝ դրսևորելով դարերի ընթացքում Թարգմանչաց ուղով ընթացած մեր հայրերի կամքը և հարատև ու անընկրկուն հետևողականությունը:

Եվ սա լինելով փաստորեն ազգային վերածնունդ՝ շատ կարևոր է, որ այն համակի մեր ազգի բոլոր խավերին և մանավանդ նոր սերնդին՝ 21-րդ դարին համապատասխան ձևակերպմամբ ու տեսքով, սակայն պահելով հայկականության տոհմիկ էության բովանդակությունը:

Համայն հայությունը, հատկապես նոր սերունդը պետք է պատշաճորեն իրազեկվի ու էապես համակվի այս վերածննդի առաջացրած նորոգ հայկականությամբ, որը և հայագիտության առանցքն է: Հայագիտություն, որի մասին Հայոց պետությունը, Հայրապետությունը, մտավորականությունը և յուրաքանչյուր հայ իր չափով պետք է կատարելապես իրազեկվի ու իրազեկի, ուսուցանի հատկապես նոր սերնդին: Եվ դա կլինի հայության հոգեբարոյական և գաղափարական նաև վարակամերժ կարողության (իմունիտետ) մեծացում, զորացում:

Եվ ովքեր կոչված ու պարտավորված լինելով Աստուծո ծառայության՝ ծառայելով ազգին, և նրանց հոգու ուղղակի պարտքն է նաև ծառայել հայ պետությանը, Հայրապետությանը և հայրենիք Հայաստանին, պետք է կատարեն նաև այդ իրազեկման (Հայ Ազգային Իրազեկում (ՀԱԻ) պարտականությունը: Այդ նշանակում է ապահովել ազգային տեղեկատվությունը նոր թափով, որակով և պատասխանատվությամբ ՀԱԻ-ի իրականացումը տարբեր ձևաչափերով, ծավալով և մակարդակներով:

Հայ ազգն իր մեջ, պետությունն իր մեջ և յուրաքանչյուր հայ մարդն իր մեջ պետք է զարգացնեն Աստուծո՝ մարդուն պարգևած սաղմնային իմաստությունը՝ նաև կրթությամբ, արվեստով, գրականությամբ ու մշակույթով, բայց նախևառաջ հավատքով՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի ու Խաչի հավատքով: Ու այնժամ է, որ կառաջանա կոռումպազերծ մտայնություն, արարք, վարք ու ըստ այնմ՝ մշակույթ, կրթություն, ազգային-հասարակական հարաբերություններ և կենցաղավարություն:

Ու ա՛յս է ճանապարհը՝ միակ և ուղիղ ճանապարհը՝ ստանալու այդպիսի՛ իմաստություն, առանց որի չկա բարեբեր գիտություն, ստեղծագործություն, հետևապես և չկան հարատև ապահովություն, զարգացում ու առաջընթաց: Բայց այդ

«չկա»-ն, չլինելը դեռ չարյաց փոքրագույնն են, առանց հավատքի աղբյուրից առաջացած իմաստության չկան մարդկության, ներառյալ՝ հայության մեջ միասնություն, ներդաշնակություն, խաղաղություն և կոռումպազերծ կյանք, որի առկայությամբ՝

Աստված կգոհանա և կօգնի ու կպաշտպանի մեզ:

Մեր նախնյաց հոգիները կցնծան և կօրհնեն մեզ:

Եվ մեր երեխաները, թոռները և սերունդները շնորհակալ կլինեն մեզ, բայց ամենակարևորը՝ կհետևեն մեր օրինակին՝ նույնն անելով իրենց հետնորդ սերունդների համար՝ հոգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Մայիս, 2009 թ.

ՀԱՐՑ, ՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ԳՈՐԾ

Ստորև բերված հարցերը եթե նույնիսկ այս կամ այն ձևով դրված են մինչև հիմա, այնուամենայնիվ, թող ավելորդ չհամարվի դարձյալ հարցադրել, թե՝

- Հայ մարդու, հայության, Հայաստանի, հայ պետականության և պետության բարոյական արժեհամակարգը ո՞րն է: Կա՞ այն: Եթե չկա կամ մոռացված է, ի՞նչ պետք է անել:

- Պետք է հայ ազգի համապատասխան հաստատությունների ղեկավարներն անհապաղ ձեռնարկեն դրա մշակումը կամ վերականգնումը:

- Իսկ եթե կա՛ հայ ազգի բարոյական արժեհամակարգ, և պե՛տք է հավատալ, որ կա՛, այդ դեպքում արդյո՞ք չի առաջանում երկու էական հարց:

Առաջին. ինչքանո՞վ է այն ծանոթ հային, հայությանը և ինչքանո՞վ է կիրառվում Հայաստանում ու ամենուր, որտեղ կա հայ կյանք:

Երկրորդ. եթե ներկայումս, այնուամենայնիվ, կա հայ ազգի բարոյական արժեհամակարգ, ապա այն իսկապե՞ս ազգային է, այսինքն՝ տոհմի՞կ հայկական է: Չէ՞ որ երկար ժամանակ տարբեր ազդեցությունների պատճառով հայ կյանքում շատ բան է աղավաղված, այլասերված, օտարացած, որով և դադարած է լիարժեքորեն հայ-ազգային լինելուց՝ սկսած հատկապես 19-րդ դարից մինչև 21-րդ դարասկզբի մեր օրերը: Այդ դեպքում ի՞նչ պետք է անել:

- Պե՛տք է, անհրաժե՛շտ է, հրամայակա՛ն է ունենալ Հայ Ազգային Պետական Բարոյական Նոր Արժեհամակարգ: Նոր, սակայն հիմնված մեր տոհմիկ արժեհամակարգի վրա, որի համար պետք է վերականգնել հիմքը, որն ստեղծված, հաստատված է մեր ազգի սկզբնավորումից ի վեր մեր նախահոր՝ Հայկի հավատամքով, սրբագործված ու ամրապնդված է 1700 տարի առաջ մեր քրիստոնեացման լուսավորությամբ, որը դարերի

ընթացքում արտահայտվել է այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Ու այդ ակունքի և հիմքի վրա էական պահանջ է վերականգնել հայության բարոյականության՝ բարոյական արժեքների նորոգ հաստատված համակարգը: Եվ դրանով կառաջանա նաև ազգային էական հաջորդ վերականգնողական խնդիրը, այն, որ այդ արժեհամակարգով արտահայտվեն հայ ազգային մշակույթը, գիտությունը, հայեցի կրթությունը և հայ պետական-հասարակական, ընկերային, ընտանեկան և ընկերական հարաբերությունները:

Այդ առումով առաջացած ժամանակակից գործնական հարցը կլինի այն, թե՝

- ովքե՞ր են և ո՞ւր են մեր բարոյական արժեհամակարգի վերականգնման ճարտարապետները, ճարտարագետները, որ պետք է մշակեն, պատրաստեն նախագիծը: Ովքե՞ր են և ո՞ւր են կառուցողները:

Գուցե հարց է նաև, թե կա՞, մնացե՞լ է ու եթե այո՛, ապա որտե՞ղ են քարերն ու անկյունաքարերը, այսինքն՝ հավատավոր հարազատ հայորդիները՝ Հայկի ու Վարդանանց ժառանգորդները, և ո՞ւր են նրանք, որ պիտի փող հնչեցնեն աշխարհի բոլոր ծագերում՝ ի մի բերելու, հայթայթելու և մատակարարելու այդ «շինանյութը»:

Այդ բոլորն ու դեռ ամեն ինչ, որ պետք են ***հայ ազգի կենսունակ հարատևման և հարատև վերելքի համար,*** կլինեն, կկատարվեն մեր հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության ու բարոյական արժեհամակարգի վերականգնմամբ և վերակիրառմամբ, որով և հայի ու հայության մարդկային-ազգային կյանքի բոլոր բնագավառների, հանգրվանների ***իսպառ կոռումպագերծմամբ:***

Եվ դա հայ ազգի, Հայաստան երկրի, հայոց պետականության և սերունդների երանելի, Աստվածահաճո այն վիճակն է, որից կօգտվի նաև մարդկությունը, իսկ մեր նախնյաց, մեր մեծերի, սրբերի ու նահատակների հոգիները կցնծան, ու ամենակարևորը, էականը՝ Աստված կգոհանա…

3-ը մարտի, 2009թ., ժամը 6:30

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ազգային կառուցապատման ճարտարապետությունը եթե հարազատ է հայոց քրիստոնեական հավատքին, դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարին՝ Հայ Ազգային Գաղափարախոսությանը և բարոյական արժեհամակարգին, ապա այդ ճարտարապետությամբ, դրա համապատասխան արհեստաբանությամբ (տեխնոլոգիա) ու աշխատանքի կազմակերպմամբ և կառավարմամբ կերտված ***Հայոց պետականությունը և պետությունը կլինեն լուսավոր (արդար), գեղեցիկ և կենսունակ, որով կլինեն նաև միշտ զորեղ, պաշտպանված, մրցունակ, արդյունաբեր ու բարգավաճ:***

Հայության ազգային պետականության և պետության կառույցի կարիքը, պահանջը, անհրաժեշտությունը կա, և եթե դա բավականին ճանաչված, ընդունված է, ապա նույնը պետք է լինի նաև Հայ ազգային կառուցապատման ճարտարապետության, արհեստաբանության ու դրանք կիրառողների պարագայում:

Ո՞ր տեսությամբ, ո՞ր հաստատությունում պիտի մշակվեն, ստեղծվեն ազգային ճարտարապետությունը, արհեստաբանությունը և պատրաստվեն դրանք կիրառողները:

Ե՞րբ, ո՞ւր, ո՞վ, ովքե՞ր պիտի կազմակերպեն այս կարիքի և պահանջի բավարարման գործընթացն ու կառավարեն այն՝ անհրաժեշտ արդյունքի ստացման համար:

Ինչպիսի՞ նյութից, ի՞նչ միջոցներով, ո՞ր մեխանիզմներով, ինչպիսի՞ և ի՞նչ որակի աշխատուժով պիտի իրագործվի Հայ Ազգային Կառուցապատումը: Որտե՞ղ են գտնվում, ինչպե՞ս կարելի է ձեռք բերել, ովքե՞ր են ի վիճակի հայթայթել դրանք: Ինչպիսի՞ և որտեղի՞ց եկող օգնությամբ:

Ահա Հայ Ազգային Ազգակերտ ու Պետականակերտ այսօրվա ու վաղվա պահանջի բավարարման խ ն դ ի ր ը:

Խնդիր, որի լուծումը՝ կատարումը, նախևառաջ սկսվում է հայ ազգի և մասնավորապես նրա հայրենաբնակ հատվածի գոնե որոշակի խավերի հոգևոր, գաղափարական և բարոյական բացարձակ կոռումպազերծմամբ, ըստ այնմ ձեռք բերված հմտությամբ և դրանց համապատասխան կարգապահ, կազմակերպված ու համադրված կատարողական մշակույթով:

Միաժամանակ, այդ ամբողջի իրականացման համար հայության ու յուրաքանչյուր հայի կողմից ազգային անհրաժեշտ գիտակցությունը, նվիրվածությունը, պարտաճանաչությունը և հետևողական պատրաստականությունն ու պատրաստակամությունը նույնպես ապահովվում են, նախևառաջ, ազգային հոգեղենության, գաղափարականության, բարոյականության, նաև պետական ու հասարակական մտածելակերպի և հարաբերությունների բացարձակ կոռումպազերծմամբ, որը որոշակի ջանքերով կտարածվի համայն հայության վրա:

Եվ եթե սա է ճիշտը, և հայ ազգային կոռումպազերծ միջավայրի ապահովումն ազգային - պետական ճակատագրական նշանակությամբ խնդիր է, ապա հարկ է ստեղծել այդ խնդրի կատարման տեսությունը, քաղաքականությունը, ծրագիրը, մեխանիզմները, միջոցները և կազմակերպական կառավարումը՝ համալրված այն հայորդիներով, որոնք ի վիճակի են կյանքի կոչելու այդ բոլորը: Աստուծո օգնությամբ:

* * *

Հայերս պատրաստվում ենք և պատրաստում ենք նաև մեր զավակներին արհեստավարժ մասնագետներ դառնալ, դիրքեր գրավել, պաշտոններ վարել օրենսդիր, գործադիր, գործարար ու այլ բնագավառներում: Դա լավ է, սակայն ավելի լավ ու նաև պարտավորեցնող է ձգտել պատրաստվելու և պատրաստելու

կատարյալ մարդ-հայ: Այնպիսի՛ հայ մարդ, որ իր դաստիարակությամբ ու հատկություններով կարողանում է պաշտպանված լինել ամեն տեսակ կոռումպացնող փորձություններից (որոնք շատ են աշխարհում և քառատրոփ արշավում են նաև մեր ազգային կյանքում) և տոգորված լինել ազգային պարտաճանաչությամբ, ինքնաբուխ պատրաստականությամբ և կարգապահ պատրաստակամությամբ: Իսկ դրա նախապայմանը հոգու պարտքի զգացողությունն ու ճանաչումն է, որի համար, սակայն, նախևառաջ պետք է հավատք ունենալ, հավատալ, որ հոգի կա, և այն այս աշխարհից չէ, Աստվածատուր է ու հավերժական...

Ուրեմն՝ բարի գործ, բարի արդյունք և ***իրական կյանք*** ունենալու համար հարկ է կոռումպազերծ մարդ-հայ և հայ-մարդ լինել ***Հ Ա Վ Ա Տ Ք Ո Վ:***

Եվ դա սովորեցնում է Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և խաչով:

30-ը նոյեմբերի, 2008 թ., ժամը 9:40

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայ ազգի, հայրենիք Հայաստանի և պետականության ներկայիս վիճակում և զարգացումների ընթացքում անվտանգության, պաշտպանության և հարաճուն բարգավաճման առաջնային, հիմնական նախապայմանը՝ Հայոց Հոգևոր Վերածննդի Ռազմավարության (ՀՀՎՌ) մշակումը և կիրառումը, հայոց պետականության և Հայրապետության առաջնային գործն է, որն ուղղակիորեն վերաբերում է համայն հայությանը՝ անկախ տարիքից, սեռից, սոցիալական վիճակից ու ապրելու վայրից:

ՀՀՎՌ ստեղծման բաղադրամասերը լինելով՝

- Հայաստանյայց եկեղեցվո հավատամքը,
- Հայ Ազգային Գաղափարախոսությունը,
- հայ ազգային բարոյական արժեհամակարգը,
- հայ ազգային տոհմիկ կերպարը,
- հայ ազգային ինքնագիտակցությունը,
- հայ մարդկային խիղճը և ըստ այդմ՝

-հայի ինքնաբուխ պարտաճանաչությունն ու ինքնակառավարվող պատրաստակամությունը, դրանց համապատասխան մակարդակի լիարժեք վերականգնումով՝ 21-րդ դարասկզբին տեղի կունենա հայոց հոգևոր վերածնունդը՝ հայ կյանքի ապահով վերելքն ամեն ինչում:

Այդ յոթ բաղադրամասերի, որոնցով կազմված են հայ ազգի (ինչպես յուրաքանչյուր ազգի) էությունը և կարողությունը, հիման վրա և դրանցով պետք է կազմվեն և կենսագործվեն մեր ժողովրդի գոյության ապահովման, զարգացման, առաջընթացի և վերելքի նպատակները, ծրագրերը և դրանց իրագործման ջանքերը:

Հայոց հավատքով, գաղափարախոսությամբ, բարոյականությամբ և ըստ այնմ՝ խղճով, ազգային ինքնագիտակցությամբ

ու ինքնաբուխ պարտաճանաչությամբ դարերի ընթացքում ամենաանբարենպաստ պայմաններում իսկ հայ մարդն զգաց, ուզեց, ձգտեց և կարողացավ պաշտպանել իր էության ու ինքնության գոյությունը և նույնիսկ ժամանակ առ ժամանակ կարողացավ զարգացնել այն և փոխանցել սերունդներին:

Մեր նախնիք այնքա՛ն էին լուսավորյալ, իմաստուն և գիտուն, որ հասկանում էին, թե հայը հավատքով և խղճով, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ ազգային ինքնագիտակցությամբ և ինքնաբուխ պարտաճանաչության և պատրաստակամության զգացումով միայն կարող է հավատարիմ լինել իր մարդկային-ազգային կոչումին և տեր լինել նաև այդ կոչումից բխող պարտականությանը և, ըստ այնմ, տեղի չտալ որևէ ձևի կոռումպացման փորձության առաջ: Նրանք հասկանում էին, որ դրանով կկարողանան կատարել իրենց պարտականությունը Աստուծո և ազգի հանդեպ, որպեսզի կյանք ունենան:

Եվ նրանք կատարեցին իրենց պարտքը. վկա՝ մեր այսօրվա լինելը, վկա՝ հայ կյանքի թեկուզև վիրավոր գոյությունը և վկա՝ մեր՝ շատերիս անկոտրում կամքը՝ պաշտպանելու, զարգացնելու և բարձրացնելու մեր ազգը, մեր երկիրը և մեր պետությունը: Իսկ որպեսզի հայերը համակվեն այդ կամքով և վճռականությամբ, մարդկային պարզ տրամաբանությունն իսկ թելադրում է, որ համայն հայությամբ լավագույնս իրազեկ լինենք մեր նախնյաց հոգևոր, մտավոր ու բարոյական ժառանգությանը, ապրենք ըստ այնմ, որով և լիովին կկոռումպազերծվի մեր կյանքը՝ ի վիճակի դարձնելով մեզ լավագույնս կատարելու մեր պարտքը՝ հանդեպ մեր ազգի, երկրի, պետության և մեր երեխաների, թոռների ու սերունդների:

Եվ դա կլինի նաև հօգուտ մարդկության և ի փառս մեր հավատքի, Աստուծո:

21-րդ դարի ըմբռնումների համաձայն՝ Հայոց Հոգևոր Վերածննդի Ռազմավարության մշակումը (կամ ավելի ճիշտ՝ վերամշակումը) թեև հայոց Հայրապետության ուղղակի խնդիրն է, սակայն այն, ներկայիս իրերի դրության համաձայն, նաև Հա-

յաստանի Հանրապետության Ազգային անվտանգության խորհրդի առաջնային խնդիրն է: Այդ խնդիրը նպատակահարմար է կատարել ազգային համապատասխան հաստատությունների և պետական գերատեսչությունների ***համապատասխան աստիճանի*** մասնակցությամբ և համայն հայության հետ (տեխնիկապես հնարավոր) խորհրդակցությամբ:

Այս հույժ էական նշանակության խնդրի հաջողության համար կարևոր նախապայմաններ են ՀՀ նախագահի գլխավորությամբ ու հսկողությամբ՝

- խնդրի հստակեցումը,
- խնդրի կատարման ծրագրումը,
- խնդրի և դրա կատարման նշանակության մասին հայությանն իրազեկելը, բացատրելը, մեկնաբանելը և այդ խնդրի կատարումն ապահովելը ***համայն հայության առավելագույն գիտակից ու կոռումպազերծ (ազնիվ, պարտաճանաչ, հետևողական ու առանց կեղծ, արհեստական պատճառաբանությունների) մասնակցությամբ:***

18-ը դեկտեմբերի, 2008 թ.

ՀԱՅ ԱՍՏՎԱԾԱՊԱՏՎԵՐ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հայ Աստվածապատվեր ծրագիրը (ՀԱԾ) հայկական գլխավոր ծրագիրը պետք է լինի՝ բաղկացած ազգային բազմաթիվ ծրագրերից: ՀԱԾ-ից մասնավորապես բխում են ազգային հաղորդակցության, իրազեկման, փոխադարձ հասկացողության, ինչպես նաև ուժերի, միջոցների, հնարավորությունների հաշվառման, համադրման և կիրառման աշխատանքային ծրագրերը, դրանց մեջ նպատակահարմար է անդրադառնալ հայության արածներին, չարածներին և նրան, թե մենք ազգովին ու անհատապես ինչ պետք է անենք անպայմա՛ն և ինչ չպե՛տք է անենք անպայման: Եվ այդ բոլորը՝ ինչո՞ւ...

ՀԱԾ-ից բխող մի առանձին ծրագիր էլ լավ կլինի, որ շարունակաբար արծարծի մեր մեծերի, մեր սրբերի հավատքի, կերպարի և մտածելակերպի լույսի ներքո վարքը և մեզ՝ սերունդներիս նրանց պատգամած խորհուրդները, դրանց՝ որպես սրբազան, կենսական և դարմանող գանձ-ժառանգություն ազգային իրազեկումը և հայության կողմից օգտագործումը կրթական, մշակութային ու ազգային կյանքի մնացած բոլոր բնագավառներում:

Հատկանշական է, որ նշված ծրագրերը կապված, շաղախված են միմյանց հետ, որովհետև մեր մեծերի, սրբերի պատգամներն օրգանապես առնչվում են հայությանն ու յուրաքանչյուր հայի անելիքների հետ, որ հոգեպես պարտավոր է անպայմա՛ն անել, և չանելիքների հետ, որ նո՛ւյնպես հոգեպես պարտավոր է անպայմա՛ն չանել:

Խնդրենք մեր Տեր Աստծուն, որ ուժ, զորություն ու իմաստություն տա մեզ, որպեսզի կարողանա՛նք այս և սրանց նման ծրագրերը կյանքի կոչել, իրագործել:

Եվ որովհետև երկար ժամանակից ի վեր և բավականին

զանգվածաբար մենք՝ հայերս, արել ենք բաներ, որ ոչ մի դեպքում չպետք էր անել և միաժամանակ չենք արել բաներ, որ անպայման պետք էր անել:

Մի իրականություն, մի վիճակ, որը, դժբախտաբար, գոյացել է մեր՝ հատկապես հոգևոր, գաղափարական, բարոյական, մտավոր ու ըստ այնմ ներհասարակական, ներիշխանական և հասարակություն – իշխանություն հարաբերությունների զգալիորեն կոռումպացվածության հետևանքով:

ՀԱԾ-ի շրջանակում ազգային կոռումպազերծումը ևս, որպես խնդիր, պե՛տք է և կարո՛ղ է ունենալ իրազեկող, դաստիարակող, կողմնորոշող կրթական ու քաղաքական գործունեության ուղղվածություն:

11-ը հունվարի, 2009 թ., ժամը 7:20

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՑՎԱԾՔԻ, ԸՆԹԱՑՔԻ ՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ

Հայության և Հայաստանի հասարակության արդի կեցվածքը, շատ կարևոր հարցերին մոտեցումները և ընթացքը, ըստ երևույթին, մեծ մասամբ ազգայինից հեռացած, այլևս լիարժեք ազգային չեն և չեն համապատասխանում՝

- հայ ազգային կենսական շահերին,
- հայ ազգի ապահով, բարգավաճ ու արժանապատիվ ներկայի և ապագայի կերտման այսօրյա պահանջներին ու ամենացավալին՝ չեն համապատասխանում
- Աստուծո ուղիներին, Նրա կամքին և պատգամներին:

Ինչո՞ւ. որովհետև զգալիորեն կոռումպացված, այլասերված են… Երբ քեզ տրված է էականը՝ լուսավորումը, որպեսզի ճանաչես, հաղորդվես ու հավատաս Աստվածորդուն՝ քո Փրկչին, ու ըստ այնմ ճանաչես ու կիրառես քո ազգային գաղափարն ու բարոյականությունը, այսինքն՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունն ու բարոյական արժեհամակարգը, ճանաչես ու կիրառես նաև մեր նախնյաց՝ մեր ազգի մեծերի սուրբ ժառանգությունը՝ նրանց կերպարը, վարքն ու պատգամները, հետևապես և քո կյանքն ապրելու կանոնները՝ անելիքներն ու չանելիքները, և այդ բոլորը չե՛ս գործադրում, կյանքի ապրում չե՛ս դարձնում, նշանակում է՝ դու հոգեպես, գաղափարապես, բարոյապես և մտայնությամբ գտնվում ես կոռումպացման մեջ՝ ուրանալով, վատնելով և կամ չարաշահելով քեզ տրված, պատգամված արժեքները:

Այս կորստաբեր և կործանարար իրականության մեջ հայ ազգը, Հայաստանի հասարակությունը և հայոց պետականությունը պե՛տք է և պարտավո՛ր են անհապաղ փոխվել՝ փոխելով նաև իրենց կեցվածքը, մոտեցումները, ընթացքը, վարքը և ապահովել դրանց իսպառ կոռումպազերծումը:

Այդ անելը շատ դժվար է, անկարելիի չափ դժվար, և դա ճիշտ է, բայց ավելի ճիշտ է այն, որ Աստծու համար անկարելի բան չկա, հետևապես Աստծուն ապավինելով, Նրան խնդրելով ու Նրա օգնությունը հայցելով՝ կարելի՛ է փոխվել, Աստվածապատվեր կոռումպազերծ կյանքով ապրելով ունենալ վերելք ու կայուն, հաստատուն ապագա, այսինքն՝ Կյանք՝ նաև հանձինս մեր զավակների, թոռների և նրանց սերունդների՝ ամեն ինչում ապահով, կենսունակ, ազատ ու անկախ հայրենիք Հայաստանում:

Ինչպե՞ս սկսել, ո՞վ, ովքե՞ր, ե՞րբ ու ինչպիսի՞ կազմակերպական կառավարման կառույցի մշակված ծրագրերով ու հրահանգավորումներով փոխվել: Այս հարցերը բավականին բարդ են, որով և լուրջ ջանքեր են պահանջվում դրանց պատասխանները գտնելու համար: Սակայն դրանից ավելի կարևորն ու դժվարը նախևառաջ այն է, թե ինչպիսի անաղարտ՝ տոհմիկ հայկական հավատքով, գաղափարով, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ մեծ հետևողականությամբ, հարատևությամբ և կարգապահությամբ այդ պատասխանները պիտի գտնվեն: Հետևապես, այս պայմանները, պահանջներն ու հեռանկարը դիմագրավող մեր ազգի հոգևոր և աշխարհիկ պատասխանատուներից պահանջվում է ոչ միայն համապատասխան հմտություն, այլև հոգևոր հիմքի վրա խղճի և գիտակցության պատասխանատվություն, որը հուսանք, որ կա, իսկ եթե չկա, այն անհապաղ կստեղծվի հավատքով: Ու այնժամ, ինչպես «Կիլիկիա» երգում է ասված, «ձմեռը» (կոռումպացումը) հայ ազգից ու Հայաստանից «փախ կտա», և «քաղցրիկ օրերը կգան»՝ ի փրկություն և ի վերելք հայ ազգի, հօգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

28-ը հունվարի, 2009 թ.՝
Հայոց բանակի ստեղծման 17-րդ տարեդարձի օրը

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐ

21-րդ դարի շեմին հայ իրականության մեջ Հայ ազգային կրիտիկական զանգվածի (ՀԱԿԶ) կազմավորումը և նրա՝ ազգային կառույցի (հասարակական կազմակերպության) վերածումը, եթե բովանդակությամբ համապատասխանի իր կոչումին, պարտականությանն ու դերին, ապա դրա արդյունքում հայ ազգը կենթարկվի հոգևոր, գաղափարական, բարոյական և կազմակերպական էական վերափոխման: Վերափոխում, որը ճակատագրական նշանակությամբ կենսականորեն անհրաժեշտ է, և որով հայ ազգը կոռումպազերծվելով ի զորու կլինի ազգովին և պետականորեն հասնելու իր ազգային իղձերի կատարմանը, այդ թվում՝ կատարյալ ինքնապաշտպանության, բազմաբնույթ ու բազմակողմանի զարգացման ու ամենաբարձր մակարդակի բարգավաճման:

Հայ ազգային կրիտիկական զանգվածի կազմավորման և կազմակերպության վերածելու

- Գաղափարը, մղումն ու ձգտումն ազնվությունն է,

- Նպատակը՝ ազնվացումը,

- Գործը՝ ազնվանալով ազնվացնելը՝ «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» («Ազնվացի՛ր, ազնվացո՛ւր») նպատակային կարգախոսի իրականացմամբ, այսինքն՝ զորացի՛ր և զորացրո՛ւ ազգդ, հայրենիքդ ու պետությունդ, հօգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Հայ ազգային կրիտիկական զանգվածը կարող է այս երանելի կարողությանն ու վիճակին հասնել՝ ճանաչելով, ընդունելով և կյանքում կիրառելով Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի

վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

Ուրեմն՝ հայոց հավատքով ՀԱԳ-ի ճանաչումն ինքնըստինքյան ազնվություն է, ընդունումը՝ ազնվանալ, և կիրառումը՝ ազնվացնել:

Իսկ ազգի ազնվացումը (ազնվությամբ ու ազնվացմամբ), լինելով Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով, դրանով շղթան փակվում է, ու ամեն ինչ ներառվում է. ամեն ինչ, որ ի զորու է ***կյանք*** պարգևել հայ ազգին: Կյանք՝ հոգևոր, գաղափարական և բարոյական՝ հիմնական նախադրյալներն ազգային անվտանգության, պաշտպանվածության, ազատության, զարգացման և բարգավաճման՝ մարդկային կոռումպազերծ կեցության Աստվածահաճո ամենաբարձր չափանիշներով ու մակարդակով:

Եվ դրա համար շնորհակալություն ու փա՜ռք Աստծուն:

Հուլիս, 2000թ., ժամը 7:30

ՀԱՅ ԱԶԳԱՄԵՏ ՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՄԵՏ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Այս երկար վերնագրին եթե հակիրճ անդրադառնանք, ապա խոսքը կգնա այն մասին, որ հեղափոխության պես մի շարժում է պետք մեր՝ հայերիս սրտերում, ընկալումներում, կեցվածքի, վերաբերմունքի, գնահատականների ու դատողությունների մեջ, ինչպես նաև նպատակների ծրագրման և դրանց իրագործման ուղիների ու միջոցների մեջ, որպեսզի դրանք մաքրելով ու ազնվացնելով՝ կոռումպացման նշույլ իսկ չմնա դրանց մեջ:

Շարժման՝

- ***խորհրդանիշ*** կարո՛ղ է և պե՛տք է լինեն խաչն ու Մասիսը,

- կանոնադրության ***հիմքը***՝ Հիսուս Քրիստոսի Ս. Ավետարանը՝ Նոր Կտակարանը,

- վերջնական ***նպատակը***՝ Հայաստանի դառնալը Աստծու թագավորության դաշնակից, հաղորդակից ու գործակից երկրի վրա, հայության դառնալը Աստուծո թագավորության (քաղաքականությանը հետևող) հարազատ ազգ երկրի վրա, որի անձեռակերտ անձնագրերով հայը, առանց արտոնագրի՝ վիզայի, կկարողանա մուտք գործել Աստուծո Հավիտենական Արքայություն:

Հայոց զարթոնքի և զգաստացման տեսանկյունից ազգային և պետական էական անհրաժեշտություն է հնարավորինս շուտ ձեռնարկել մեր մարդկային ու ազգային գոյության նկատմամբ մեր կեցվածքի և վերաբերմունքի վերարժևորումն ու վերագնահատումը, որոշելու համար, թե արդյո՞ք մոլորված չենք: Ու նաև որոշելու, թե արդյոք տեսնո՞ւմ, զգո՞ւմ և հասկանո՞ւմ ենք, թե ո՞վ էինք ու ի՞նչ դարձանք, ինչպիսի՞ն ենք

այժմ և ո՞ւր ենք գնում այս ընթացքով՝ ըստ մեր Սուրբ Հայրերի դավանանքի պատգամների ու ըստ մեր որդիների և թոռների ազգային ապագայի կանխատեսման: Կունենա՞ն արդյոք նրանք հայրենիք ու հայրական տուն, թե՞ կդառնան թափառական աշխարհի քառուղիներում: Կլինեն նրանք առողջ ու կենսունա՞կ, թե՞ իմունազերծ, անզոր ու խոցելի ու ենթակա ամեն տեսակի վարակով այլասերման:

Մռայլ ու ցավալի կանխատեսումներով են այս հարցադրումնե՞րը: Այո՛, սակայն այդ մռայլ և ցավալի կանխատեսումները այստեղ հարց ու խնդիր են դարձված այն մտահոգությամբ և նպատակով, որ դրանք որևէ դեպքում ու պարագայում իրականությո՛ւն չդառնան: Օրինակ՝ ինչպես թշնամու (կորստաբեր) մահաբեր ոտնձգությունները կանխելու կամ կասեցնելու համար ճակատամարտից առաջ թշնամու հարձակումների դեմ պաշտպանական դիրքեր են կառուցվում…

Իսկ ազգային օրհասական ամենամեծ վտանգներն իսկ դիմագրավելու, կասեցնելու կամ շեղելու առաջին ու ամենազորեղ պաշտպանական պայմանը ազգի, հասարակության և պետության հոգևոր, գաղափարական ու բարոյական անաղարտությունը և կարգապահ կազմակերպվածության ունակությունն է: Սրանց գոյության արդյունքում մեր ազգային բոլոր հարթություններում մեր եսը միշտ հաղթելով՝ անպայմա՛ն հաղթանակներով դուրս կգանք մեր ինքնության, մեր ազգային շահերի և մեր ազգային հույսերի ու հույզերի իրականացման դեմ կանգնող բոլոր տեսակի անօրեն ուժերի, ապօրինի արգելքների ու ամեն տեսակ կոռումպացման ռիսկերի հանդեպ: Ու այս և բոլոր այլ բնագավառների ու տեսակների մեր հաղթանակներն ապահովված կլինեն, որովհետև մենք, ամեն ինչից բացի նաև ու ամենակարևորը՝ հոգեպես, գաղափարապես, բարոյապես և մեր կենցաղով կլինենք կոռումպազերծ՝ առաջին հերթին Աստվածավախ, Աստվածասեր ու պարկեշտ:

Եվ Աստված կգոհանա, մեր ազգը կփառավորվի, իսկ երկիր Հայաստանը կծաղկի որպես կենսատու օրհնյալ պետություն ու երկիր-բուրաստան՝ մեզ, մեր սերունդների ու նաև համայն մարդկության համար:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅՒ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՂԵՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ու ըստ այնմ՝ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՅՄԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԺԽՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ

21- ը դեկտեմբերի, 2008թ., ժամը 10:10

ԽԻՂՃ, ԳԱՂԱՓԱՐ ԵՎ ԿՈՌՈՒՄՊԱԶԵՐԾ ԱՊՐՈՒՄ

Մարդու մեջ խիղճը՝ որպես սիրո բաղկացուցիչ, գերակա է ամեն մի զգացումից և զորեղ է բոլոր զգացումներից, քանզի սիրով խիղճն Աստվածապարգև զգացում է՝ կապված բարության, կարեկցության և գթության հետ:

Ով խիղճ ունի, ունի բարու կողմնորոշում և վահան՝ պաշտպանություն չարի փորձությունների դեմ...

Առանց խղճի մարդը չոր ճյուղ է, անպտուղ՝ ենթակա դյուրությամբ այրվելու չարի փորձություններից:

Եթե խիղճ ունես, դու պաշտպանված ես եսասիրության, փառամոլության ու ագահության կոռումպացնող ախտից՝ նյութապաշտության վարակից...

Եթե Աստված քեզ խիղճ տվեց (իսկ խիղճը միայն Աստված է տալիս), դու զորեղ ես հոգեբարոյական իմունիտետով, այսինքն՝ վարակամերժ կարողությամբ, դրա բոլո՛ր հետևանքներով... Եվ երբե՛ք չխաբվես, առավե՛լ ևս չընկճվես նյութապաշտական թյուրըմբռնումից, թե խիղճը տկարացնում է մարդուն, քանի որ նրան դարձնում է բարի, կարեկից, գթասիրտ, համեստ և... զիջող:

Այդ ճի՛շտ է, որ խիղճը մարդուն դարձնում է այդպիսին և դեռ ավելին. դարձնում է արդարամիտ, օրինապահ, հավատարիմ... Բայց ո՞վ ասաց, թե դրանք տկարացնող հատկանիշներ են և տկարացնում են մարդուն: Ընդհակառա՛կը, դրանք ուժի և կարողության հատկանիշներ են, որ կոռումպազերծում և հզորացնում են մարդուն մինչև Սուրբ Ասպետություն, այն, ինչ որ, ափսո՜ս (մի պահ թողնենք այլ ազգերին մի կողմ), շա՜տ է պակասում մեր ազգի մեջ, ու առա՛նց այդ կենսամասնիկի ազգը չի՛ կարող Ազգ դառնալ. Ազգ կենսունակ, մրցունակ, պաշտպանունակ, բարգավաճ և օգտակար նաև մարդկությանը: Իսկ հայ ազգն այդպիսի՛ Ազգ պետք է դառնա և կարո՛ղ է դառնալ. ոչ ոք

թող չասի, թե ինչպե՞ս կարող է դա լինել, հապա մեր աշխարհագրական դի՞րքը, չա՞փը, քանա՞կը... Այդ բոլորը կան, և հենց դրա՛ համար էլ հարկ է, որ պահենք, պահպանենք մեր ազգի մեջ ու նաև յուրաքանչյուրիս մեջ եղած Աստվածաշնորհ խիղճը և կյանքում կիրառենք այն միշտ, ամենուր, ամեն ինչում՝ հավատարմորեն, հետևողականո՛րեն ու ասպետորեն, Աստուծո հավատքով:

Եվ մենք մեր մտայնությամբ ու մեր կյանքի ամեն տեսակ հարաբերություններով կդառնանք կոռումպազերծ ազգ: Ազգ՝ ապահով, բարեբեր, բարեկեցիկ ու երանելի:

Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) ճանաչումը, ընդունումն ու կյանքում կիրառումը հիմնական պայմաններն են այդպիսի ազգ դառնալու, որովհետև Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված ՀԱԳ-ը և նույն ծագումն ունեցող խիղճը եղբայր և քույր են ու երաշխիք հայության կյանքի բացարձակ կոռումպազերծության՝ իր բոլոր բարի հետևանքներով:

* * *

Մարդու խիղճ, ազգի խիղճ, մարդկության խիղճ:

Եվ այդ խիղճը, գաղափարի և գիտակցության հետ քույր ու եղբայր լինելով հանդերձ, այնուամենայնիվ, ինչպե՞ս հասկանալ դրա էությունը, ի՞նչ է խիղճը: Օրինակ, եթե խիղճը տկար է, հիվանդ է կա՛մ ոչ հասուն է, ինչպե՞ս կարելի է հասունացնել, ինչպե՞ս կարելի է առողջացնել կամ զորացնել: Ո՞րն է դեղը, միջոցը խղճի բուժման, զորացման: Արդյո՞ք կարելի է խիղճը «վիրահատել», իսկ ովքե՞ր են խղճի թերապևտները, վիրաբույժները, ո՞ր դպրոցում են սովորել, ի՞նչ են սովորել: Իսկ եթե նրանք չկան, և խիղճը տհաս է կամ խղճի հիվանդությունը, տկարությունը տարածված են հասարակության մեջ, այդ դեպքում ի՞նչ տեղի կունենա. ինչպիսի՞ ախտաճանաչմամբ՝ ինչպիսի՞ն կլինեն հասարակության վիճակը, նրա ապագան: Ու ի՞նչ պետք է անել, եթե նման առողջական վիճակը մե՛ր ազգի և մե՛ր երկրի մեջ է, մե՛ր պետության մեջ է...

Ի՞նչ կլինի, եթե, օրինակ, բժշկի խիղճը հիվանդ է կամ տկար է և չի՝ գործում, կամ ուսուցչի խիղճը, եթե այդ վիճակում է, կամ ոստիկանի, դատավորի, երեսփոխանի, նախարարի, կղերականի կամ զինվորականի, էլ չասած՝ նախագահի, կաթողիկոսի, ազգի աշխարհիկ, հոգևոր ու մտավորական ղեկավարների խղճի մասին, եթե տկար, հիվանդ և կամ անզգա վիճակում է և չի գործում: Այդ դեպքում ինչպիսի՞ն կլինեն մեր ազգի վիճակը, մրցունակությունը, դիմացկունությունը տարբեր թշնամիների և բարեկամների կողմից մեզ նետվող մարտահրավերների դեպքում: Ինչպիսի՞ն կլինեն մեր երկիրը, պետականությունը, նոր սերունդը և մեր ապագան: Արդյո՞ք անձի, ազգի, պետության կոռումպացումը նաև անխղճությունից չի առաջանում և, վերջին հաշվով, դրա հետևանքը չէ:

Այսօր կիրակի է՝ ժամը 11:00: Հեռուստացույցիս էկրանին տեսնում եմ Հայաստանի մայրաքաղաքում հաղորդվող մի հայկական հեռուստաալիքի «լիր pop» ծրագիրը, և ի՞նչ. մի հայ աղջիկ, հայոց լեզվով, ոգևորված իր հաղորդածի թվացյալ կարևորությունից, պատմում է ամերիկյան, շատերի համոզմամբ սանձարձակ ու այլասերված երգչուհի, դերասանուհի Մադոնայի ամուսնալուծման և դրա հետ կապված նրա ստանալիք գումարների չափի մասին: Եվ ես ինձ հարց տվեցի. ի՞նչ է ուզում ասել, ի՞նչ է սովորեցնում այդ հաղորդումը մեր հասարակությանը: Ո՞րն է դրա տեղեկատվական կարևորությունը կամ դաստիարակչական օգուտը:

Այնուհետև հաղորդվում է պարային «շոու». հայ աղջիկները «պարում» են: Ինչպե՞ս են պարում. մեր հոգեկերտվածքի հետ ոչ մի կապ չունեցող, ավելին, դրան միանգամայն խորթ ու հակառակ՝ անբարոյական ու հարեմային մեղկության տանող ամոթալի շարժումներով…

Մտածում եմ՝ պարային շարժումները նաև ներքին ընկալում ու նաև ներքինի արտահայտություն են… Սակայն այստեղ կանգ առնենք, կարծես ավելի ընդարձակվելու կարիք չկա, այսքանն էլ բավական է հասկանալու համար, եթե հասկանալու ցանկություն լինի, թե խոսքը ինչպիսի ամոթալի և վնասակար

երևույթի մասին է: Այդ առումով գուցե միայն հարց տրվի, թե մեր անմեղ մատաղ սերնդին, մեր հոգեհատոր աղջիկներին՝ մեր վաղվա մայրերին, սերունդ դաստիարակողներին, այսինքն՝ մեր ազգի ապագան կերտողներին պարային արվեստի անվան տակ ովքեր ի՞նչ ակնկալիքով այդ շարժումներն են արտահայտել տալիս, որպեսզի մեր երեխաները այդ շարժումներից ի՞նչ զգան, ի՞նչ ընկալեն, ի՞նչ արտահայտեն, ու իրենք ինչպիսի՞ն լինեն:

Եվ հայ զանգվածային տեղեկատվությունը դա անում է ինչպիսի՞ ***գիտակցությամբ և խղճով,*** որ ի՞նչ ստացվի, ի՞նչ լինի… Ինչո՞ւ ենք հոգևոր, գաղափարական և բարոյական ինքնասպանություն գործում՝ անձնապես ու ազգովի: Ո՞վ, ովքե՞ր են մեզ դրդում ինքնասպանության՝ նախապես հավատազրկելով, գաղափարազրկելով, բարոյազրկելով, որով և ախտահարելով մեր գիտակցությունը, կենցաղավարությունը և ***ցամաքեցնելով մեր խիղճը…***

ԴԱՐՁՅԱԼ ԽԻՂՃ

Խիղճն իր էությամբ որակ է, որակական հատկություն: Հետևապես ճիշտ ու օգտակար կլինի առաջին հերթին ա՛յդ հատկությամբ բնորոշել մարդուն, հային, թե ով է նա, ինչ կարող է անել և ինչ կարելի է նրանից սպասել (կամ չսպասել), նրան վստահել կամ՝ ոչ:

Հավատքով իմաստնացած, խղճով ազնվացած, Հայ Ազգային Գաղափարախոսությամբ տոգորված ու մարդկային-ազգային հոգեբարոյական արժեքների նորմերով ապրող և գործող անձինք, ովքեր դրանցով անպայման էապես ու գործնականորեն կոռումպազերծ են և ունեն նաև կամային կորով և համապատասխան գիտելիքներ ու հմտություն, պետք է ընտրվեն ազգի կողմից որպես հայության, Հայաստան երկրի և պետության ղեկավարներ, առաջնորդներ կամ առաջատար պաշտոնյաներ:

Այնժամ կամրանա՛, կբարձրանա՛, կբազմանա՛ հայ ազգը, կհզորանա՛, կզարգանա՛, կբարգավաճի՛ Հայաստան երկիրը, և օրինապաշտ, կենսունակ ու անխոցելի կդառնա հայոց պետությունը:

Ու այդ բոլորը՝ Աստուծո հաճությամբ, օրհնությամբ ու օգնությամբ:

Որովհետև խիղճը, մարդու հոգու մեջ պարունակվող Աստվածապարգև զգայարանը լինելով, ըստ այնմ՝ զգում, տրամաբանում ու արտահայտվում է երկրայինից դեպի երկնային ձգտող գիտակցությամբ և հետևապես մարդուն դարձնում է անհամատեղելի զուտ երկրային երևույթ կոռուպցիայի հետ:

Ու նաև խիղճը, մարմնականի, ֆիզիկականի, երկրայինի մեջ հոգեկան, հոգևոր, երկնային զգացողությունն ու դրա արտահայտությունը լինելով, գաղափարական գիտակցության հետ անձն ու ազգը դարձնում է բացարձակապես կոռումպազերծ:

Մարդ էակի երկրային կյանքում երկնային հոգեկան

գիտակցությունն արտահայտվում է խղճով: Ով ունի խիղճ, ունի երկնայինի հետ հոգևոր-գիտակցական կապ ու այդ կապի զորության համապատասխան չափով զերծ է աշխարհի ամեն տեսակ ապականությունից, այլասերումից՝ կոռումպացումից:

Եթե մարդ արարածն իր խղճով (պիտի) գնահատվի, որպեսզի որոշվի նրա մարդկայնության աստիճանը՝ իր ընդունակություններով ու կարողություններով հանդերձ, ապա այդ գնահատականի հստակությունը, ճշտությունը և դրա ճիշտ կիրառությունը կհարստացնեն մարդուն (ազգին, մարդկությանը) և ըստ այնմ՝ նրա կյանքի ապրումի արդյունքը՝ թե՛ անձնական - ընտանեկան և թե՛ ազգային - մարդկային իմաստով:

Ո՞վ կարող է մեր մեջ խիղճ առաջացնել կամ օգնել մաքրելու մեր խղճի վրա ծեփված ժանգը՝ մեղքը...

Եվ մարդու խիղճ-զգայարանը ինչպե՞ս աշխատի, գործի մարդու մեջ, եթե գերված, կաշկանդված է մեղքի ծանրությամբ, «լղոզված, ժանգոտած» է նյութապաշտությամբ ու կոռումպացված, անզգայացած է ամբարտավանությամբ:

Ո՞վ կարող է փրկել մարդուն (մեր դեպքում՝ հային, հայությանը)՝ մաքրելով, առողջացնելով կամ վերակենդանացնելով նրա խիղճը, եթե ոչ միայն Նա, Ով ստեղծել և պարգևել է խիղճը: Նա՛ կարող է Ավետարանով և խաչով Հիսուսի Աստվածության հավատքով օգնել հային, հայությանը, ինչպես և մարդուն, մարդկությանը՝ հոգով ազատագրվելու ու ազատագրելու, վերականգնելու իր գերված խիղճը և դառնալու բացարձակապես կոռումպազերծ՝ ի վերելք անձի, ազգի, մարդկության ու ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

28- ը փետրվարի, 2006 թ., ժամը 6:20

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
(ազգային խիղճ և գիտակցություն)

Խիղճը, լինելով մարդու, մարդկային հասարակության և ընդհանրապես մարդկային կյանքի զգացողությունը, տրամաբանությունը, ուղղակիորեն անդրադառնում է դրանց կայունությանը, կենսունակությանն ու զարգացմանը՝ դառնալով էական մաս, ինչպես ուղեղը՝ մարդու օրգանիզմում:

Բայց դարձյալ հարցադրենք. ի՞նչ է խիղճը, գիտե՞նք, թե ի՞նչ է, ինչի՞ց է բաղկացած և ինչպե՞ս է, որ խիղճը զգում է, տրամաբանում և ի զորու է կառավարելու, ուղղորդելու, կայունացնելու, կենսունակություն տալու, կատարելագործելու և զարգացնելու մարդկային կյանքը, հասարակությունը և դրանով՝ երկրներն ու պետությունները և յուրաքանչյուր մարդու:

Եվ ոչ միայն այդ:

Պետք է հասկանալ, ըմբռնել, թե խիղճն ո՞ւմ կողմից, ինչպե՞ս է ստեղծվում, տրվում, ինչի՞ց է այն բաղկացած, կյանքում ի՞նչ գործողություն (ֆունկցիա) է կատարում, և սա ըմբռնելուց հետո միայն հասկանալ, թե ի՞նչ կարելի է անել խղճով և ի՞նչ չի կարելի անել առանց խղճի:

Օրինակ՝ ի՞նչ է նշանակում խղճով զինվոր և առանց խղճի զինվոր: Եվ ի՞նչ է նշանակում խղճով սպա, գեներալ, հրամանատար ու ի՞նչ է նշանակում սպա, հրամանատար, գեներալ առանց խղճի: Ինչպես նաև՝ առանց խղճի բժիշկ, ուսուցիչ, դատավոր, պատգամավոր, նախարար, վարչապետ, նախագահ, կաթողիկոս ու ընդհանրապես մարդ, քաղաքացի, ծնող և զավակ, իսկ մյուս դեպքում՝ նրանք բոլորը՝ խղճով:

Մի դեպքում՝ խղճի առկայության պարագայում, առկա են նաև բարու, արդարի գաղափարականի, ընկերականի, ինչպես նաև ազգի և հայրենիքի ընդհանուր շահի պաշտպանման ինք-

նաբուխ, ինքնագիտակից ու ինքնակառավարվող վերաբերմունքը, արարքը, գործը: Մյուս դեպքում՝ խղճի բացակայության պարագայում, բացակայում են նաև այդ բոլոր առաքինությունները: Եվ այս բացակայությամբ առաջ են գալիս առնվազն եսասիրություն, փառամոլություն, նյութապաշտություն և դրանց հետևանքները: Ու եսը, որն անցողիկ և ունայն է, դառնում է կենտրոնը կյանքի: Եվ դրանով կյանքն ինքը կոռումպացվում, ունայնացվում և ունայնությանն է ծառայում:

Բայց դարձյալ՝ ի՞նչ է խիղճը, խղճով մարդը: Կյանքի օրինակներից մենք գիտենք, որ խղճով մարդը, որ ընդհանրապես բարի է լինում կյանքում, ավելի խոցելի է, տկար է, և հետևապես նրա նվաճումները դժվար են ձեռք բերվում ու քիչ են լինում: Մինչդեռ իր ուժը ցուցաբերող անխիղճ անձին հաշվի են առնում, նրանից վախենում են, և նա շատ դեպքերում հասնում է իր նպատակներին:

Սակայն թե՛ հավատքով և թե՛ կյանքի օրինակով գիտենք, որ իրապե՛ս ԲԱՐԻ մարդն է հիրավի ուժեղը, թեև այլ է սեկուլյար բարոյագիտության ըմբռնումը «բարի մարդու» մասին:

Անխիղճ մարդիկ ուժեղ են երևում արտաքնապես և ժամանակավորապես, ու այլ հարց է, որ նրանց հանդեպ ոմանք ստորաքարշ երկյուղ են տածում և ստրկամիտ հարգանք, բայց ո՞ւմ են պետք հոգեպես կոռումպացված, գաղափարազուրկ և բարոյազուրկ այդ հարաբերությունները (խոսենք մեր մասին). հայ ազգի՞ն՝ ո՛չ, պետությա՞նը՝ ո՛չ, հասարակությա՞նը՝ ո՛չ և նույնիսկ իրեն՝ «ուժեղ» - անխիղճ հայ մարդուն իսկ, վերջին հաշվով, պետք չեն:

Այսպե՛ս է, սա՛ է ճշմարտությունը:

Խիղճը չի կարող թուլության պատճառ, նշան ու հետևանք լինել, խիղճը զորության պատճառ, նշան ու հետևանք է:

Խիղճը բարի, արդար, ստեղծագործ, կառուցողական ու հարատև կոռումպազերծ զորության նշան ու հետևանք է: Եվ այդ խիղճը հիմնականում և լիությամբ բխում է հավատքից՝ Աստվածճանաչողությունից ու Աստվածային շնորհընկալումից:

Եվ դա մեզ՝ Հայկյան ցեղ ու ազգ կազմող հայերիս համար Սուրբ Ավետարանով և խաչով է:

Մեր Հայկ Նահապետից մինչև սուրբ Վարդան զորավարը, ինչպես և դարերի ընթացքում, մինչև մեր ժամանակակից բյուրավոր Վարդանները, նախևառաջ խղճո՛վ զորավար էին, նրանք խղճո՛վ քաղաքական և պետական այրեր էին, խղճով էին պարտաճանաչ հավատքի, ազգի ու հայրենիքի հանդեպ, և նրանք այդ հավատքի խղճո՛վ դիմացան փորձություններին և գործեցին բարոյականությամբ՝ որպես գաղափարական անձինք:

Դրա համար սուրբ Վարդանը Ավարայրի դաշտում նախքան սուրը բարձրացնելն Ավետարանն ու խաչը բարձրացրեց, նայեց երկինք, հետո բարձրացրեց սուրը, ընթացավ թշնամու վրա, զարկեց, զարկվեց, ու ***անմահացան հավերժատև հաղթանակով*** ինքն ու իր զինակիցները և այն ազգը, որ հետևեց և հետևում է իրեն, ու Աստծու շնորհով հետևելու ենք բոլո՛ր և մեր սերունդները...

* * *

Խիղճը, միահյուսված լինելով մարդու ոգեղենության հետ, անհրաժեշտ է մեր բոլորի քաղաքացիական գիտակցության, պարտաճանաչության և պատրաստականության ու պատրաստակամության համար: Խիղճը մանավանդ անհրաժեշտ է մեր ազգային բոլոր կառույցներին, նրանց պաշտոնեությանը և հատկապես հոգևորականությանն ու զինվորականությանը, որպեսզի բոլորի մեջ իրենց բացարձակ կոռումպազերծությամբ կարողանան անբասիր վարքով կատարել իրենց քաղաքացիական և դեռ ավելին՝ հոգո՛ւ պարտքը՝ ճշմարիտ օրինակ դառնալով համայն հայության և սերունդների համար: Որովհետև խղճով հայ մարդը, պաշտոնյան ու հատկապես հայ հոգևորականն ու զինվորականը, լինելով ավելի պարտաճանաչ և հավատարիմ իրենց կոչումին, լինում են ավելի զորեղ, տոկուն, աննկուն, մարտունակ, ստեղծագործ, բարեգործ, արդար, քաջ ու դեռ ավելին՝ ունենում են ասպետական հոգու կորով և հա-

վատարմություն, այն հատկությունները, որոնց պակասի պատճառով է մարդկության անկումային ընթացքը, որը դժբախտաբար համակում է նաև մեր ազգը, երկիրն ու պետությունը:

* * *

Հայ ազգի առաջ դրված է ***պատմական առաքելություն***՝ հավատքո՛վ դիմանալ աշխարհատարած իր գոյությանը սպառնացող փորձություններին և չներառվելու համար անկումային ընթացքին, այլ՝ Աստվածապատգամ կյանքի ապրումո՛վ «հաղթել աշխարհին» և փրկության ու վերելքի նմուշ-օրինակ դառնալ բոլոր «հոգնած, բեռնավորված», խոտորված և հուսահատված մարդկանց ու ազգերի համար: Եվ դա՝ ի վերապրում Հայկյան ոգով ազգային կյանքի, հոգուտ մարդկության ու ի փառս մեր հավատքի, որ Աստվածաշնորհ է:

Այս ***առաքելության*** կատարման՝ «աշխարհը հաղթելու» խնդրում խիղճը, խղճի մաքրությունը, խաղաղությունն ու զորությունը պայման են մեր ազգի համար՝ ունենալու բացարձակ կոռումպազերծ սիրտ ու միտք, հետևապես ամեն տեսակ կոռումպազերծ կեցվածք, արարք ու ընթացք, որով և ազգային սրբություն՝ անպարտ և միշտ հաղթական սուր ու վահան՝ փրկություն ամեն տեսակ անկումներից ու երաշխիք վերելքի՝ միշտ, ամենուր, ամեն ինչում, Աստուծո հաճությամբ ու օգնությամբ:

Փա՜ռք Նրան:

ՀԱՅ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՆՑՔԸ ՍԵՐՆ Է, ՄԻՋԱՎԱՅՐԸ՝ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածային Հոգու բնության համաձայն՝ Նրա կամքով և ծրագրով ստեղծված մարդկային կյանքի առանցքը սերն է, որը բխում է հենց Աստուծո էությունից: Ու այդ սերը, լինելով ամենակենարարը, ստեղծագործականը և կառուցողականը, այն նաև առաջնային և հիմնական նախապայմանն է մարդկության գոյապահպանման և զարգացման, որն ընթանում է ազգերի զարգացման միջոցով, որով և՝ ընտանիքի, իսկ վերջինս էլ՝ անհատի զարգացման միջոցով՝ հոգեպես, գաղափարապես, բարոյապես և ըստ այնմ՝ նաև կենցաղավարությամբ ու նյութապես...

Աստվածային սերը մարդկության մեջ ստեղծում, առաջացնում է սրբություն՝ այն կենսատարրը, որը պարունակող միջավայրում գործում է ստեղծագործաբար, կառուցողականորեն՝ պարգևելով կյանք ու երջանկություն... Եվ կյանքը, երջանկությունը և երանությունն իսկ այդ սիրո առանցքի շուրջ են ստեղծագործվում և կառուցվում: Ինչքան կատարյալ, ազնիվ (այսինքն՝ անխառն, անարատ) է սերը՝ առանցքը, հետևապես և սրբության մթնոլորտը, միջավայրը, այնքան դրանց համապատասխան են իրական կյանքի ու երջանկության համար ստեղծագործությունը և կառուցողականությունը... Ամեն ինչ, որ հեռանում է առանցքից և ընկնում այլ մթնոլորտի, միջավայրի մեջ, իր էությամբ կենսազրկվում, աղավաղվում, կոռումպացվում, այլասերվում և ոչնչանում է: Սիրուց՝ դրա առանցքից հեռացած որևէ մթնոլորտի, միջավայրի սոսկ ձևը կարող է միառժամանակ մնա՛լ (մարդկային կյանքում անձի, ազգի, հասարակության մեջ դա կարող է օրերից, ամիսներից մինչև տասնյակ տարիներ տևել), ու արդեն թեև արհեստական դարձած ու միայն իներցիայով արտահայտվող նրա փայլը կարող է հրապուրել թուլացած, խախտված հոգիներն ու մտքերը, բայց որևէ կենսական բան չի կարող տալ, բացի, վերջին հաշվով, ախտից, վարակից, ցավից, քայքայումից, թշվառությունից և կորստից...

Շատ բարդ, միաժամանակ շատ հստակ և պարզ վիճակ ու հեռանկար է սա, որի ըմբռնումից և ըստ այնմ անդրադարձից կախված են անձի, ընտանիքի, ազգի և մարդկության կյանքի վիճակն ու հեռանկարը: Այդ ըմբռնումը, եթե երկրային գիտությամբ է միայն, այդ դեպքում անխուսափելի են խճճվելը, ապակողմնորոշվելը, խաբվելը և մոլորվելը... Սակայն եթե երկրային գիտությամբ է, բայց տոգորված է Հիսուս Քրիստոսի հավատքի շնորհով ու իմաստությամբ, այդ դեպքում կարելի է պարզ և հստակ ըմբռնել, այնքա՜ն դյուրին, մանկանն իսկ հասկանալի: Որովհետև Քրիստոսի հավատքն Աստվածային Լույս է, որ փարատում է խավարը և տեսանելի դարձնում ճշմարտությունը՝ ԿՅԱՆՔԸ, նախևառաջ մանուկներին ու այս աշխարհի ոչ թե գիտուններին և հզորներին, այլ, այսպես ասած, միամիտներին և տկարներին...

1700 տարի առաջ մեր ազգն Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքի լույսով լուսավորվեց իր պետականությամբ և իր հոգով, մտքով տեսավ, հասկացավ ճշմարտությունը՝ ԿՅԱՆՔԸ, ու ապրում դարձրեց այն:

Մեր նախնյաց այդ ԿՅԱՆՔԻ ապրումո՛վ առաջացած արդյունքի՝ հոգևոր ժառանգության շնորհիվ է, որ գոյատևել ենք և կանք: Իսկ այժմ սպառվա՞ծ է, սպառե՞լ ենք այդ ժառանգությունը, թե՞ դեռևս այն կա, ունենք: Սա էական նշանակություն ունեցող հարց է, որի պատասխանը երևի չգիտենք, և դրանից էլ վատն այն է, որ երևի չենք էլ ձգտում գիտենալ: Բայց մի բան, այնուամենայնիվ, հայտնի է, որ այդպիսի՛ ԿՅԱՆՔԻ ապրումով մենք կարող ենք հարստանալ, հզորանալ, պաշտպանվել, բարգավաճել, և դրանք, որպես կենարար ժառանգություն, փոխանցել մեր սերունդներին, որպեսզի ԿՅԱՆՔ ունենան մեր ազգը, մեր հայրենիքը, մեր որդիները, թոռները, նրա՛նց թոռները և հայ սերունդները...

Աստուծո օգնությամբ:

6-ը մարտի, 2007 թ., ժամը 6:50

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ՈՒ ԱՐԺԵԶՐԿՈՒՄ

Ո՞րն է մարդու՝ տիեզերքի հրաշքի արժեքը, ու ի՞նչն է արժեզրկում նրան:

- Արժեքը խիղճն է, խղճմտանքը, արժեզրկումը՝ անխղճությունը...

- Արժեքը գութն է, գթասրտությունը, իսկ արժեզրկումը՝ անգթությունը...

- Արժեքը սերն է, սիրելը, արժեզրկումը՝ նախանձն ու ատելությունը...

- Բայց սիրո բացակայություն չի՛ լինում, չէ՞, սերը մի՛շտ կա, սակայն ինչպիսի՞ սեր. այնպիսի սեր, ինչպիսին կովիդ և նրա կաթի՞ նկատմամբ է, կամ գառան մսի՞ նկատմամբ, կամ փողի՞, պաշտոնի՞, փառքի՞ և մեջքիդ մերսմա՞ն նկատմամբ է, թե՞ այն սերը, որ պետք է լինի մերձավորիդ բարօրության նկատմամբ, ըստ Ավետարանի, որի մեջ կա և՛ խիղճ, և՛ գութ, և՛ բարություն, և՛ վեհանձնություն ու վերջին հաշվով մարդկայնություն՝ Աստուծո հավատքով և նմանությամբ, այն, ինչ որ սիրում, պատգամում է և դրա կիրառությունից գոհանում է Աստված, Ով աղբյուրն է և՛ խղճի, և՛ գութի, և՛ սիրո, և՛ ողորմության: ***Ողորմություն,*** որի մասին մեր մեծն Ներսես Շնորհալի հայրապետն աղոթքում ասում էր. «Աստվա՛ծ իմ, որ բացում ես ձեռքերդ և լցնում արարածներիդ Քո ***ողորմությամբ***»:

Եվ դարձյալ, ուրիշ ո՞րն է մարդու արժեքը. նրա լավ ձայն ունենա՞լը կամ նվագե՞լը, մարդկանց, կենդանիների ու աստղերի բնությունն ու լեզուն հասկանա՞լը կամ հարստություն դիզե՞լը և իշխանություն ու փառք նվաճե՞լը... թե՞ ըստ մեր Տիրոջ պատգամի՝ «այս փոքրիկներից մեկին» մի բաժակ սառը ջուր սիրով տալը, տկարի իրավունքը պաշտպանելը, ընկածին բարձրացնելը և... պահանջ ու պարտականություն զգալը՝ լինելու ազնիվ...

Բայց դեռ հարկ կա պարզաբանելու, թե ինչ է ազնիվը, որով

և ազնվությունը, ազնվականությունը, կոռումպազերծությունը և հակառակը՝ անազնվությունը, կոռումպացվածությունը...

Ծառայությամբ իշխելու, ղեկավարելու, ծառայելու և մեր ազգը, երկիրը և պետությունը պաշտպանելու, կայացնելու, զորացնելու, զարգացնելու և բարձրագույն չափանիշներով բարեկեցիկ դարձնելու համար օդի պես կարևոր է, որ բոլորս փոխվենք. մեր խիղճը մաքրենք, գիտակցությունը բարձրացնենք ու ըստ այդմ ճանաչենք, արժևորե՛նք արժանին և ստեղծե՛նք այդպիսի արժեքներ կամ աջակցե՛նք դրանց ստեղծմանն ու կիրառմանը մեր ազգի և պետության բոլոր բնագավառներում, մեր կյանքի բոլոր հանգրվաններում: Սակայն զգույշ լինենք, չխաբվենք և չմոլորվենք պես-պես կեղծ օրինակներով ու խարդախ տեսություններով, հսկե՛նք, զգոն լինենք, պաշտպանենք և հեռո՛ւ պահենք մեր անձնական, ազգային, պետական կյանքը այլասերումից՝ կոռուպցիայից, և հավատարիմ մնալով մարդկային-ազգային մեր հոգևոր, գաղափարական և բարոյական ինքնությանը՝ հաստատո՛ւն մնանք մեր հավատքի մեջ, դրանով քա՛ջ լինենք, զորանանք և հաստա՛տ գիտենանք, որ այդ ամենը՝ բարին, կարող ենք անել Ավետարանի ու խաչի հավատքով ու այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ (տոհմիկ) Ազգային Գաղափարախոսությամբ:

Իսկ դրա համար պետք է մեր հավատքն ու գաղափարը լավ ճանաչենք, ընդունենք և մեր ***կյանքի ապրումը*** դարձնենք միշտ, ամենուր, ամեն ինչում: Ու երբ այդ անելու մեր ձգտումը լինի անկեղծ, ազնիվ, այսինքն՝ զերծ ամեն տեսակ կոռումպացվածությունից, ապա Աստված անպայման մեզ կօգնի դրանում:

Իսկ երբ Աստված մեզ հետ է և Նա՛ է մեր պաշտպանն ու օգնականը, ո՞վ կամ ո՞ր չարն է, որ կարող է մեր դեմ կանգնել, մեզ մոլորեցնել, մեր Աստվածապատվեր ընթացքից մեզ շեղել, մեր Աստվածահաճո կյանքը խաթարել, այլասերել՝ կոռումպացնել: Չկա՛ և չի՛ լինի այդպիսի ուժ, որ կարողանա այդ անել: Որովհետև հայ մարդն՝ այդ ընթացքով, Աստուծո օգնությամբ, իր մեծերի, սրբերի, նահատակ հերոսների հարազատ ժառանգորդը դարձած, իր խղճով և գիտակցությամբ ըստ այնմ կգործի միշտ, ամենուր, ամեն ինչում ու երջանիկ հավերժական կյանք կունենա՝ երկնային երաշխավորմամբ:

17- ը ապրիլի, 2007 թ., Լոս Անջելես, ժամը 7:25

ՕՐԵՆՔԻ «ԽԵՐԸ»

Օրենքը լավ բան է հասարակության համար, ինչպես դեղը լավ է օրգանիզմի համար: Բայց ինչպես ավելի լավ է, որ օրգանիզմն առո՜ղջ լինի, և դեղի, բժշկի, լաբորատոր ստուգման և հիվանդանոցի կարիք չլինի, այնպես էլ լավ է, որ հասարակությունն առողջ լինի, և օրենքի, ոստիկանի, դատախազի, դատավորի և բանտի կարիք չլինի:

Օրենքները հաստատվում, զարգացվում, ամրապնդվում են հասարակության խակության և կամ տկարության, հիվանդության՝ կոռումպացվածության պատճառով: Առողջ՝ կոռումպազերծ հասարակությունը կարիք չունի շատ օրենքների: Քիչ, պարզ ու հստակ օրենքները կստեղծվեն ու կկիրառվեն մոտավորապես այն պատճառով, ինչ պատճառով ստեղծվում են փողոցային երթևեկության օրենքներն ու կանոնները՝ կանոնակարգելու, կարգավորելու համար երթևեկությունը...

Օրինակ՝ մեր հեթանոս նախնյաց օրենսդրության մեջ օրենք կար, որն արգելում էր կենակցել ընտանի կենդանիների հետ...

Փա՛ռք Աստծո, որ մեր ազգը քրիստոնեանալով կարիք չունեցավ և չունի այդպիսի օրենքի: Հույս ունենանք, որ պոռնկությունը, մարմնավաճառությունը, մանկապղծությունը և նման այլ այլասերիչ պղծությունները գովազդող, խրախուսող ու դրանց նպաստող պոռնոգրաֆիական գրականությունը, նկարները, պոռնոֆիլմերը և շոուներն արգելող օրենքներ ընդունելու կարիքը ևս չի՛ ունենա մեր հայ հասարակությունը: Իսկ այնտեղ, որտեղ մեր մեծ ընտանիք՝ մարդկության մեջ այդ օրենքները հանգամանքների բերումով ստիպված ընդունվում, հետո խստացվում և ավելի ու ավելի միջոցներ են ձեռք առնվում այդ օրենքների «հաջողությամբ» կիրառման համար, դրա կարիքը ևս չի զգացվի մարդկային հասարակության առողջացման

պարագայում: Այլ միայն կարիք կզգացվի հոգևոր, գաղափարական և բարոյական վերածննդի, որով և՝ իսպառ կոռումպազերծման:

- Ուրեմն՝ ո՞րն է ազգային և մարդկային հասարակությունների վերոնշյալ առողջապահության բանալին ու հաստատուն հիմքը:

- Աներկբա պատասխանը Աստուծո հավատքն է՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով: Խաչի հավատքի ու ըստ այնմ ապրումի շնորհը կասեցնում, մաքրում, սրբում և նույնիսկ սրբացնում է անգամ խորապե՛ս վարակված, այլասերված՝ կոռումպացված հասարակական օրգանիզմները...

- Եվ դրա համար ի՞նչ.

- Փառք, պատիվ և հավատարմություն խաչին:

Այս տողերը գրելուց քիչ հետո աչքիս դիպավ CNN-ի հաղորդումն այն մասին, որ ԱՄՆ Միչիգանի նահանգում ձերբակալվել է մի կին՝ իր յոթ տարեկան աղջկան պոռնոգրաֆիկ նկարահանումների տված լինելու համար: Այդ հաղորդման մեջ խոսվում էր նաև այդ յոթ տարեկան աղջնակի՝ իր մոր կողմից «սեքսուալ շահագործման» մասին... Մարդկային ոգու ի՜նչ աստիճանի կոռումպացում…

Աստվա՜ծ մեզ փրկի նման և դեռ ավելի սարսափելի պղծություններից, որոնցով լցվում է աշխարհը և որոնք ուղղորդվում են նաև մեր ազգի ու երկրի դեմ: Աստված մեզ օգնի, որ ***զգաստանանք. զգոն ու լուրջ վերաբերվենք, որպեսզի փորձությունների չենթարկվելով՝ հավատարիմ մնանք մեր հոգևոր էությանը՝ մեր հավատքին, մեր նախնյաց սուրբ կերպարին, նրանց պատգամներին ու ամենակարևորը՝ հավատարիմ մնանք Սուրբ ու Ամենահաղթ Խաչվածին:*** Եվ Նրա՛ հավատքով, այդ հավատքի իմաստությամբ, գիտությամբ, Նրա պատգամներով հասկանանք, գիտակցենք, թե ով ով է, ինչն ինչ է, և ըստ այնմ սովորենք, որոշենք մեր անելիքները, չանելիքները ու ճանաչենք Նրա ճանապարհը, որպեսզի անխոտոր ընթանանք դրանով դեպի Նա:

Եվ հարկ է նաև փառք տանք Նրան և միշտ շնորհակալ

լինենք, որ հակառակ մեր բազում խոտորումների, մոլորություններ, ամբարտավան մտքերի ու արարքների, Նա դեռ մեզ սիրում, ներում և պաշտպանում է չարի կողմից տարբեր «փաթեթավորումներով» մեզ մատուցվող պիղծ ու կորստաբեր գայթակղություններով այլասերումից՝ ամեն տեսակ կոռումպացումից…

Հիշե՛նք մեր հավատքի պատգամները: Հիշե՛նք մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունն ու բարոյականությունը և ըստ այնմ հավատարի՛մ մնանք ու նաև մեր կյանքով հետևենք մեր մեծերի, մեր Սո՛ւրբ Հայրերի կերպարին ու վարքին, Վարդանանց հավատքի ասպետական ոգուն և Մամիկոնեից հավերժական Ուխտին… Որ Կյանք ունենանք՝ մենք, մեր ազգն ու պետությունը և մեր երեխաներն ու նրանց սերունդները, հոգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ մեր Աստծուն:

10- ը հունիսի, 2007 թ.

ՈՐ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՎԵԼԻ ՄՏԱՀՈԳԻՉ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԱՅՆ ՎԵՐԱՑՆԵԼ
(ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)

Մեր երկրում գոյություն ունեցող աղքատության մասին (նկատի ունենալով նյութական աղքատությունը) խոսում ենք, անհանգստություն ենք հայտնում, դրա վերացման համար որոշումներ ընդունում, ծրագրեր մշակում և փորձում ենք իրագործել: Եվ մեր այդ արածների համար մի կողմից՝ հպարտանում, մյուս կողմից դժգոհում, քննադատում, մեղադրում ենք: Ու այդպես՝ Հայաստանի երրորդ հանրապետության հիմնադրումից ի վեր, ինչպես պետական - կառավարական, այնպես էլ քաղաքական - հասարակական մակարդակով շարունակվում է այդ ընթացքը:

Եվ դա վատ ընթացք չէ՛, լա՛վ ընթացք է, ու լավ կլինի նաև, որ այն առավել հետևողական, գործնական ու արդյունավետ լինի: Եվ դա նաև հենց նրա համար, որ աղքատության վերացման ծրագրերի կենսագործումը նշան է երկրի բնականոն զարգացման գործընթացի: Սակայն մի էական հարց է ծագում. մի՞թե միայն նյութական աղքատությունն է ուշագրավ ու արժանի մտահոգության և դրա վերացման համար ծավալուն միջամտության, իսկ հոգեկան, գաղափարական և բարոյական աղքատությո՞ւնը…

Ինչո՞ւ մեր մարդկային-ազգային հոգեբարոյական և գաղափարական հարաճո՛ւն աղքատությունը նո՛ւյն չափով և նույնիսկ ավելի չի՛ անհանգստացնում հայ պետական, քաղաքական - հասարակական շրջանակներին և ընդհանրապես համայն հայությանը, ու առնվազն նույն մասշտաբով և հետևողականությամբ միջոցներ չեն ձեռնարկվում: Ինչո՞ւ այդ շրջանակները և հատկապես Ս. Էջմիածինը և մեր մտավորականությունը կարողանում են գիշերը հանգիստ քնել…

Արդյո՞ք դրա պատճառն այն է, որ մեր ազգի հոգեբարոյական և գաղափարական արյունահոսությունն ա՛յն աստիճանի է հասել, որ այլևս մեր մարդկային-ազգային և նույնիսկ հոգևոր ու մտավոր գիտակցությունն էլ այդ աստիճանի կոռումպացված, տկարացած, անզգայացած է, և չենք կարողանում անդրադառնալ ավելի ավերիչ, ավելի ամոթալի ու ամեն հետընթացի պատճառ՝ հոգեկան, գաղափարական և բարոյական մեր հարաճուն աղքատությանը: Մանավանդ որ այն արդեն իսկ լայներախ ճարակում է մեր ժողովրդի, հատկապես նոր սերնդի մարդկային ու ազգային կենսունակությունը՝ զրկելով նրան ապագայի կերտման թե՛ կարողությունից, թե՛ ցանկությունից, թե՛ նպատակաուղղվածությունից և թե՛ իր ապահով, զարգացող և հարաճունորեն բարգավաճող կենսական այլ նախադրյալներից:

Մենք զգայուն ու արձագանքող ենք ֆիզիկական, երկրային երկրաշարժերին, ինչպես 1988 թվականի ցավալի երկրաշարժին: Մենք նվա՛զ զգայուն ու արձագանքող ենք քաղաքակա՛ն և դրա հետ կապված այլ բնույթի երկրաշարժերին, ինչպիսին են ցավալի 1895-ի, 1905-ի, 1907-ի, 1915-ի, 1920-ի, 1937-ի և դրանից հետո՝ տարբեր սաստկությամբ երկրաշարժերը: Հատկանշական է, որ չենք անդրադառնում նաև մինչ օրս հարաճունորեն շարունակվող ***հոգեկան, գաղափարական և բարոյական երկրաշարժերին,*** որոնց հանդեպ ևս մենք, ցավոք, գրեթե լիովին անզգա՛ ենք մնում, պատշաճորեն չենք արձագանքում:

Ինչո՞ւ է այդպես: Եվ ո՞վ մեզ հասնի մեր ազգային այսպիսի՛ ճգնաժամային վիճակում, երբ դրա առաջացումը թեև մեծ մասամբ մեզանից դուրս պատճառներ ունի, սակայն դրա վերացումը հիմնականում իմաստության, գիտակցության, պարտաճանաչության, կամքի և կազմակերպվածության ու կառավարման զուտ հայկական խնդիր է: Այդ խնդրի արագ ու արդյունավետ լուծումն առանձնահատուկ է նրանով, որ համաշխարհային բանկերի վարկերի, հարուստ երկրների դրամաշնորհների կամ ազգային բարերարների կարիքը չի զգում: Եվ

նույնիսկ ուրիշների փորձին էլ այնքան պետք չունենք, ընդհակառակը, քանզի մեր նախնյաց, մեր մեծերի, սրբերի, մեր ապուպապերի, տատերի փորձը և մեզ ժառանգություն թողած նրանց պատգամները, խրատները և կերպարները լրիվ բավարար են տվյալ կենսական ոլորտի ճգնաժամը հաղթահարելու և իսպառ վերացնելու համար: Հետևապես, մնում է, որ զույգ կաթողիկոսներով, զույգ պատրիարքներով, բազում հոգևոր առաջնորդներով, սրբազաններով, սուրբ հայրերով, քահանաներով ու այժմ արդեն մեր վայելած ազատ ու անկախ հայրենիքի պետականության ընձեռած աննախադեպ հնարավորություններով, մեր սուրբ ժառանգության արժանի տերերը դառնանք, օգտագործենք, կյանքի վերածենք:

Այդ պարագայում կարելի է համոզված լինել, որ մեր ազգի կրթական, մշակութային ու այլ համակարգերը և մեր ներքին ու արտաքին քաղաքականությունը, մեր գրված ու չգրված օրենքները, ըստ այնմ՝ մեր կենցաղավարությունը և միասնությունը էապես հնարավոր կդարձնեն, ավելի վճռական մղում կտան վերոնշյալ ճգնաժամային վիճակից՝ հոգեբարոյական և գաղափարական հարատև երկրաշարժերից ժամ առաջ դուրս գալու, ազատվելու:

Եվ դա պետք է անպայման արվի, մենք պարտավոր ենք այդ անել, փոխանակ մեզ շնորհված աննախադեպ հնարավորությունները ի դեմ մեզ գործածելու և կամ ուրիշներին տրամադրելու, առկա նշյալ ճգնաժամը խորացնելու նպատակով, որը հասնում է մի աստիճանի (և դրա առանձնահատկությունը այդ է), որից վերադարձ, դուրս գալ, բուժվել հնարավոր չէ, ինչպես ավազախրումից, ճահճախրումից: Ընդ որում հոգեբարոյական և գաղափարական արյունավարակի ու արյունաքամության մի աստիճան կա, որն անվերականգնելի, անբուժելի է, մանավանդ որովհետև դրա այդ աստիճանին հասնելը, լինելով նաև Արարիչ Հորը դավաճանելու արդյունք, Նրա օգնության հույսն էլ չի լինի: Տերն ասել է, թե մեղքեր կան, որ աններելի են… Եվ ճիշտ է, որ Սերը հաղթահարում է ամեն ինչ, բայց անբարոյական դավաճանությունից առաջացած զզվանքը շատ

հզոր խոչընդոտ է նրա առաջ, չի՛ կարելի զզվեցնել… Մեր նախնիք, մեր հայրերը թեև հաճախ և շեղվեցին, բայց հեռու մնացին անբուժելի մեղքից ու եղածն էլ քավեցին, մենք՝ նրանց ժառանգները, ևս պետք է և կարող ենք հեռու մնալ… Չզզվեցնենք, այլ գոհություն առաջացնենք…

Դժվա՞ր է: Իհա՛րկե, նույնիսկ անհնարինի չափ դժվար, սակայն մեկ այլ առումով բոլորովին դժվար չէ՛, դա այն է, եթե մենք Մե՛նք լինենք և միշտ հիշենք, որ հայ ազգը սուրբ նահատակ ազգ է, և մեր նախնյաց մեջ հիմնականում գերակշռել, գերիշխել և գործել ու պայքարել է սրբությունը, և մենք մեր ազգի այդ հատկության ժառանգորդները պետք է լինենք: Փա՞ռք նրանց, մեր մեծերին, մեր սրբերին: Նրանք հավերժ փառքն են վայելում, նրա միջից են մեզ դիտում, մեզ օրհնում և այնտեղ են մեզ սպասում:

Արժանի՛ լինենք այդ հանդիպման՝ գթությամբն ու օգնությամբն Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

3-ը օգոստոսի, 2009 թ.

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ՃԻՇՏ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Կապիտալիզմը հիմնված է, վերջին հաշվով, մարդու եսասիրության վրա: Կապիտալիզմը, թվում է, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան կոմունիզմը:

Սակայն կապիտալիզմը՝ այդ հորդառատ գետը, պետք է ունենա ամբարտակներ և շլյուզներ, որպեսզի մարդն իսպառ չնյութականանա՝ չայլասերվի՝ չկոռումպացվի և նյութապաշտությամբ հոգին չկորցնի, ինչպես անաստված կոմունիզմի հաստատման ժամանակ:

Կապիտալիզմն այժմ, շլյուզները բացած, առանց որևէ ամբարտակի, իր հորձանքի մեջ է առել մարդկային եսասիրությունը և դրանով ողողում է մարդկության մարդկայնությունը և մարդկության բոլոր հատվածները, բոլոր խավերը՝ սկսած մտքերից ու հոգիներից մինչև մարմինները: Եվ կապիտալիզմի հորձանքները, գլոբալ առումով խառնելով ու նվաճելով մարդկությունը՝ երկրները, ազգերն ու ժողովուրդները, հոգեպես, գաղափարապես և բարոյապես կոռումպացնում և տիրում են նրանց մտքերին ու սրտերին, մարմիններին ու հոգիներին, և սին նյութն ու մեղավոր հաճույքը դառնում են նրանց պաշտամունքը, կուռքը, չաստվածը:

Եվ սկսվում է ազգի, հասարակության ու ընտանիքի կործանումը՝ տկարացումն ու այլասերումը՝ հոգու, մտքի և մարմնի ախտահարմամբ:

Ու այդ հորձանքի մեջ են նաև հայը, հայությունը, հայ ազգն ու իր հայրենիք Հայաստանը: Եվ մնում է միայն ու միայն մի հույս, որ Աստուծո սերը, որով և Հիսուս Քրիստոսի Ավետա-

ռանի լույսի և Նրա արյամբ հեղված ամենափրկիչ խաչի հավատքը մեր մեջ զորանա և ***կյանքի ապրում դառնա:***

Հա՛յ մարդ, տոգորվի՛ր այդ հավատքով, նայի՛ր Քրիստոսի խաչին, և հավատքով խաչին ուղղված հայացքդ, աղոթքդ, խնդրանքդ քեզ կփրկեն այլասերման՝ կոռուպցիայի մեղքի խայթոցներից առաջացող վարակից, կործանումից…

Խաչը դրոշմի՛ր մտքիդ և սրտիդ վրա, փնտրի՛ր, գտի՛ր քեզ նմաններին, միացի՛ր ազգիդ ճգնաժամային վճռական (կրիտիկական) զանգվածին և միասին աղոթքներով, հարատև ազնիվ ընթացքով, գործե՛ք Ավետարանի իմաստությամբ, գիտությամբ և խաչի լույսով ու զորությամբ: Բայց զգո՛ւյշ, ուշադի՛ր եղիր, որ այդ ընթացքը և գործը լինեն հետևողական, անընդհատ, հարատև ու ազնվությամբ:

Հիշի՛ր, որ չարի և նրա առաջնորդությամբ քո դեմ գործող բազմաթիվ թշնամիների «վերջին զենքը» ուղղված է ***քո զգոնությունը խափանելուն և քեզ այլասերելու միջոցով քո ճշմարիտ ընթացքի հետևողականությունն ու հարատևությունը խախտելուն:*** Խախտում, որի հարատև կրկնությունը քաջալերելով ու մեծացնելով՝ քեզ կոռումպացնում, գցում է լիովին գերման և ոչնչացման ծուղակը: Այսինքն՝ քո ամբողջ հոգեբարոյական և գաղափարական սպառազինության, պատրաստականության ու մարտունակության չեզոքացմամբ՝ թշնամին քեզ ենթակա է դարձնում վերջնական պարտության… Ու այդ «անմեղ», մարդկային «չնչին» գործոն համարված անհետևողականությամբ, օ՜հ սարսափ, առաջանում են հայի իր սուրբ կոչումից դասալքում և դավաճանություն Աստվածությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Դրանից հետո ի՞նչ մնաց քեզ, ա՛յ խեղճ ու ողորմելի, բայց և սիրելի՛ եղբայր, քո՛ւյր ու նո՛ր սերունդ:

Ուշքի՛ եկ, զգաստացի՛ր այս իսկ պահին, ***կոռումպազերծվի՛ր և հարազա՛տ դարձիր քո ազգային Աստվածակերտ ինքնությանը:***

* * *

Կապիտալիզմը հիմնվել և մանավանդ գործում է մարդու եսասիրությամբ, հետևապես և նյութապաշտությամբ՝ ընչաքաղցություն, փառամոլություն, հեշտամոլություն և մասամբ նորին: Կոմունիզմը, ժխտելով դրանք, փորձում էր իբր թե ընթանալ ճիշտ ճանապարհով, սակայն առանց Աստուծո:

Իսկ առանց Աստուծո բոլոր ճանապարհները տանում են թունավոր ճահիճ՝ հոգու և մտքի այլասերում՝ կոռումպացում, կորուստ ու հավերժ տանջանք:

* * *

Միայն հավատքո՛վ կա հայուն փրկություն: Սա այն է, որ միայն Աստուծո հավատքով՝ Ավետարանով ու խաչով կա հայի, հայության, Հայաստանի, ինչպես և մարդկության ու աշխարհի փրկություն:

Դարձյալ խոսենք մեր մասին, այն հայը, ով չգիտե կամ մոռացել է այս ճշմարտությունը, թող իմանա կամ հիշի և գիտենա: Իսկ այն հայը, որ արդեն իսկ գիտի, թող անհապաղ իրեն պատրաստի ըստ այնմ ապրելու, գործելու՝ ծառայելու որպես հարազատ ու լիարժեք մասնիկ Հայ ազգային կրիտիկական զանգվածի:

Եվ Աստված կօրհնի, կօգնի և կընդունի այդ ծառայությունը՝ որպես ***Իրեն կատարված ծառայություն՝ դրա բոլոր հավերժական երանելի հետևանքներով:***

Աստուծո շնորհով երանի՜ ամեն հայ արժանանա մատուցելու այդպիսի ազգային ծառայություն, Հայ Ազգային Գաղափարախոսության համաձայն, ծառայել Աստծուն՝ ծառայելով իր ազգին՝ հայությանը, որպեսզի իր ազգն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Եվ այդ ծառայության օրհնությամբ կփրկվեն, կփառավորվեն և կապրեն հայը, հայությունը և համայն մարդկությունը:

Փա՜ռք Փրկչին…

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ի ՎԵՐՋՈ
Ի՞ՆՉ Է ԿՈՌՈՒՄՊԱՑՈՒՄԸ, ԿՈՌՈՒՄՊԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
(նաև արդի հայ իրականության մեջ)

Սիրելի՛ հայ բարեկամ ընթերցող, նախորդող էջերում տեսանք, որ կոռումպացվածությունն արդյունք է խղճի, գիտակցության ու արդարամտության պակասի: Իսկ այդ պակասն արդյունք է անհավատության, գաղափարազրկության ու բարոյազրկության, քանի որ դրանց բացակայությամբ աճում են եսամոլությունը, գոռոզամտությունը, ագահությունը, հեշտամոլությունը և ի վերջո՝ նյութապաշտությունը: Իսկ նյութապաշտն իր եսի՝ անունի, փառքի, հաճույքի համար միջոցների մեջ խտրություն չի դնում՝ ո՛չ խիղճ, ո՛չ գութ, ո՛չ էլ որևէ տեսակի պատասխանատվություն: Նյութապաշտի համար ընտանիքը, ընկերները, հասարակությունը, հայրենիքն ու պետությունը լավ են, եթե բավարարում են իր եսը, իսկ եթե ոչ, ապա դրանք ոչ մի արժեք չունեն, ու ամեն պատեհ առիթի, հատկապես դժվար պահի, կարելի է դրանք ծախել, փոխանակել կամ առնվազն ուրանալ ու անտեսել՝ հանուն եսի փառքի, հաճույքի, «լավ զգալու» համար: Չէ՞ որ այդպիսի նյութապաշտի համար հոգևորի և դրանից բխող գաղափարի ու բարոյականի հետ կապված ամեն ինչ սուտ է, միամիտներին խաբելու միջոց, քանի որ ըստ իր հավատազրկության՝ ամեն ինչ այս կյանքում է. ինչ որ կորավ, անվերադարձ է, հետևապես կյանքը և դրա ամեն մի պահը պետք է օգտագործել՝ վայելել, զվարճանալ, լավ զգալ, թեկուզ ամեն գնով: Նրա համար սա է իրականը, խելացին, մնացածը՝ ինչ-ինչ հաշիվներով մարդկանց խաբել՝ «աչքին փոշի փչել» է:

- Դա նյութապաշտն է՝ հավատազուրկ ու ըստ այնմ՝ գաղափարազուրկ և բարոյազուրկ: Իսկ մենք, որ անհատապես ու ազգովին նյութապաշտ չպե՛տք է լինենք, այլ Աստվածապաշտ, ու ըստ այնմ՝ գաղափարապաշտ ու բարոյապաշտ պետք է լի-

նենք, մենք ի՞նչ ենք մտածում, ի՞նչն ենք ընդունում՝ հոգևո՞րը, թե՞ նյութականը, հավա՞տքը, թե՞ անհավատությունը, մշտակա՞նը, թե՞ ժամանակավորը: Եվ խիղճ, պատիվ, պարտականություն և պատասխանատվություն հասկացությունները մեզ համար նշանակությո՛ւն ու արժե՛ք ունե՞ն, թե՞ ոչ:

- Իհա՛րկե, ունեն: Ինչպես կարող են չունենալ, քանի որ մենք աշխարհում քրիստոնեական ակունքներից եկող խաչապաշտ, Աստվածասե՛ր ժողովուրդ ենք ու եթե ինչ-ինչ պատճառներով և կերպերով փոխվել ենք, ապա հավատում ենք, որ դա մակերեսային ու ժամանակավոր է, և անպայման կվերականգնվենք՝ ըստ մեր հոգևոր, գաղափարական և բարոյական կերպարի:

- Ու եթե դա է ճշմարիտը, ապա հայ իրականության մեջ կան որոշ գոնե էական ճշմարտություններ, որոնք պետք է պարզաբանվեն հստակ, ճշգրիտ ու իրազեկվեն: Եվ սա էապես անհրաժեշտ է մեզ բոլորիս ու հատկապես մեր նոր սերնդին:

Հայաստան հայրենիքը պե՞տք է հոգեպես, գաղափարապես, բարոյապես և ֆիզիկապես պաշտպանվի, սնվի, պահպանվի, զորանա ու զարգանա: Եթե հայությունն ասի, որ պետք չէ, ուրեմն՝ հարցը վերջացած, փակված է: Կմնա մտածել, թե ե՞րբ վերջնականապես ու լիովին դառնանք ուրացողներ, դասալիքներ և լքենք մեր հայրենիքը կամ մտածենք, թե մե՞նք ծախենք, լիկվիդացնենք մեր պատմական հայրենիքից մնացած այս պատառիկը, թե՞ թողնենք դա անեն մեր թշնամիները, մրցակիցները և կամ կեղծ բարեկամները:

Իսկ եթե հայությունն ասի. «Ո՛չ, մեր նախնիների հայրենիք Հայաստանից մնացած այսօրվա Հայաստանը հոգեպես, գաղափարապես, բարոյապես և ֆիզիկապես պե՛տք է պաշտպանվի, սնվի, պահպանվի, զորանա և զարգանա և դա՝ ***իսպառ կոռումպազերծվելով»,*** այդ դեպքում հարց. ո՞վ պետք է կատարի այդ, հայության միայն մե՞կ հատվածը, թե՞ համայն հայությունը: Այդ պետք է կատարեն, պարտավո՛ր են կատարել միայն որոշակի՞ հայեր, նրանք, որ դեռ Հայաստանո՞ւմ ու Արցախո՞ւմ

են մնացել, և կամ այն քչերը, որ անկախ գտնվելու վայրից, որոշել են չուրանալ, հայությունից երբեք չհեռանա՞լ՝ կյանքի գնով իսկ տե՞ր կանգնել հայրենիքին, մասնակցել նրա գոյության և զարգացման ապահովմա՞նը, թե՞ այդ հավատարմությունը պիտի ունենա համայն հայությունը, ու յուրաքանչյուր հայ՝ անկախ սեռից, տարիքից, իր վիճակից, գտնվելու վայրից ու պայմաններից, ընդունելով, որ կատարելը բարոյական է, իսկ չկատարելը՝ անբարոյակա՛ն: Կատարելը հոգու պարտքի հատուցում է, իսկ չկատարելը՝ հոգու պարտազանցության չափով գողությո՛ւն: Եվ ումի՞ց. գողություն սեփական ազգի՛ց, երկրի՛ց և, մանավանդ, հայության նոր սերնդի՛ց, ազգի ապագա գոյությունի՛ց:

Իսկ ո՞րն է ճիշտը, արդարն ու օգտակարը: Պետք է հավատա՛լ և հավատո՛ւմ ենք, որ հոգու պարտքի զգացումի և գիտակցության ու նաև ըստ ազգային գաղափարական համոզման ու բարոյական պարտաճանաչության ճիշտը, արդարն ու օգտակարն այն է, որ հայ ազգային գոյությունը և ազգի հայրենիք ***Հայաստանը պետք է պաշտպանեն և նրանց համընդհանուր վերելքին մասնակցեն անխտիր բոլո՛ր հայերը, բոլոր նրանք, ում Աստված հա՛յ է ստեղծել:***

Եվ նրանց ցուցակի առաջին շարքում հայ պետական պաշտոնեությունը, ազգային ընտրյալ կամ նշանակյալ գործիչները, հոգևորականությունը, իրավ մտավորականությունը և ոչ վերջին հերթին՝ զինվորականությունն են:

Այս առումով հայի մասնակցությունը ազգի ու Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական, գիտական և նման այլ բնագավառների զարգացման գործում, եթե կարող է լինել հեռակա և կամ պայմանական, ապա հայի մասնակցությունը հայոց պաշտպանական ու անվտանգության ուժերում և հատկապես հայոց բանակում ծառայելը պետք է լինի ***ուղղակի***՝ ֆիզիկապես: Սակայն, հաշվի առնելով հայության աշխարհասփյուռ լինելու (քաղաքական, լեզվական, մշակութային, տարածքային ու այլ առումներով) առանձնահատկությունը,

որոշ ժամանակաշրջանի համար, որպես բացառություն, երբեմն զինվորական ծառայությունը կարող է լինել նաև անուղղակի՝ վճարելով տվյալ անձի ծառայության փոխարեն ծառայության նյութական փոխհատուցում՝ ընդունված ժամանակամիջոցի համար:

Իսկ այս ծառայության ապահովումը, լինելով նուրբ հարց, հարկ է, որ ըստ այնմ հաշվարկվի ու ծրագրվի, սակայն պետք է կատարվի անպայման ու ԱՆՀԱՊԱՂ: Եվ դա պետք է նաև, որովհետև թշնամին չի սպասում մեր «խելքի գալուն», որ մեր պարտքը կատարենք, և մեզ կարող է փաստի առաջ կանգնեցնել այն ժամանակ, երբ մենք պատրաստ չլինելու պատճառով պատշաճ դիմադրությունը դեռ չենք ապահովել: Եվ երկրորդ՝ մանավանդ, որովհետև անվտանգության և պաշտպանության համար մեր պարտքի կատարումը, բացի ամեն ինչից, Աստվածապահանջ է… Եվ միայն Աստծուն չճանաչողը, ուրացողը կամ ավելի վատ՝ աստվածամարտը կարող է անտեսել, ուրանալ և ժխտել իր այդպիսի մասնակցությունը, ծառայելու իր պարտականությունը:

Աստծուն ու Աստուծո բարությանը, զորությանը և մինչև հիմա Նրա գթասրտության շնորհիվ մեր գոյություն ունենալուն հավատացող հայի կողմից վերոնշյալ մասնակցությունը, ծառայությունը, կրկնենք, որ պիտի լինեն ***անհապաղ, ինքնաբուխ ու ինքնակառավարվող,*** առանց «երկար ու բարակ» ձևականությունների սպասելու՝ անկախ նրա սեռից, տարիքից, ապրելու վայրից և վիճակից:

Մեկ խոսքով՝ չանել այդ՝ նշանակում է լինել կոռումպացված հայ մարդ, կոռումպացված հայ ժողովուրդ ու կոռումպացված հայ ազգ, իսկ անել այդ, նշանակում է կոռումպացումը թոթափած, կոռումպազերծ դարձած հայ մարդ, հայ ժողովուրդ ու ազգ:

Օ՜ն, հայեր, ցույց տանք, ապացուցենք, որ, ի վերջո, հայ ժողովուրդը, որպես ազգ՝ լիովի՛ն կոռումպազերծ հայերից է բաղկացած:

Մեր ազգի մեծերի, սրբերի և բյուրավոր նահատակների

հոգիներն սպասում են, թե մենք՝ նրանց այսօրվա ժառանգները, հայ ազգի ինչպիսի վիճակագրություն ենք ներկայացնելու, թե այսօրվա հայությունը ինչպիսի հայերից է բաղկացած: Այդ վիճակագրության համաձայն, հավանաբար, մեզ բոլորիս կդատի և ըստ այնմ կվերաբերվի մեր նոր սերունդը, սակայն ըստ այնմ մեզ անպայման դատելու է Աստված:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑ

Կ Ո Ռ Ո Ւ Պ Ց Ի Ա

Կ Ո Ռ Ո Ւ Պ Ց Ի Ա Յ Ի
ԾԱԳՈՒՄԸ, ՏԱՐԱԾՈՒՄԸ,
ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՑՈՒՄԸ
ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 453
Ստորագրված է տպագրության՝ 20.07. 2013թ.:
Չափսը՝ 60 x 84 $^{1}/_{16}$: Թուղթը՝ օֆսեթ N 1:
9,25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Մարշալ Բաղրամյան 24: